**Լելա Կակաշվիլի**
**Բեքա Կվաճաձե**
**Գիորգի Ուգուլավա**
**Իրակլի Փերաձե**
**Նիկոլոզ Գուրգենիձե**



# Պատմություն 10

Մաս II

## Ուսուցչի գիրք

Երաշխավորվել է Վրաստանի կրթության և գիտության
նախարարության կողմից, 2022 թվականին:

სულაკაურის
გამომცემლობა

Պատմություն 10
Ուսուցչի գիրք. մաս II

Հեղինակ՝ **Լելա Կակաշվիլի**
Հեղինակային խումբ՝ **Բեքա Կվաճաձե, Գիորգի Ուգուլավա, Իրակլի Փերաձե, Նիկոլոզ Գուրգենիձե**

Խմբագիր՝ **Նինո Գոգոլաձե**
Դիզայներ՝ **Իա Մախաթաձե**
Տեխնիկական դիզայներ՝ **Գիորգի Լոմսաձե**

Առաջին հրատարակություն, 2022
© Սուլակաուրիի հրատարակչություն, 2022
Բոլոր իրավունքները պաշտպանված են:

ՍՊԸ «Սուլակաուրիի հրատարակչություն»
Հասցեն. Դավիթ Աղմաշենեբելիի 150, 0112
Հեռ.՝ 291 09 54, 291 11 65
Էլ-փոստ՝ info@sulakauri.ge

ISBN 978-9941-37-243-8

History 10
Teacher’s Book – Part II

© Sulakauri Publishing, 2022
All rights reserved.

Tbilisi, Georgia
www.sulakauri.ge

## Բովանդակություն

Կառուցվածքը ............................................................ 5
Միջնակարգ մակարդակի չափորոշիչը ............................................................ 13
Թեմայի կայուն պատկերացումները ............................................................ 33
Հասկացություններ ............................................................ 38
Աշակերտների գնահատման համակարգեր ............................................................ 41
Ուսանում-ուսուցման ռազմավարությունները ............................................................ 52
Թեմատիկ մատրիցաներ ............................................................ 65
Հեղինակի մեկնաբանությունները ............................................................ 81

## ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Դասագրքի հիմնական գործառույթն է ամբողջությամբ համապատասխանել երրորդ սերնդի ազգային ուսումնական պլանի նպատակներին և նպաստել դպրոցական հանրությանն այս նպատակները ներդնել ուսումնական գործընթացում: Իր էությամբ այն ավելի շատ ռեսուրս է հանդիսանում, որն ուսուցիչը կարող է իր հայեցողությամբ բազմաթիվ ձևերով կիրառել՝ նպատակներին, մարտահրավերներին և մասնագիտական իրավասություններին համապատասխան, քան կուռ փաստաթուղթ, որն ուսուցչին աշխատանքային գործընթացում չի տալիս մանևրելու հնարավորություն: Այս առումով դասագիրքը պատասխանում է երկու հիմնական մարտահրավերների, որոնց աշխատանքի ընթացքում բախվում է դպրոցական հանրությունը. մի կողմից, այն խորը մշակում է ուսումնասիրվելիք հարցը, ներկայացնում այն տարբեր տեսանկյուններից, կենտրոնանում պատճառահետևանքային հարցերի վրա, որպեսզի աշակերտը յուրաքանչյուր պատմական իրադարձության, գործընթացի և թեմայի մասին դատողություն անելու ժամանակ պատասխաններ ունենա այն հարցերին, թե ինչու և ինչպես է տեղի ունեցել այս իրադարձությունը, ներմուծում է միջնակարգ աստիճանին համապատասխան հետազոտական, դատողական և վերլուծաբանական դիսկուրս, և ժամանակագրական պատմական հեռանկարի հետ մեկտեղ իրադարձությունները մշակում է նաև թեմատիկ պատմական հեռանկարից:

Դրա նպատակն է, որ աշխատանքի գործընթացում ամբողջովին և խորքային ընդգրկի մշակվելիք հարցերն այնպես, որ լրացուցիչ ռեսուրսների օգտագործման նվազագույն կարիք լինի: Այս առումով այն սպառիչ ռեսուրս է ոչ միայն աշակերտի, այլև ուսուցչի համար, քանի որ նպատակ ունի դասի նախապատրաստման ընթացքում ուսուցչին առաջարկել լրիվ, բազմակողմանի, սպառիչ և խորը մշակում, որպեսզի նա նվազագույն չափով ունենա լրացուցիչ ռեսուրս ստեղծելու հնարավորություն:

Մյուս կողմից, նրա կառուցվածքային ճկունությունը, որը մենք մանրամասնորեն կքննարկենք ստորև, կօգնի դպրոցական համայնքին, որ այն լավ հարմարեցնի յուրաքանչյուր դպրոցի, ուսուցչի և դասի իրականությանն ու մարտահրավերներին, որպեսզի խուսափեն ժամանակի սակավության պատճառով նյութը չմշակելու կամ խորքային չմշակելու ռիսկերից: Մշակվելիք հարցի մասին այն առաջարկում է մի քանի շերտանոց տեղեկատվություն, որը հարցը մշակում է պարտադիր-բազիսային, խորքային և հետազոտական-գիտական մակարդակով, ինչն ուսուցչին հնարավորություն կտա, ըստ դպրոցական ուսումնական պլանի նպատակների և առաջնահերթությունների, իր անձնական մասնագիտական իրավունակությունների և տեսլականների ու դասարանի կարիքների ու մարտահրավերների՝ յուրաքանչյուր ուսումնասիրվելիք հարցը մշակել համապատասխան մակարդակով և խորությամբ: Դասագիրքը հնարավորություն է ստեղծում (և ոչ թե անհրաժեշտություն), իսկ ուսուցիչն, ըստ աշակերտի կարիքների, վերոնշյալ գործոնների համաձայն ընտրում է, թե ինչ մասշտաբով և ինչ խորությամբ կարող է մշակվել յուրաքանչյուր հարց:

Ընդհանուր առմամբ, դասագրքի մշակման արդյունքը պետք է լինի խորքային, միջնակարգ աստիճանի կարիքներին հարմարեցված, որակապես նոր տեսակի գիտելիք ստանալը, որը կնպաստի աշակերտին լավ, տարբեր հեռանկարներից գիտակցելու պատմական գործընթացը և ընկալելու այն որպես կենդանի, դինամիկ և ակտիվ գործընթաց, որը չի կորցնում կապն արդիականության հետ և պատմական գործընթացը ներկայացնում է որպես շարունակական, զարգացող շղթա, որն օրգանապես կապում է տարբեր պատմական դարաշրջանները, այդ թվում արդիականությունը: Այս առումով նրա արդյունքը պետք է լինի հիմնական աստիճանում արդեն ստացած գիտելիքի ակտիվացում նոր հեռանկարից, նրա մշակում համապիտանի, հասկացությունների տեսանկյունից և դրանց նկատմամբ հետազոտական, վերլուծական և ստեղծագործական վերաբերմունք ձևավորել:

Պետք է առանձնացնել այն գործոնը, որ,

մի կողմից՝ դասագրքի մեթոդաբանական և կառուցվածքային մասը լիովին համապատասխանում է և նախատեսում նորագույն եվրոպական և ամերիկյան դասագրքերի փորձը, իսկ մյուս կողմից, նրանում նախատեսված են վրացական և արևմտյան նորագույն հետազոտության արդյունքները: Առանձնահատուկ շեշտադրում է արվում դասավանդման գործընթացում գիտական և հետազոտական դիսկուրսի ներմուծման վրա:

Առանձնահատուկ շեշտադրում է արվում տարբեր պատմական խնդիրները ժամանակակից համատեքստում քննարկելու վրա, որպեսզի աշակերտն ընկալի տիեզերքի պատմական զարգացման շարունակականությունն ու այս բնագավառի արդիականությունը, միևնույն ժամանակ հասնի այն պատկերացման, որ արդիականության համար հրատապ խնդիրները, ինչպիսիք են՝ անսահմանափակ իշխանության ռիսկերը, բնական կատակլիզմների հետևանքով առաջացած ճգնաժամերը և տեխնոլոգիաների ազդեցությունը հասարակության առաջընթացի վրա նախ և առաջ պետք է ընկալվեն և ուսումնասիրվեն պատմական համատեքստում:

Դասագիրքը բաղկացած է երեք անկախ կառուցվածքային միավորներից՝ **Աշակերտի գիրք, Ուսուցչի գիրք և Աշակերտի տետր:**

Իր հերթին, Աշակերտի գիրքը միավորում է մեկ թեմա. 3. Ուշ անտիկ դարաշրջան և միջնադար: Թեման բաժանված է գլուխների (ընդամենը 5 գլուխ): Գլուխների բաժանման սկզբունքը նախատեսում է մեկ գլխի շրջանակներում մեկ, ամբողջական պատմական ժամանակաշրջանի և ենթաժամանակաշրջանի ընդգրկում, որպեսզի նրանում մշակված նյութը ստեղծի անկախ, կառուցվածքային և բովանդակային միավոր:

Իր հերթին, յուրաքանչյուր գլուխ բաղկացած է պարագրաֆներից: Մեկ գլխում առնվազն երեք, առավելագույնը յոթ պարագրաֆ կարող է լինել (ընդհանուր 33 պարագրաֆ):

Յուրաքանչյուր գլուխ առանձին, անկախ կառուցվածքային և բովանդակային միավոր է: Գլուխը միշտ սկսվում է համալիր առաջադրանքով, որպեսզի աշակերտը հենց առաջին փուլում ծանոթանա կատարվելիք առաջադրանքին և հետագայում ուսումնական գործընթացն այս առաջադրանքին միտված, դրա պահանջների կամ առանձնահատկությունների նախատեսմամբ վարի (դրանում նրան կօգնեն նաև Աշակերտի տետրում տրված բազմազան նյութերն ու ակտիվությունները):

Ընդհանուր առմամբ, հինգ գլուխների շրջանակներում տրված է նույնքան համալիր առաջադրանք, ինչն ուսուցչին մի կողմից՝ հնարավորություն է տալիս, որ ամբողջ ուսուցումը վարի համալիր առաջադրանքի կատարման-իրականացման գործընթացում և յուրաքանչյուր մշակվելիք հարց կամ պարագրաֆ հարմարեցնի այս գործընթացին, մյուս կողմից՝ նա հնարավորություն ունի ընտրելու իր համար ցանկալի մեկ կամ մի քանի առաջադրանք, իսկ ուսումնական նյութի մնացած մասն ինքնուրույն մշակել: Դասագրքի կառուցվածքը նրան հնարավորություն է տալիս երկու եղանակով էլ աշխատել:

Յուրաքանչյուր գլուխ սկսվում է ներածական մասով, որը վերոհիշյալ համալիր առաջադրանքից բացի, սկսվում է կարճ ծանոթագրության ոճով գրված դարաշրջանի փոքրիկ ակնարկով, այսպես կոչված գլխի ներկայացմամբ և ամենակարևոր ու հանգուցային տարեթվերի թվարկմամբ: Նույն տեղում սահմանված են հասկացություններ, որոնք մշակվում են համալիր առաջադրանքի միջոցով: Սովորաբար յուրաքանչյուր գլխում առանձնացված է երկու հասկացություն:

Առանձին պետք է նշել, որ յուրաքանչյուր գլուխ ուղեկցվում է տեսանյութերով՝ որպես ռեսուրս, որոնք հնչյունավորված են վրացերեն և աշակերտին հնարավորություն են տալիս շտրիխկոդի ակտիվացմամբ, «Սմարթֆոնի» միջոցով ստանալ լրացուցիչ տեղեկություններ գլխի շրջանակներում մշակված բոլոր կարևոր հարցերի մասին:

Այստեղ հարկ է նշել, որ առանձին է ներկայացված գլխի փակումը՝ դրա ամփոփիչ մասը, որ տրված է յուրաքանչյուր գլխի վերջում: Այն վերլուծական ակտիվությունների միջոցով մեկ անգամ ևս հիշեցնում է գլխում քննարկված նյութը և մշակել տալիս այն, և հենց նույն տեղում թեմատիկ

բաժիններում աշակերտին առաջարկում ենք լրացուցիչ ընթերցանության գեղարվեստական կամ ոչ գեղարվեստական գրականություն, վավերագրական և գեղարվեստական ֆիլմեր, սերիալներ և այլն: Նման եղանակով աշակերտին առաջարկում ենք գրականության և փոփ մշակույթի միջոցով իրեն հետաքրքրող հարցերի շուրջ իր իսկ նախաձեռնությամբ լրացուցիչ տեղեկություններ ստանալ և, միևնույն ժամանակ ընդգծում ենք պատմության արդիականությունը և նրա կապը ժամանակակից աշխարհի հետ:

Յուրաքանչյուր պարագրաֆ երեք հիմնական բաղադրիչների՝ հասկացության, ժամանակագրական պատմական հարցի և թեմատիկ պատմական հարցի մի ամբողջություն է: Երեքն էլ (հասկացություն, ժամանակագրական հարց և թեմատիկ հարց) այնպես են ընտրված, որպեսզի իրար հետ օրգանական կապակցման միջոցով ստեղծեն մեկ բովանդակային և տեղեկատվական ամբողջականություն և օգնեն աշակերտին հարցը մշակել բազմաթիվ տարբեր տեսանկյուններից: Համաձայն դասագրքի՝ հարցի լավ մշակումը նշանակում է դրա հասկացությունների, ինչպես նաև խորը թեմատիկ (օրինակ, սոցիալական պատմության հարցերը) տեսանկյունից ուսումնասիրում, որպեսզի աշակերտը միջնակարգ աստիճանում ստանա սպառիչ, բազմապրոֆիլ գիտելիք և նրա մոտ ձևավորվի հարցի վերլուծական ընկալում՝ հիմնված գիտելիքների կառուցման կոնստրուկտիվիստական սկզբունքների վրա:

Անմիջապես պարագրաֆը սկսվում է հանգուցային հարցով (որի մշակումն էլ պետք է լինի դասի գործընթացի հիմնական լեյտմոտիվը) և հասկացություններով: Առանձնացված են երկու հասկացություններ, որոնք մշակվում են պարագրաֆում: Հասկացություններն այնպես են խմբավորված, որպեսզի աշակերտը յուրաքանչյուր պատմական դարաշրջանում կարողանա այս դարաշրջանը մշակել բոլոր վեց հիմնական հասկացությունների (ժամանակ, տարածություն, աղբյուր, իշխանություն, հասարակություն, պատմական իրադարձություն/գործընթաց) տեսանկյունից: Այն հասկացությունները, որոնք առանձնացված են համալիր առաջադրանքում, մշակվում են ընդգծված և խորքային: Եթե, օրինակ, համալիր առաջադրանքի շրջանակներում մշակվում են իշխանությունը և հասարակությունը, աշակերտը կոնկրետ թեմայի շրջանակներում կմշակի բոլոր վեց հասկացությունները, թեև իշխանությանը և հասարակությանը ավելի հաճախ կհանդիպի պարագրաֆներում:

Պարագրաֆը հենց սկզբում ունի առանձին տրված համառոտ ծանոթագրություն, որն աշակերտին կօգնի հստակ պատկերացնել մշակվելիք հարցը, իմանալ նրա կարևորությունը և նախապես ունեցած գիտելիքն ակտիվացնելու-վերհիշելու միջոցով նրա մոտ ձևավորվի հետևողական գիտելիք: Ծանոթագրության մասը նախապայման է ստեղծում նոր նյութը մշակելու համար:

Պարագրաֆի սկզբում՝ հենց ներածական մասում տրված է համապատասխան դարաշրջանի կարևոր դեմքի կողմից ասված կամ կոնկրետ դարաշրջանը նկարագրող արտահայտություն, մեջբերում, որը մի կողմից՝ բազմազանացնում է նյութը, այն դարձնում հրատապ և աշակերտներին ծանոթացնում տարբեր կարևոր պատմական դեմքերի, մյուս կողմից՝ կարճ, պարփակ ուղերձի տեսքով մարմնավորում ամբողջ պարագրաֆի հիմնական գաղափարը և օրգանապես կապվում մշակվելիք նյութի հետ:

Յուրաքանչյուր պարագրաֆում առանձնացված է հիմնական և օժանդակ տեքստ (առանձին կառուցվածքային միավորների այսպես կոչված ներդիր, «Սա հետաքրքիր է»-ի ձևով) և նյութը տարբերակված ձևով է տրամադրված: Հիմնական տեքստը նույնիսկ առանց օժանդակ տեքստի ստեղծում է ամբողջական և տրամաբանական պատմություն, այնուամենայնիվ, ներդիրների միջոցով նյութը խորությամբ է մշակվում, և աշակերտին լրացուցիչ տեղեկություններ են տրամադրվում հիմնական տեքստում ակտիվացված հարցերի մասին: Այսպիսի ներդիրներով խուսափել ենք տեքստի գերծանրաբեռնումից, այդ թվում եզրույթներով, տարեթվերով և այլ սպեցիֆիկ նյութով, միևնույն ժամանակ, աշակերտը հնարավորություն ունի ստանալ ավելի խորը գիտելիքներ:

«Սա հետաքրքիր է» խորագիրն ավելի լրացուցիչ տեղեկությունների բնույթ ունի, որը,

տարբեր հետաքրքիր ու հիշարժան մանրամասներ առաջարկելով, նպատակ է նախանշում վերակենդանացնել և արդիականացնել աշակերտի համար մշակվելիք նյութը:

Յուրաքանչյուր պարագրաֆի լրացուցիչ կցվում է Աշակերտի տետրում տեղադրված հավելված՝ սոցիալական պատմության թեմաներով, որոնք օրգանապես կապվում են հիմնական մշակվելիք հարցերի հետ և աշակերտին օգնում. մի կողմից՝ խորապես հասկանալ պարագրաֆի նյութը, այլ տեսանկյունից ընկալել հարցը, և միևնույն ժամանակ, պատմությունը տեսնել ոչ միայն ռազմական ու քաղաքական պատմության հեռանկարից, այլ նաև ծանոթանալ առօրյա կյանքին և բազմազան կենցաղային մանրամասների: Հենց այստեղ հարկ է նշել, որ հիմնական աստիճանում այս տեսակի պատմական պատումի վրա պակաս է արվում շեշտադրում, և դա մեզ հնարավորություն է տալիս միջնակարգ աստիճանում ուսուցումը նոր աստիճանի բարձրացնել և նոր հեռանկարով տրամադրել աշակերտներին:

Ակտիվությունները տրված են տեքստի հիմնական մասում, ինչն օգնում է մեզ հարցերն անմիջապես մշակել դասի ընթացքում:

Բնականաբար, ակտիվությունները կազմված են՝ ելնելով հարցի բովանդակությունից: Բայց յուրաքանչյուր ակտիվություն, լինի դա քննարկում, դատողություն, աշխատանք քարտեզի վրա, ճանաչողական դիագրամի լրացում կամ աղբյուրի մշակում, ծառայում է մի քանի նպատակների՝ աշակերտը հասկանա դասագրքում տրված տեղեկությունը և հեշտությամբ կարողանա ստացած գիտելիքը դեկլարատիվից վերածել պայմանի հետ կապված գիտելիքի: Նման արդյունքը, բնականաբար, քայլ առ քայլ, ծանոթից դեպի անծանոթը շարժվելու սկզբունքով է ձեռք բերվում, և դասագրքի ակտիվությունները նույնպես, ինչպես նաև ամբողջ տեքստերը՝ այս սկզբունքների վրա են հիմնվում:

Ինչ վերաբերում է Աշակերտի տետրին ու Ուսուցչի գրքին, դրանք անկախ միավորներ են, սակայն ոչ՝ ուղղակի դասագրքի հավելում: Ընդհակառակը, ըստ մեր հայեցակարգի՝ նրանցից յուրաքանչյուրն ամբողջի մի մասն է, և յուրաքանչյուրն ունի իր սեփական գործառույթը և ծանրաբեռնվածությունը:

Աշակերտի տետրը հետևում է Ուսուցչի գրքում տեղ գտած համալիր առաջադրանքներին և նրա ակտիվություններին: Գրավոր առաջադրանքները, դիագրամները, աղբյուրի վերլուծությունը և սոցիալական պատմություն պարունակող հավելվածներն օգնում են աշակերտին հեշտությամբ կատարել բարդ համալիր առաջադրանքը՝ տարբեր ակտիվությունների մշակման ճանապարհով: Միևնույն ժամանակ, լրացուցիչ, աշակերտը գրավոր աշխատում է գրքում ցրված համապատասխան առաջադրանքների վրա: Դասարանում դրանց վրա աշխատելը ուսումնական գործընթացը դարձնում է ավելի ծանրաբեռնված և հետաքրքիր, իսկ որպես տնային առաջադրանք կատարելու դեպքում դրանք նոր նյութի յուրացման գործընթացում վերածվում են աշակերտի համար լրացուցիչ օգտակար ռեսուրսի: Տետրի վերջում տրված են նաև օգտակար հղումներ, որոնք աշակերտներին կտրամադրեն դասագրքում ուսումնասիրվող դարաշրջանի համապատասխան լրացուցիչ ինտերնետ ռեսուրսներ:

Ուսուցչի գիրքը նախատեսված է որպես օժանդակ ռեսուրս մանկավարժների համար, որպեսզի նրանք ավելի լավ  կարողանան ուսանում-ուսուցման սկզբունքները ներդնել ըստ երրորդ սերնդի ազգային ուսումնական պլանի և տարեկան ծրագրերի: Ուսուցչի գրքում ներառված են այս նպատակներին ծանոթանալու համար անհրաժեշտ փաստաթղթեր՝ միջնակարգ աստիճանի չափորոշչում, ըստ բովանդակության դասավորված հարցերի ցանկի հետ մեկտեղ, հստակ ձևավորված են յուրաքանչյուր թեմայի արդյունքների ձեռքբերման համար անհրաժեշտ ստուգիչները: Դրանք սահմանում են, թե ինչը պետք է գնահատվի ուսանում-ուսուցման գործընթացում: Ստուգիչները խմբավորված են ըստ նպատակային հասկացությունների: Դրանց հաջորդում են թեմատիկ կայուն պատկերացումները: Թեմայի հետ կապված կայուն պատկերացումների գործառույթն է աշակերտի մոտ պատկերացում ստեղծել ուսունասիրվելիք թեմայի ուրվագծերի մասին: Ուստի ուսուցչի համար էլ  հեշտ կլինի ձեռքբերվելիք ուղենիշներն ուրվագծել այս կամ այն հարցի առնչությամբ: Դրան հաջորդում են

առարկայի նպատակային հասկացությունները և աշակերտների գնահատման համակարգեր, ինչպես որոշող, այնպես էլ SOLO (ՈՒԴԱԿ) տաքսոնոմիայի վրա հիմնված զարգացնող գնահատման գործիքը: Կոնկրետ պատմական հարցի վրա հիմնված բոլոր մակարդակների գնահատման նմուշով ներկայացված զարգացնող գնահատման գործիքը, կարծում ենք, ուսուցիչների համար ավելի հասկանալի և ընկալելի կդարձնի SOLO տաքսոնոմիայի սկզբունքները և նպատակը:

Դասավանդման գործընթացն արդյունավետ անցկացնելու համար ուսուցիչներին առաջարկում ենք ուսանում-ուսուցման ռազմավարություններ և որոշակի ակտիվությունների գնահատման խորագրեր, ինչը նրանց համար կհեշտացնի և՛ ուսումնական գործընթացը, և՛ ուսանում-ուսուցման սկզբունքների դասասենյակում ներդրումն ու իրականացումը:

Ներկայացված մատրիցաները դասավանդման գործընթացում հանդիսանում են ուսուցչի արդյունավետ օժանդակ ռեսուրս, և դրանք մեկ ամբողջության (Աշակերտի գիրք, Աշակերտի տետր, Ուսուցչի գիրք) օրգանական մաս են կազմում: Մեր կողմից բոլոր գլուխների համար կազմված համալիր առաջադրանքներով, ցանկության դեպքում, ուսուցիչը կկարողանա ապահովել դասագրքում տրված նյութի ամբողջությամբ ընդգրկում: Մեր հայեցակարգի համաձայն, համալիր առաջադրանքների կատարման ժամանակ հիմնական ռեսուրսը դասագիրքն է, և մնացած այլ ռեսուրսներ, դասագրքում տրված հարցերով հետաքրքրվելու դեպքում, ավելին իմանալու համար բերված ռեսուրս է, այլ ոչ թե՝ այլընտրանքային տարբերակ: Համապատասխանաբար, ուսուցիչների համար այս ռեսուրսների այս կամ այն պատճառով կիրառել չկարողանալը չի դառնա համալիր առաջադրանքը կատարել չկարողանալու և հարցը փոխանցել չկարողանալու պատճառ: Ավելին, հստակ են ըստ հասկացության կայուն պատկերացումների մշակվելիք քայլերի հաջորդականությունը և նաև այն հարցերը, որոնք այս քայլերի իրականացման ժամանակ պետք է տրվեն, և սա այս դասագրքում առկա հարցերի և ակտիվությունների օրգանական շարունակությունն է, ինչն այս երեք բաղադրիչների ամբողջականության ևս մեկ հավաստումն է:

Ուսուցչի գրքի հաջորդ մասում կհանդիպեք հեղինակի հանձնարարականներին մանկավարժների համար: Այս գլուխը մանկավարժներին կօգնի դասագրքի հայեցակարգի ընկալման և ըմբռնման մեջ և ավելի արդյունավետ կդարձնի նրանց կողմից անցկացված դասերը:

# X ԴԱՍԱՐԱՆԻ «ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ԱՇԱԿԵՐՏԻ ԳՐՔԻ II ՄԱՍԸ ԲԱՂԿԱՑԱԾ Է 1 ԹԵՄԱՅԻՑ ԵՎ 33 ՀԱՐՑԻՑ: ԴԱՍԱԳՐՔՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԽՈՐԱԳՐԵՐ.

Մո՛ւտք գործիր պատմություն. Դիտի՛ր տեսանյութը և ավելին իմացի՛ր Հռոմեական կայսրության ճգնաժամի մասին: Կայքի հղումը տե՛ս գրքի վերջին էջում:

**Վրաց լեզվով հնչյունավորած տեսանյութ,** որն ակտիվանում է սմարթֆոնի միջոցով **QR կոդով** կամ կարելի է այն տեսնել բաց աղբյուրում՝ անցնելով նշված հղումով:

Ոչ թե կանոններն, այլ գործողություններն էր ստեղծում կայսերը, համակարգը փլուզվեց:»

*Հայնց Բելեն, գերմանացի պատմաբանը Հռոմի Ճգնաժամի մասին III դարում*

**Մեջբերում** – հայտնի պատմական անհատի կամ պատմաբանի արտահայտություն դարաշրջանի կամ կոնկրետ պատմական իրադարձության մասին:




**Ժամանակային գիծ** – դարաշրջանի և կոնկրետ ժամանակաշրջանի հանգուցային իրադարձությունների և տարեթվերի թվարկում, որը ժամանակային գծի վրա ներկայացված է տեսանելիորեն հեշտ ընկալելի տեսքով:

**Մեգալոմանիա՝ մեծության մոլորություն**

Սեփական իշխանության ցուցադրման և փառաբանման չափազանցված ցանկություն:

Տեքստին զուգահեռ ներկայացված է **բառարան,** որը բացատրում է աշակերտի համար անծանոթ բառերը կամ հասկացությունները:



**Հովհաննես Դամասկոսցի**

Մոտավ. 675/676-749

Բյուզանդական աստվածաբան, փիլիսոփա և գրող: Ուղղափառ եկեղեցու սուրբ: Ծնվել է արաբ քրիստոնյայի ընտանիքում և գործել է Երուսաղեմում՝ Սուրբ Սաբայի մենաստանում:

**Համառոտ կենսագրություն** – տեքստին զուգահեռ ներկայացված համառոտ տեղեկություններ համապատասխան դարաշրջանի գործչի մասին:

**Սա** հետաքրքիր է

**Ի՞նչ է նշանակում Կարակալլա մականունը:**

Կարակալլան մականուն էր, և լատիներեն այդպես էին անվանում գալլական՝ գլխարկով տունիկան: Կարակալլան մանկուց կրել է նմանատիպ տունիկա և միշտ այդպես էր հագնված: Այդ իսկ պատճառով նրա համար ընտրվել է Կարակալլա մականունը:

**Սա հետաքրքիր է –** լրացուցիչ տեղեկություններ տեքստում ներկայացված հետաքրքիր հարցի վերաբերյալ:

**Առաջադրանք**

**5 Դատողությո՛ւն արա**

Իշխանության պահպանման և ամրապնդման համար ի՞նչ միջոցների էր ապավինում Դիոկղետիանոսը:

**6 Դատողությո՛ւն արա**

Ինչպե՞ս ավարտեց Դիոկղետիանոսը ներքին պայքարը Հռոմում իշխանության համար:

**Առաջադրանք** – օգնում է նյութը հասկանալուն, նրա վերլուծաբանական ըմբռնմանը և մշակմանը, նպաստում քննադատական, վերլուծաբանական և ճանաչողական կարողությունների ձևավորմանը: Ունի նյութի զուգադրման գործառույթ:




**Դիագրամներ,** որոնց վրա վիճակագրական և այլ տեղեկություններ տրված են կառուցքավորված տեսքով:

**Աղբյուր 7**

**Կոնստանցայի եպիսկոպոս Գեբհարթ. 990 թ.**

«...Նա հավաքեց իր ծառաներին և ընտրեց նրանցից լավագույններին: Հայտարարվեց, որ այսուհետ նրանք կլինեին խոհարարներ և ջրաղացպաններ, նպարավաճառներ և այգեգործներ, դերձակներ, անտառապահներ և զանազան արհեստավոր վարպետներ: Հետո նրանք պետք է սովորեն այն արհեստը, որն օգտակար կլինի և՛ իրենց, և՛ իրենց տիրոջ համար: Այնուհետև նրանց սերունդները կտիրապետեն այս գիտելիքներին, իսկ մնացած աշխատանքներից ազատված կլինեն»:

**Աղբյուր** – աշակերտին տեղեկություններ է տրամադրում սկզբնաղբյուրի տեսքով: Օգնում է նյութի նկատմամբ իր անձնական վերաբերմունքի ձևավորման մեջ: Դրա նպատակն է նպաստել աշակերտի քննադատական և վերլուծական մտածողության ձևավորմանը և պատմական իրադարձությունների տարբեր կերպ մեկնաբանմանը:

**ՆԵՐԴԻՐ** Հելիոգաբալոս

Հելիոգաբալոսը արաբական ծագում ուներ, սիրիական Եդեսիա քաղաքից էր: Նա մանկուց եղել է արևի աստծո՝ Էլագաբալի քուրմ և, երբ բոլորովին երիտասարդ տարիքում, շատ ազդեցիկ Յուլիա Մեսան՝ կայսր Սեպտիմիոս Սևերոսի կնոջ քույրը, նրան կայսր դարձրեց, նա սև քար է բերել Հռոմ, հավանաբար երկնաքարի մնացորդ և հռչակել աստված:

**Ներդիր** – լրացուցիչ տեղեկությունների տեսքով տրված է այնպիսի տեղեկություն, որն օգնում է տեքստի խորքային ըմբռնման մեջ: Հիմնականում տեքստում տրված պատմությունը հենց ներդիրում է խորացված:

**Ինչ կլիներ, եթե**

- Պատմությունը բազմաթիվ շրջադարձային իրադարձություններ է հիշում, որոնք արմատապես փոխել են հասարակության և պատմության հետագա զարգացումը:

  Հիշի՛ր նախորդ գլխում ուսումնասիրած նյութը: Ձեռք բերված գիտելիքներով և քո մտածողական ունակությունների օգտագործմամբ գրի՛ր շարադրություն. Ի՞նչ կլիներ, եթե Դիոկղետիանոսը քրիստոնյաներին հալածելու փոխարեն նոր կրոնն օգտագործեր կայսրության առջև ծառացած խնդիրները կարգավորելու համար:

- Շարադրություն գրելիս նկատի՛ ունեցիր.

ա. Ի՞նչ խնդիրների առջև էր կանգնած Հռոմեական կայսրությունը III դարում:

բ. Որքա՞ն ամուր էին քրիստոնյաների դիրքերը կայսրության ներսում հռոմեական հասարակության մեջ:

գ. Ինչպե՞ս կփոխեր քրիստոնեությունը հռոմեական հասարակությունը:

դ. Կայսրության առջև ծառացած ո՞ր խնդիրների լուծման հարցում կայսերը կօգներ քրիստոնեությունը:

**Վարժություն,** որն ի մի է բերում ամբողջ գլուխը, արձագանքում է նրա յուրաքանչյուր պարագրաֆին, նպաստում ճանաչողական և վերլուծաբանական կարողությունների զարգացմանը, նպաստում վերացական մտածողությանը:

## Հավելված

**Կինը իսլամում**

Ղուրանն ասում է. «Տղամարդիկ են կանանց գործերը տնօրինողները»: Սակայն, Ղուրանը նաև նշում է, որ տղամարդիկ և կանայք, որպես հավատացյալներ, հավասար են: Ծարիաթը մուսուլման կանանց տալիս էր կոնկրետ օրինական իրավունքներ՝ կապված ամուսնության, ընտանիքի և սեփականության հետ: Թեպետ, տղամարդիկ մեծ ազդեցություն են ունեցել կանանց վրա, քանի որ մուսուլմանական հասարակությունն էլ էր հայրիշխանական, հետևաբար՝ իշխանությանը տիրապետում էր տղամարդը:

**Հավելվածի** տեսքով Աշակերտի տետրում տրված են սոցիալական պատմության տարբեր ասպեկտներ (սնունդ, հագուստ, ճարտարապետություն և այլն), որոնք, մի կողմից, նպաստում են հիմնական տեքստում տրված տեղեկությունների խորը ըմբռնմանը, իսկ մյուս կողմից՝ նկարագրում իր դարաշրջանի ապրելակերպն ու կենցաղը:

# ՄԻՋՆԱԿԱՐԳ ԱՍՏԻՃԱՆԻ ՉԱՓՈՐՈՇԻՉ

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Չափորոշիչը նախատեսված է միջնակարգ աստիճանի աշակերտների համար: Դրա հիման վրա պետք է պատրաստվի երկու դասընթաց. (1) Դրանցից առաջինը՝ **«Պատմությունը»** նշանակում է համաշխարհային պատմական նշանակություն ունեցող իրադարձությունների/ գործընթացների ուսումնասիրություն և դրանց հետ է կապում Վրաստանի պատմության հարցերը, (2) երկրորդ դասընթացի՝ **«Վրաստանի պատմության»** շրջանակներում՝ շեշտը դրվում է վրաց պատմագիտության հրատապ խնդիրների հետազոտության/խորքային ըմբռնման վրա:

Չափորոշչում արդյունքների և նպատակային հասկացությունների տեսքով սահմանված են երկարաժամկետ նպատակներ:

Բովանդակությունը նկարագրվում է թեմաների (ենթաթեմաների), հարցերի և ենթահասկացությունների տեսքով: Ազգային ուսումնական պլանը սահմանում է պարտադիր թեմաներ, իսկ թեմաներին համապատասխան հարցերն ընտրում են դպրոցները:

Յուրաքանչյուր թեմա ուղեկցվում է արդյունքներին հասնելու ստուգիչներով: Դրանք սահմանում են, թե ինչը պետք է գնահատվի ուսանում-ուսուցման գործընթացում: Ստուգիչները խմբավորված են ըստ նպատակային հասկացությունների:

**Աստիճանի արդյունքները**

Միջնակարգ աստիճանի չափորոշչում տրված յուրաքանչյուր արդյունքին նախորդում է դասիչ, որը ցույց է տալիս առարկան, ուսուցման փուլը և չափորոշիչ արդյունքի համարը. Օրինակ, **Պատմ.միջն.1.**

**«Պատմ.»**՝մատնանշում է «Պատմություն» առարկան:

**«Միջն.»**՝ մատնանշում է միջնակարգ աստիճանը:

**«1»**՝ մատնացույց է անում չափորոշչի արդյունքի համարը:

| Պատմության չափորոշչի արդյունքները (VII-X դասարաններ) | | |
|---|---|---|
| **Արդյունքների ստուգիչը** | **Արդյունքներ** | **Նպատակային հասկացություններ** |
| **Պատմ. միջն.1.** | **Աշակերտը պետք է կարողանա**.<br>Պատմական աղբյուրն օգտագործել սեփական կարծիքի/ դիրքորոշման հիմնավորման համար: Պատմագիտության զարգացման օրինաչափությունները կապել այն գիտակցության հետ, որ նոր աղբյուրներ/ ապացույցներ հայտնաբերելու դեպքում հնարավոր է ցանկացած իրադարձություն նորովի հասկանալ/ վերարժևորել: | **Պատմական աղբյուր**<br>(Պատմ.միջն. 1, 2, 4, 5)<br><br>**Ժամանակ (պատմական ժամանակաշրջան)**<br>(Պատմ.միջն. 1,2,3,4,5,6)<br><br>**Տարածություն (միջավայր, տարածք)**<br>(Պատմ.միջն. 1,2,3,4,5,6)<br><br>**Հասարակություն**<br>(Պատմ. միջն. 1,2,3,4,5,6)<br><br>**Իշխանություն**<br>(Պատմ. միջն. 3,4,5,6,7,8)<br><br>**Պատմական իրադարձություն / գործընթաց**<br>(Պատմ. միջն. 3, 4, 5, 6) |
| **Պատմ. միջն.2.** | Պատմական իրադարձությունների վերլուծության ժամանակ համարժեք օգտագործել ժամանակագրական միավորները և պատմաաշխարհագրական տերմինները: Պատմական գործընթացների մասին տարածա-ժամանակային ասպեկտներն ուսումնասիրել՝ փոփոխականության երևույթը հասկանալու համար: | |
| **Պատմ. միջն.3.** | Պատմական իրադարձությունը/գործընթացները դասակարգել և տիպաբանորեն խմբավորել (քաղաքական, սոցիալական, տնտեսական, մշակութային և այլ նշանով)՝ տարբեր պատմական դարաշրջաններում և նոր ժամանակներում գոյություն ունեցող տիպիկ նման իրադարձությունները և գործընթացները փոխկապակցված քննարկելու համար: | |
| **Պատմ. միջն.4.** | Նույն պատմական իրադարձությունը/ գործընթացը/ անհատի գործունեությունը տարբեր կերպ մեկնաբանել, վերլուծել և գնահատել՝ բազմատեսանկյուն մոտեցումների առավելությունը գիտակցելու համար: | |
| **Պատմ. միջն.5.** | Պատմական իրադարձությունները և գործընթացները տեսնել/գնահատել ինչպես կոնկրետ դարաշրջանում ապրող մարդկանց աչքերով, այնպես էլ դարաշրջանից հեռանալով, մի կողմից՝ դարաշրջանի եզակիությունը, մյուս կողմից՝ համակողմանի գաղափարների զարգացման օրինաչափությունները հասկանալու համար: | |
| **Պատմ. միջն.6.** | Երկրի անցյալը, ներկան և ապագան հասկանալ միասնական համատեքստում: Պատմական օրինակների վրա հիմնվելով՝ ժողովրդավարության սկզբունքները (մշակութային, էթնիկ և կրոնական բազմազանության նկատմամբ դրական վերաբերմունք, հավասարություն, խաղաղապահական գործընթացներ) կապել պետականության և հայրենասիրության հետ: | |

## Պարտադիր թեմաներ.

«Պատմություն» և «Վրաստանի պատմություն» դասընթացները կդասավանդվեն զուգահեռաբար: Ստորև բերված աղյուսակը ցույց է տալիս, թե որ պարտադիր թեմաները պետք է դասավանդվեն փոխկապակցված.

| Պատմություն | Վրաստանի պատմություն |
|---|---|
| **X դասարան** | **X դասարան** |
| 1. Նախապատմական ժամանակաշրջանը և Հին Արևելքը | Վրաստանը քարի և բրոնզի դարերում |
| 2.Հնագույն դարաշրջան | Վրաստանը հնագույն դարաշրջանում (մինչև մ.թ. III դարը) |
| 3. Ուշ անտիկ դարաշրջան և վաղ միջնադար | Վրաստանը ուշ անտիկ դարաշրջանում և վաղ միջնադարում (մինչև 1014 թվականը) |
| **XI դասարան** | **XI դասարան** |
| 4. Միջնադար | Զարգացած միջնադարը Վրաստանում |
| 5. Ուշ միջնադար և վաղ նոր ժամանակ | Վրաստանը XV-XVIII դարերում |
| 6. «Երկարատև XIX դարը» | Վրաստանը Ռուսաստանի կայսրության կազմում |
| **XII դասարան** | **XII դասարան** |
| 7. «Կարճատև XX դարը» | Վրաստանի Դեմոկրատական Հանրապետություն<br>Վրաստանը Խորհրդային Միությունում |
| 8. Աշխարհը հազարամյակի սահմանագծին | Վրաստանը և ժամանակակից աշխարհը |

Ուսումնառության գործընթացում դպրոցները պետք է հետևեն վերը նշված թեմաների հաջորդականությանը:

**Ազգային ուսումնական պլանը թեմաները լուսաբանելու համար անհրաժեշտ հարցերը պարտադիր տեսքով չի սահմանում: Այսպիսով, Ուսուցչի գրքում ներկայացնում ենք պարտադիր թեմաները և գնահատման ստուգիչները կապող աղյուսակներ միջնակարգ աստիճանի համար:**

**Յուրաքանչյուր աղյուսակ պարունակում է գնահատման ստուգիչներ, որոնք ցույց են տալիս, թե ինչպես են արդյունքները իրացվում կոնկրետ թեմայում:**

## ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

## X ԴԱՍԱՐԱՆ

| Թեմա. Նախապատմական ժամանակաշրջանը և Հին Արևելքը |
|---|
| **Թեմայի շրջանակներում արդյունքներին հասնելու ստուգիչները**<br><br>**Աղբյուր** – Աշակերտը պետք է կարողանա.<br>● Տարբեր տեսակի աղբյուրների վրա (հնագիտական տվյալներ, գրավոր աղբյուրներ, վիմագրական նյութ) հիմնվելով՝ վերլուծել նախապատմական և հին արևելյան ժամանակաշրջանների պատմական իրադարձությունները/գործընթացները:<br><br>**Ժամանակ** – Աշակերտը պետք է կարողանա.<br>● Նախապատմական և հին արևելյան ժամանակաշրջանների հետ կապված պատմական իրադարձությունները/գործընթացները կապել պարբերացման տարբեր համակարգերի հետ (օրինակ՝ հնագիտական պարբերացման հետ, պատմական պարբերացման հետ):<br>● Համաշխարհային պատմության պարբերացման սխեմաները կապել Վրաստանի պատմության պարբերացման համակարգի հետ:<br>● Վերլուծել այն գործոնները, որոնք նախապատմական և հին արևելյան ժամանակաշրջաններում պայմանավորում էին փոփոխականության/ժամանակաշրջանի երևույթի առանձնահատուկ ընկալում:<br><br>**Տարածություն** – Աշակերտը պետք է կարողանա.<br>● Նախապատմական ժամանակաշրջանի/բրոնզի դարի հետ կապված իրադարձությունների/ գործընթացների մասին դատողություն անելիս՝ օգտագործել ճիշտ պատմաաշխարհագրական եզրույթներ:<br>● Բնութագրել քարի և բրոնզի դարերի համար առանցքային նշանակություն ունեցող պատմաաշխարհագրական տարածությունները (այդ թվում, Կովկասը):<br>● Դատողություն անել հին արևելյան ժամանակաշրջանում աշխարհագրական գիտելիքների զարգացման մասին:<br><br>**Հասարակություն** – Աշակերտը պետք է կարողանա.<br>● Ուրվագծել նախապատմական ժամանակաշրջանի/բրոնզեդարյան հասարակության առանձնահատկությունները (ինքնության միջոցներ, «մշակութային այլ»-ի երևույթը, սոցիալական շերտերը, առօրյան) և համեմատել այլ պատմական ժամանակաշրջանների հասարակությունների հետ:<br><br>**Իշխանություն** – Աշակերտը պետք է կարողանա.<br>● Վերլուծել իշխանության երևույթի հետ կապված հարցերը (խորհրդանիշներ, իշխանական կառույցներ, իշխանության բաշխում, իշխանության համար պայքարի ձևեր, իշխանության երևույթի նկատմամբ վերաբերմունք) հինարևելյան ժամանակաշրջանի Վրաստանի և Մերձավոր Արևելքի երկրների օրինակների հիման վրա:<br><br>**Պատմական իրադարձություն/գործընթաց** – Աշակերտը պետք է կարողանա.<br>● Վերլուծել նախապատմական ժամանակաշրջանի/բրոնզի դարի հետ կապված հասարակական և քաղաքական իրադարձությունները և գործընթացները (հետազոտության թեմային առնչվող փաստերը և իրադարձությունները տիպաբանական առումով խմբավորել, վերլուծել տարբեր տեսանկյուններից, այդ թվում, որոշել պատճառահետևանքային կապերը, ըմբռնել հետազոտության թեմայի պատմական նշանակությունը, դա մեկնաբանել իրադարձության համաժամանակակցի աչքերով), դրանք կապել/համեմատել համապատասխան ժամանակաշրջանի Վրաստանի պատմության հարցերի հետ: |

## ՎՐԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

## X ԴԱՍԱՐԱՆ

| **Թեմա. Վրաստանը քարի և բրոնզի դարերում** |
|---|
| Թեման ենթադրում է քարի և բրոնզի դարերի Վրաստանի պատմության հետ կապված հանգուցային իրադարձությունների և գործընթացների հետազոտում: Հետազոտական հարցերի վրա հիմնվելով՝ դարաշրջանի բնութագրերի/ոգու/առանձնահատկությունների ցուցաբերում: |
| **Թեմայի շրջանակներում արդյունքներին հասնելու ստուգիչները**<br>**Աղբյուր /մեկնաբանություն** – Աշակերտը պետք է կարողանա.<br>● Տարբեր տեսակի աղբյուրների վրա (հնագիտական տվյալներ, գրավոր աղբյուրներ, վիմագրական նյութ) հիմնվելով՝ վերլուծել քարի և բրոնզի դարերի Վրաստանի պատմության համար արդիական խնդիրները (նախանշել համալիր խնդիր, կազմակերպել գիտելիքները և փոխկապակցել՝ հետազոտական խնդիրը լուծելու համար, սեփական հետազոտության արդյունքները կապել պատմագիտության մեջ արտահայտված կարծիքների հետ):<br>**Ժամանակ** – Աշակերտը պետք է կարողանա.<br>● Քարի և բրոնզի դարերի հետ կապված պատմական խնդրահարույց հարցերը կապել պարբերացման տարբեր համակարգերի հետ (օրինակ՝ հնագիտական պարբերացում, պատմական պարբերացում), դրանք վերլուծել նախորդ և հետագա ժամանակաշրջանների իրադարձությունների հետ կապի մեջ:<br>**Տարածություն** – Աշակերտը պետք է կարողանա.<br>● Քարի և բրոնզի դարերի Վրաստանի հետ կապված խնդրահարույց հարցերի հետազոտման ժամանակ օգտագործել ճիշտ պատմաաշխարհագրական եզրույթներ: Բնութագրել հանգուցային նշանակություն ունեցող պատմաաշխարհագրական տարածքների (օրինակ՝ «Բերրի կիսալուսին», Միջագետք, Մերձավոր Արևելք և այլն) նշանակությունը:<br>**Հասարակություն** – Աշակերտը պետք է կարողանա.<br>● Հետազոտել քարի և բրոնզի դարերում Վրաստանի տարածքում գոյություն ունեցած հասարակության բնութագրերը (աշխարհայացք, ինքնության միջոցներ, «մշակութային այլ»-ի նկատմամբ վերաբերմունքը) և ամենօրյա կյանքը (տնտեսության ձևեր, կապի միջոցներ, բնակավայրերի տեսակներ, ավանդույթներ և այլ), պատմական դարաշրջանը/հնագիտական ժամանակաշրջանը տեսնել իր ժամանակակիցների աչքով:<br>**Իշխանություն** – Աշակերտը պետք է կարողանա.<br>● Վերլուծել իշխանության երևույթի հետ կապված հարցերը (խորհրդանիշներ, իշխանական կառույցներ, իշխանության բաշխում, իշխանության համար պայքարի ձևեր, իշխանության երևույթի նկատմամբ վերաբերմունք) քարի և բրոնզի դարերի օրինակների հիման վրա:<br>**Պատմական իրադարձություն/գործընթաց** – Աշակերտը պետք է կարողանա.<br>● Հետազոտել քարի և բրոնզի դարի պատմության հետ կապված իրադարձությունները/ գործընթացները (օրինակ, երբվանից է Վրաստանի տարածքում առաջանում «համալիր հասարակություն»), հանգուցային հարցերին առնչվող փաստերը և իրադարձությունները խմբավորել տիպաբանական առումով, վերլուծել տարբեր տեսանկյուններից, այդ թվում, որոշել պատճառահետևանքային կապերը, ըմբռնել հետազոտության թեմայի պատմական նշանակությունը, դա մեկնաբանել իրադարձության համաժամանակակցի աչքերով): |

| Թեմա. Հնագույն դարաշրջան (մինչև մ.թ III դարը) |
|---|
| **Թեմայի շրջանակներում արդյունքներին հասնելու ստուգիչները**<br>**Աղբյուր –** Աշակերտը պետք է կարողանա.<br>● Տարբեր տեսակի աղբյուրների վրա (հնագիտական տվյալներ, գրավոր աղբյուրներ, վիմագրական նյութ, դրամագիտական նյութ) հիմնվելով՝ վերլուծել հնագույն դարաշրջանի պատմական իրադարձությունները/ գործընթացները:<br>**Ժամանակ –** Աշակերտը պետք է կարողանա.<br>● Հնագույն ժամանակաշրջանի հետ կապված պատմական իրադարձությունները/ գործընթացները կապել պարբերացման տարբեր համակարգերի հետ (օրինակ՝ հնագիտական պարբերացման հետ, պատմական պարբերացման հետ):<br>● Համաշխարհային պատմության պարբերացման սխեմաները կապել Վրաստանի պատմության պարբերացման համակարգի հետ:<br>● Վերլուծել այն գործոնները, որոնք հնագույն ժամանակաշրջանում պայմանավորում էին փոփոխականության/ ժամանակաշրջանի ֆենոմենի առանձնահատուկ ընկալում:<br>**Տարածություն –** Աշակերտը պետք է կարողանա.<br>● Հնագույն ժամանակաշրջանի հետ կապված իրադարձությունների/գործընթացների մասին դատողություն անելիս՝ օգտագործել ճիշտ պատմաաշխարհագրական եզրույթներ:<br>● Բնութագրել հնագույն դարաշրջանի համար առանցքային նշանակություն ունեցող պատմաաշխարհագրական տարածությունները (այդ թվում, Կովկասը):<br>● Դատողություն անել հնագույն ժամանակաշրջանում աշխարհագրական գիտելիքների զարգացման մասին:<br>**Հասարակություն –** Աշակերտը պետք է կարողանա.<br>● Ուրվագծել հնագույն ժամանակաշրջանի հասարակության առանձնահատկությունները (ինքնության միջոցներ, «մշակութային այլ»-ի երևույթը, սոցիալական շերտերը, առօրյան) և համեմատել այլ պատմական ժամանակաշրջանների հասարակությունների հետ:<br>**Իշխանություն –** Աշակերտը պետք է կարողանա.<br>● Վերլուծել իշխանության երևույթի հետ կապված հարցերը (խորհրդանիշներ, իշխանական կառույցներ, իշխանության բաշխում, իշխանության համար պայքարի ձևեր, իշխանության երևույթի նկատմամբ վերաբերմունք) հնագույն ժամանակաշրջանի Վրաստանի և Մերձավոր Արևելքի և միջերկրածովյա երկրների օրինակների հիման վրա:<br>**Պատմական իրադարձություն/գործընթաց –** Աշակերտը պետք է կարողանա.<br>● Վերլուծել հնագույն դարաշրջանի հետ կապված հասարակական և քաղաքական իրադարձությունները և գործընթացները (հետազոտության թեմային առնչվող փաստերը և իրադարձությունները խմբավորել տիպաբանական առումով, վերլուծել տարբեր տեսանկյուններից, այդ թվում, որոշել պատճառահետևանքային կապերը, ըմբռնել հետազոտության թեմայի պատմական նշանակությունը, դա մեկնաբանել իրադարձության համաժամանակյցի աչքերով), դրանք կապել/ համեմատել համապատասխան ժամանակաշրջանի Վրաստանի պատմության հարցերի հետ: |

| Թեմա. Վրաստանը հնագույն դարաշրջանում |
|---|
| Թեման ենթադրում է անտիկ դարաշրջանի Վրաստանի պատմության հետ կապված հանգուցային իրադարձությունների և գործընթացների հետազոտում: Հետազոտական հարցերի վրա հիմնվելով՝ դարաշրջանի բնութագրերի/ոգու/առանձնահատկությունների ցուցաբերում: |

**Թեմայի շրջանակներում արդյունքներին հասնելու ստուգիչները**

**Աղբյուր/մեկնաբանություն** – Աշակերտը պետք է կարողանա.

- Տարբեր տեսակի աղբյուրների վրա (հնագիտական տվյալներ, գրավոր աղբյուրներ, վիմագրական նյութ) հիմնվելով՝ վերլուծել ուշ անտիկ դարաշրջանի և վաղ միջնադարի ժամանակաշրջանի Վրաստանի պատմության համար արդիական խնդիրները (նախանշել համալիր խնդիր, կազմակերպել գիտելիքները և փոխկապակցել՝ հետազոտական խնդիրը լուծելու համար, սեփական հետազոտության արդյունքները կապել պատմագիտության մեջ արտահայտված կարծիքների հետ):

**Ժամանակ** – Աշակերտը պետք է կարողանա.

- Հնագույն դարաշրջանի հետ կապված պատմական խնդրահարույց հարցերը կապել պարբերացման տարբեր համակարգերի հետ (օրինակ՝ հնագիտական պարբերացում, պատմական պարբերացում): Վերլուծել դրանք նախորդ և հետագա ժամանակաշրջանների իրադարձությունների հետ կապի մեջ:

**Տարածություն** – Աշակերտը պետք է կարողանա.

- Հնագույն դարաշրջանի Վրաստանի հետ կապված խնդրահարույց հարցերի հետազոտման ժամանակ օգտագործել ճիշտ պատմաաշխարհագրական եզրույթներ, բնութագրել հանգուցային նշանակություն ունեցող պատմաաշխարհագրական տարածքների (օրինակ՝ Կոլխեթի, Իբերիա, Պոնտոս, Հայաստան) նշանակությունը:

**Հասարակություն** – Աշակերտը պետք է կարողանա.

- Հետազոտել հնագույն դարաշրջանի Վրաստանի տարածքում գոյություն ունեցած հասարակության բնութագրերը (աշխարհայացք, ինքնության միջոցներ, «մշակութային այլ»-ի նկատմամբ վերաբերմունքը) և ամենօրյա կյանքը (տնտեսության ձևեր, կապի միջոցներ, բնակավայրերի տեսակներ, ավանդույթներ և այլ), պատմական դարաշրջանը/հնագիտական ժամանակաշրջանը տեսնել իր ժամանակակիցների աչքով:

**Իշխանություն** – Աշակերտը պետք է կարողանա.

- Վերլուծել իշխանության երևույթի հետ կապված հարցերը (խորհրդանիշներ, իշխանական կառույցներ, իշխանության բաշխում, իշխանության համար պայքարի ձևեր, իշխանության երևույթի նկատմամբ վերաբերմունք) հնագույն դարաշրջանի օրինակների հիման վրա:

**Պատմական իրադարձություն/գործընթաց** – Աշակերտը պետք է կարողանա.

- Հետազոտել անտիկ դարաշրջանի պատմության հետ կապված սոցիալական և քաղաքական գործընթացները (օրինակ, հույներն ինչու նորաշեններ հիմնեցին Վրաստանի տարածքում), հանգուցային թեմային առնչվող փաստերը և իրադարձությունները տիպաբանական առումով խմբավորել, տարբեր տեսանկյուններից վերլուծել, այդ թվում, որոշել պատճառահետևանքային կապերը, ըմբռնել հետազոտության թեմայի պատմական նշանակությունը, դա մեկնաբանել իրադարձության համաժամանակակցի աչքերով):

| Թեմա. Ուշ անտիկ դարաշրջան և վաղ միջնադար (մինչև 1014 թվականը) |
| --- |
| **Թեմայի շրջանակներում արդյունքներին հասնելու ստուգիչները** |

**Աղբյուր** – Աշակերտը պետք է կարողանա.

- Տարբեր տեսակի աղբյուրների վրա (հնագիտական տվյալներ, գրավոր աղբյուրներ, վիմագրական նյութ) հիմնվելով՝ վերլուծել ուշ անտիկ դարաշրջանի և վաղ միջնադարի պատմական իրադարձությունները/գործընթացները:

**Ժամանակ** – Աշակերտը պետք է կարողանա.

- Ուշ անտիկ դարաշրջանի և վաղ միջնադարի հետ կապված պատմական իրադարձությունները/գործընթացները կապել պարբերացման տարբեր համակարգերի հետ (օրինակ՝ հնագիտական պարբերացման հետ, պատմական պարբերացման հետ):
- Համաշխարհային պատմության պարբերացման սխեմաները կապել Վրաստանի պատմության պարբերացման համակարգի հետ:
- Վերլուծել այն գործոնները, որոնք ուշ անտիկ դարաշրջանում և վաղ միջնադարում պայմանավորում էին փոփոխականության/ժամանակաշրջանի երևույթի առանձնահատուկ ընկալում:

**Տարածություն** – Աշակերտը պետք է կարողանա.

- Ուշ անտիկ դարաշրջանի և վաղ միջնադարի հետ կապված իրադարձությունների/գործընթացների մասին դատողություն անելիս՝ օգտագործել ճիշտ պատմաաշխարհագրական եզրույթներ:
- Բնութագրել ուշ անտիկ դարաշրջանի և վաղ միջնադարի համար առանցքային նշանակություն ունեցող պատմաաշխարհագրական տարածությունները (այդ թվում, Կովկասը):
- Դատողություն անել ուշ անտիկ դարաշրջանում և վաղ միջնադարում աշխարհագրական գիտելիքների զարգացման մասին:

**Հասարակություն** – Աշակերտը պետք է կարողանա.

- Ուրվագծել ուշ անտիկ դարաշրջանի և վաղ միջնադարի հասարակության առանձնահատկությունները (ինքնության միջոցներ, «մշակութային այլ»-ի երևույթը, սոցիալական շերտերը, առօրյան) և համեմատել այլ պատմական ժամանակաշրջանների հասարակությունների հետ:

**Իշխանություն** – Աշակերտը պետք է կարողանա.

- Վերլուծել իշխանության երևույթի հետ կապված հարցերը (խորհրդանիշներ, իշխանական կառույցներ, իշխանության բաշխում, իշխանության համար պայքարի ձևեր, իշխանության երևույթի նկատմամբ վերաբերմունք) Վրաստանի և Մերձավոր Արևելքի և միջերկրածովյա երկրների օրինակների հիման վրա:

**Պատմական իրադարձություն/գործընթաց** – Աշակերտը պետք է կարողանա.

- Վերլուծել ուշ անտիկ դարաշրջանի և վաղ միջնադարի հետ կապված հասարակական և քաղաքական իրադարձությունները և գործընթացները (հետազոտության թեմային առնչվող փաստերը և իրադարձությունները խմբավորել տիպաբանական առումով, վերլուծել տարբեր տեսանկյուններից, այդ թվում, որոշել պատճառահետևանքային կապերը, ըմբռնել հետազոտության թեմայի պատմական նշանակությունը, դա մեկնաբանել իրադարձության համաժամանակակցի աչքերով), դրանք կապել/ համեմատել համապատասխան ժամանակաշրջանի Վրաստանի պատմության հարցերի հետ:

| Թեմա. Վրաստանը ուշ անտիկ դարաշրջանում և վաղ միջնադարում (մինչև 1014 թվականը) |
|---|
| Թեման ենթադրում է ուշ անտիկ դարաշրջանի և վաղ միջնադարի Վրաստանի պատմության հետ կապված հանգուցային իրադարձությունների և գործընթացների հետազոտում: Հետազոտական հարցերի վրա հիմնվելով՝ դարաշրջանի բնութագրերի/ոգու/առանձնահատկությունների ցուցաբերում: |
| **Թեմայի շրջանակներում արդյունքներին հասնելու ստուգիչները**<br><br>**Աղբյուր/մեկնաբանություն** – Աշակերտը պետք է կարողանա.<br>● Տարբեր տեսակի աղբյուրների վրա (հնագիտական տվյալներ, գրավոր աղբյուրներ, վիմագրական նյութ) հիմնվելով՝ վերլուծել ուշ անտիկ դարաշրջանի և վաղ միջնադարի ժամանակաշրջանի Վրաստանի պատմության համար արդիական խնդիրները (նախանշել համալիր խնդիր, կազմակերպել գիտելիքները և փոխկապակցել՝ հետազոտական խնդիրը լուծելու համար, սեփական հետազոտության արդյունքները կապել պատմագիտության մեջ արտահայտված կարծիքների հետ):<br><br>**Ժամանակ** – Աշակերտը պետք է կարողանա.<br>● Ուշ անտիկ դարաշրջանի և վաղ միջնադարի ժամանակաշրջանի Վրաստանի պատմության հետ կապված պատմական խնդրահարույց հարցերը կապել պարբերացման տարբեր համակարգերի հետ (օրինակ՝ հնագիտական պարբերացում, պատմական պարբերացում): Վերլուծել դրանք նախորդ և հետագա ժամանակաշրջանների իրադարձությունների հետ կապի մեջ:<br><br>**Տարածություն** – Աշակերտը պետք է կարողանա.<br>● Ուշ անտիկ դարաշրջանի և վաղ միջնադարի Վրաստանի պատմության հետ կապված խնդրահարույց հարցերի հետազոտման ժամանակ օգտագործել ճիշտ պատմաաշխարհագրական եզրույթներ (օրինակ՝ Դարիալիի դարպաս, Դերբենտի դարպաս): Բնութագրել հանգուցային նշանակություն ունեցող պատմաաշխարհագրական տարածքները:<br><br>**Հասարակություն** – Աշակերտը պետք է կարողանա.<br>● Հետազոտել ուշ անտիկ դարաշրջանի և վաղ միջնադարի Վրաստանի հասարակության բնութագրերը (աշխարհայացք, ինքնության միջոցներ, «մշակութային այլ»-ի նկատմամբ վերաբերմունքը) և ամենօրյա կյանքը (տնտեսության ձևեր, կապի միջոցներ, բնակավայրերի տեսակներ, ավանդույթներ և այլ), պատմական դարաշրջանը/հնագիտական ժամանակաշրջանը տեսնել իր ժամանակակիցների աչքով:<br><br>**Իշխանություն** – Աշակերտը պետք է կարողանա.<br>● Հետազոտել իշխանության երևույթի հետ կապված հարցերը (խորհրդանիշներ, իշխանական կառույցներ, իշխանության բաշխում, իշխանության համար պայքարի ձևեր, իշխանության երևույթի նկատմամբ վերաբերմունք) ուշ անտիկ դարաշրջանի և վաղ միջնադարի օրինակների հիման վրա:<br><br>**Պատմական իրադարձություն/գործընթաց** – Աշակերտը պետք է կարողանա.<br>● Հետազոտել ուշ անտիկ դարաշրջանի և վաղ միջնադարի Վրաստանի պատմության հետ կապված սոցիալական և քաղաքական գործընթացները (օրինակ, որ սոցիալ-քաղաքական տարածքների մաս էր հանդիսանում Վրաստանը ուշ անտիկ դարաշրջանում և վաղ միջնադարում ), հետազոտական թեմային առնչվող փաստերը և իրադարձությունները խմբավորել տիպաբանական առումով, վերլուծել տարբեր տեսանկյուններից, այդ թվում, որոշել պատճառահետևանքային կապերը, ըմբռնել հետազոտության թեմայի պատմական նշանակությունը, դա մեկնաբանել իրադարձության համաժամանակակցի աչքերով): |

# XI ԴԱՍԱՐԱՆ

| **Թեմա. Միջնադար** |
|---|
| **Թեմայի շրջանակներում արդյունքներին հասնելու ստուգիչները**<br><br>**Աղբյուր** – Աշակերտը պետք է կարողանա.<br>● Տարբեր տեսակի աղբյուրների վրա (հնագիտական տվյալներ, գրավոր աղբյուրներ, վիմագրական նյութ, դրամագիտական նյութ) հիմնվելով՝ վերլուծել միջին դարերի պատմական իրադարձությունները/գործընթացները:<br><br>**Ժամանակ** – Աշակերտը պետք է կարողանա.<br>● Միջնադարի հետ կապված պատմական իրադարձությունները/գործընթացները կապել պարբերացման տարբեր համակարգերի հետ (օրինակ՝ հնագիտական պարբերացման հետ, պատմական պարբերացման հետ):<br>● Համաշխարհային պատմության պարբերացման սխեմաները կապել Վրաստանի պատմության պարբերացման համակարգի հետ:<br>● Վերլուծել այն գործոնները, որոնք միջնադարում պայմանավորում էին փոփոխականության/ժամանակաշրջանի երևույթի առանձնահատուկ ընկալում:<br><br>**Տարածություն** – Աշակերտը պետք է կարողանա.<br>● Միջնադարի հետ կապված իրադարձությունների/գործընթացների մասին դատողություն անելիս՝ օգտագործել ճիշտ պատմաաշխարհագրական եզրույթներ:<br>● Բնութագրել միջնադարի համար առանցքային նշանակություն ունեցող պատմաաշխարհագրական տարածությունները (այդ թվում, Կովկասը):<br>● Դատողություն անել միջնադարում աշխարհագրական գիտելիքների զարգացման մասին:<br><br>**Հասարակություն** – Աշակերտը պետք է կարողանա.<br>● Ուրվագծել միջնադարյան հասարակության առանձնահատկությունները (ինքնության միջոցներ, «մշակութային այլ»-ի երևույթը, սոցիալական շերտերը, առօրյան) և համեմատել այլ պատմական ժամանակաշրջանների հասարակությունների հետ:<br><br>**Իշխանություն** – Աշակերտը պետք է կարողանա.<br>● Վերլուծել իշխանության երևույթի հետ կապված հարցերը (խորհրդանիշներ, իշխանական կառույցներ, իշխանության բաշխում, իշխանության համար պայքարի ձևեր, իշխանության երևույթի նկատմամբ վերաբերմունք) միջնադարյան Վրաստանի, Մերձավոր Արևելքի և Եվրոպայի երկրների օրինակների հիման վրա:<br><br>**Պատմական իրադարձություն/գործընթաց** – Աշակերտը պետք է կարողանա.<br>● Վերլուծել միջնադարի հետ կապված հասարակական և քաղաքական իրադարձությունները և գործընթացները (հետազոտության թեմային առնչվող փաստերը և իրադարձությունները խմբավորել տիպաբանական առումով, վերլուծել տարբեր տեսանկյուններից, այդ թվում, որոշել պատճառահետևանքային կապերը, ըմբռնել հետազոտության թեմայի պատմական նշանակությունը, դա մեկնաբանել իրադարձության համաժամանակակցի աչքերով), դրանք կապել/ համեմատել համապատասխան ժամանակաշրջանի Վրաստանի պատմության հարցերի հետ: |

# XI ԴԱՍԱՐԱՆ

| **Թեմա. Զարգացած միջնադարը Վրաստանում** |
| --- |
| Թեման ենթադրում է զարգացած միջնադարի Վրաստանի պատմության հետ կապված հանգուցային իրադարձությունների և գործընթացների հետազոտում: Հետազոտական հարցերի վրա հիմնվելով՝ դարաշրջանի բնութագրերի/ոգու/առանձնահատկությունների ցուցաբերում: |

**Թեմայի շրջանակներում արդյունքներին հասնելու ստուգիչները**

**Աղբյուր /մեկնաբանություն** – Աշակերտը պետք է կարողանա.

- Տարբեր տեսակի աղբյուրների վրա (հնագիտական տվյալներ, գրավոր աղբյուրներ) հիմնվելով՝ հետազոտել միջնադարյան Վրաստանի պատմության համար արդիական խնդիրները (նախանշել համալիր խնդիր, կազմակերպել գիտելիքները և փոխկապակցել՝ հետազոտական խնդիրը լուծելու համար, սեփական հետազոտության արդյունքները կապել պատմագիտության մեջ արտահայտված կարծիքների հետ):

**Ժամանակ** – Աշակերտը պետք է կարողանա.

- Միջնադարյան Վրաստանի պատմության հետ կապված պատմական խնդրահարույց հարցերը կապել պարբերացման տարբեր համակարգերի հետ (օրինակ՝ հնագիտական պարբերացում, պատմական պարբերացում): Վերլուծել դրանք նախորդ և հետագա ժամանակաշրջանների իրադարձությունների հետ կապի մեջ:

**Տարածություն** – Աշակերտը պետք է կարողանա.

- Միջնադարյան Վրաստանի պատմության հետ կապված խնդրահարույց հարցերի հետազոտման ժամանակ օգտագործել ճիշտ պատմաաշխարհագրական եզրույթներ (օրինակ՝ Սամցխե- աթաբագություն, Կլդեկարիի էրիսթավիություն): Բնութագրել հանգուցային նշանակություն ունեցող պատմաաշխարհագրական տարածքները:

**Հասարակություն** – Աշակերտը պետք է կարողանա.

- Հետազոտել միջնադարյան Վրաստանի հասարակության բնութագրերը (աշխարհայացք, ինքնության միջոցներ, «մշակութային այլ»-ի նկատմամբ վերաբերմունքը) և ամենօրյա կյանքը (տնտեսության ձևեր, կապի միջոցներ, բնակավայրերի տեսակներ, ավանդույթներ և այլ): Պատմական դարաշրջանը/հնագիտական ժամանակաշրջանը տեսնել իր ժամանակակիցների աչքով:

**Իշխանություն** – Աշակերտը պետք է կարողանա.

- Հետազոտել իշխանության երևույթի հետ կապված հարցերը (խորհրդանիշներ, իշխանական կառույցներ, իշխանության բաշխում, իշխանության համար պայքարի ձևեր, իշխանության երևույթի նկատմամբ վերաբերմունք) միջնադարյան Վրաստանի օրինակների հիման վրա:

**Պատմական իրադարձություն/գործընթաց** – Աշակերտը պետք է կարողանա.

- Հետազոտել միջնադարյան Վրաստանի պատմության հետ կապված սոցիալական և քաղաքական գործընթացները (օրինակ, երբվանից են ձևավորվում ֆեոդալական հարաբերությունները Վրաստանում, ինչ առանձնահատկություններ ուներ այն), հետազոտական թեմային առնչվող փաստերը և իրադարձությունները խմբավորել տիպաբանական առումով, վերլուծել տարբեր տեսանկյուններից, այդ թվում, որոշել պատճառահետևանքային կապերը, ըմբռնել հետազոտության թեմայի պատմական նշանակությունը, դա մեկնաբանել իրադարձության համաժամանակակցի աչքերով):

| Թեմա. Ուշ միջնադար և վաղ նոր ժամանակ |
| --- |
| **Թեմայի շրջանակներում արդյունքներին հասնելու ստուգիչները**<br><br>**Աղբյուր –** Աշակերտը պետք է կարողանա.<br>● Տարբեր տեսակի աղբյուրների վրա (հնագիտական տվյալներ, գրավոր աղբյուրներ, վիմագրական նյութ, դրամագիտական նյութ) հիմնվելով՝ վերլուծել ուշ միջնադարի և վաղ նոր ժամանակի պատմական իրադարձությունները/գործընթացները:<br><br>**Ժամանակ –** Աշակերտը պետք է կարողանա.<br>● Միջնադարի հետ կապված պատմական իրադարձությունները/գործընթացները կապել պարբերացման տարբեր համակարգերի հետ (օրինակ՝ հնագիտական պարբերացման հետ, պատմական պարբերացման հետ):<br>● Համաշխարհային պատմության պարբերացման սխեմաները կապել Վրաստանի պատմության պարբերացման համակարգի հետ:<br>● Վերլուծել այն գործոնները, որոնք ուշ միջնադարում և վաղ նոր ժամանակում պայմանավորում էին փոփոխականության/ժամանակաշրջանի ֆենոմենի նորովի ընկալում:<br><br>**Տարածություն –** Աշակերտը պետք է կարողանա.<br>● Ուշ միջնադարի և վաղ նոր ժամանակի հետ կապված իրադարձությունների/գործընթացների մասին դատողություն անելիս՝ օգտագործել ճիշտ պատմաաշխարհագրական եզրույթներ:<br>● Բնութագրել ուշ միջնադարի և վաղ նոր ժամանակի համար առանցքային նշանակություն ունեցող պատմաաշխարհագրական տարածությունները (այդ թվում, Կովկասը):<br>● Դատողություն անել ուշ միջնադարի և վաղ նոր ժամանակի աշխարհագրական գիտելիքների զարգացման մասին:<br><br>**Հասարակություն –** Աշակերտը պետք է կարողանա.<br>● Ուրվագծել ուշ միջնադարի և վաղ նոր ժամանակի հասարակության առանձնահատկությունները (ինքնության միջոցներ, «մշակութային այլ»-ի երևույթը, սոցիալական շերտերը, առօրյան) և համեմատել այլ պատմական ժամանակաշրջանների հասարակությունների հետ:<br><br>**Իշխանություն –** Աշակերտը պետք է կարողանա.<br>● Վերլուծել իշխանության երևույթի հետ կապված հարցերը (խորհրդանիշներ, իշխանական կառույցներ, իշխանության բաշխում, իշխանության համար պայքարի ձևեր, իշխանության երևույթի նկատմամբ վերաբերմունք) ուշ միջնադարի և վաղ նոր ժամանակի Վրաստանի, Մերձավոր Արևելքի և Եվրոպայի երկրների օրինակների հիման վրա:<br><br>**Պատմական իրադարձություն/գործընթաց –** Աշակերտը պետք է կարողանա.<br>● Վերլուծել ուշ միջնադարի և վաղ նոր ժամանակի հետ կապված սոցիալական և քաղաքական իրադարձությունները և գործընթացները (հետազոտության թեմային առնչվող փաստերը և իրադարձությունները խմբավորել տիպաբանական առումով, վերլուծել տարբեր տեսանկյուններից, այդ թվում, որոշել պատճառահետևանքային կապերը, ըմբռնել հետազոտության թեմայի պատմական նշանակությունը, դա մեկնաբանել իրադարձության համաժամանակակցի աչքերով), դրանք կապել/ համեմատել համապատասխան ժամանակաշրջանի Վրաստանի պատմության հարցերի հետ: |

| Թեմա. Վրաստանը XV-XVIII դարերում |
|---|
| Թեման ենթադրում է «Երկարատև միջնադարի» ժամանակաշրջանի Վրաստանի պատմության հետ կապված հանգուցային իրադարձությունների և գործընթացների հետազոտում: Հետազոտական հարցերի վրա հիմնվելով՝ դարաշրջանի բնութագրերի/ոգու/առանձնահատկությունների ցուցաբերում: |

**Թեմայի շրջանակներում արդյունքներին հասնելու ստուգիչները**

**Աղբյուր/մեկնաբանություն** – Աշակերտը պետք է կարողանա.

- Տարբեր տեսակի աղբյուրների վրա (հնագիտական տվյալներ, գրավոր աղբյուրներ, վիմագրական նյութ) հիմնվելով՝ հետազոտել XV-VIII դարերի Վրաստանի պատմության համար արդիական խնդիրները (նախանշել համալիր խնդիր, կազմակերպել գիտելիքները և փոխկապակցել՝ հետազոտական խնդիրը լուծելու համար, սեփական հետազոտության արդյունքները կապել պատմագիտության մեջ արտահայտված կարծիքների հետ):

**Ժամանակ** – Աշակերտը պետք է կարողանա.

- XV-VIII դարերի Վրաստանի պատմության հետ կապված պատմական խնդրահարույց հարցերը կապել պարբերացման տարբեր համակարգերի հետ, վերլուծել դրանք նախորդ և հետագա ժամանակաշրջանների իրադարձությունների հետ կապի մեջ:

**Տարածություն** – Աշակերտը պետք է կարողանա.

- XV-VIII դարերի Վրաստանի պատմության հետ կապված խնդրահարույց հարցերի հետազոտման ժամանակ օգտագործել ճիշտ պատմաաշխարհագրական եզրույթներ (օրինակ՝ սաբարաթիանո, քաղաքացիական): Բնութագրել հանգուցային նշանակություն ունեցող պատմաաշխարհագրական տարածքները:

**Հասարակություն** – Աշակերտը պետք է կարողանա.

- Հետազոտել XV-VIII դարերի Վրաստանի հասարակության բնութագրերը (աշխարհայացք, ինքնության միջոցներ, «մշակութային այլ»-ի նկատմամբ վերաբերմունքը) և ամենօրյա կյանքը (տնտեսության ձևեր, կապի միջոցներ, բնակավայրերի տեսակներ, ավանդույթներ և այլ): Պատմական դարաշրջանը տեսնել իր ժամանակակիցների աչքով:

**Իշխանություն** – Աշակերտը պետք է կարողանա.

- Հետազոտել իշխանության երևույթի հետ կապված հարցերը (խորհրդանիշներ, իշխանական կառույցներ, իշխանության բաշխում, իշխանության համար պայքարի ձևեր, իշխանության երևույթի նկատմամբ վերաբերմունք) XV-VIII դարերի Վրաստանի օրինակների հիման վրա:

**Պատմական իրադարձություն/գործընթաց** – Աշակերտը պետք է կարողանա.

- Հետազոտել XV-VIII դարերի Վրաստանի պատմության հետ կապված սոցիալական և քաղաքական գործընթացները (օրինակ, Վրաստանում ինչո՞ւ առաջացան իշխանություններ: Վրաստանն ինչո՞ւ մասնատվեց թագավորություն-իշխանությունների), հետազոտական թեմային առնչվող փաստերը և իրադարձությունները խմբավորել տիպաբանական առումով, վերլուծել տարբեր տեսանկյուններից, այդ թվում, որոշել պատճառահետևանքային կապերը, ըմբռնել հետազոտության թեմայի պատմական նշանակությունը, դա մեկնաբանել իրադարձության համաժամանակակցի աչքերով):

| **Թեմա. «Երկարատև XIX դարը»** |
| --- |
| **Թեմայի շրջանակներում արդյունքներին հասնելու ստուգիչները** |
| **Աղբյուր** – Աշակերտը պետք է կարողանա.<br>● Տարբեր տեսակի աղբյուրների վրա (հնագիտական տվյալներ, գրավոր աղբյուրներ, վիմագրական նյութ, դրամագիտական նյութ) հիմնվելով՝ վերլուծել XIX դարի հետ կապված պատմական իրադարձությունները/գործընթացները:<br>**Ժամանակ** – Աշակերտը պետք է կարողանա.<br>● XIX դարի հետ կապված (ենթադրվում է «Երկարատև XIX դարը») պատմական իրադարձությունները/գործընթացները կապել պարբերացման տարբեր համակարգերի հետ:<br>● Համաշխարհային պատմության պարբերացման սխեմաները կապել Վրաստանի պատմության պարբերացման համակարգի հետ:<br>● Վերլուծել այն գործոնները, որոնք XIX դարում (ենթադրվում է «Երկարատև XIX դարը») ազդում էին փոփոխականության/ժամանակաշրջանի երևույթի ընկալման վրա:<br>**Տարածություն** – Աշակերտը պետք է կարողանա.<br>● XIX դարի հետ (ենթադրվում է «Երկարատև XIX դարը») կապված իրադարձությունների/ գործընթացների մասին դատողություն անելիս՝ օգտագործել ճիշտ պատմաաշխարհագրական եզրույթներ:<br>● Բնութագրել XIX դարի (ենթադրվում է «Երկարատև XIX դարը») համար առանցքային նշանակություն ունեցող պատմաաշխարհագրական տարածությունները (այդ թվում, Կովկասը):<br>● Դատողություն անել XIX դարում (ենթադրվում է «Երկարատև XIX դարը») աշխարհագրական գիտելիքների զարգացման մասին:<br>**Հասարակություն** – Աշակերտը պետք է կարողանա.<br>● Ուրվագծել XIX դարի (ենթադրվում է «Երկարատև XIX դարը») հասարակության առանձնահատկությունները (ինքնության միջոցներ, «մշակութային այլ»-ի երևույթը, սոցիալական շերտերը, առօրյան) և համեմատել այլ պատմական ժամանակաշրջանների հասարակությունների հետ:<br>**Իշխանություն** – Աշակերտը պետք է կարողանա.<br>● Վերլուծել իշխանության երևույթի հետ կապված հարցերը (խորհրդանիշներ, իշխանական կառույցներ, իշխանության բաշխում, իշխանության համար պայքարի ձևեր, իշխանության երևույթի նկատմամբ վերաբերմունք) XIX դարի (ենթադրվում է «Երկարատև XIX դարը») Վրաստանի, Մերձավոր Արևելքի և Եվրոպայի երկրների օրինակների հիման վրա:<br>**Պատմական իրադարձություն/գործընթաց** – Աշակերտը պետք է կարողանա.<br>● Վերլուծել XIX դարի (ենթադրվում է «Երկարատև XIX դարը») հետ կապված սոցիալական և քաղաքական իրադարձությունները և գործընթացները (հետազոտության թեմային առնչվող փաստերը և իրադարձությունները խմբավորել տիպաբանական առումով, տարբեր տեսանկյուններից վերլուծել, այդ թվում, որոշել պատճառահետևանքային կապերը, ըմբռնել հետազոտության թեմայի պատմական նշանակությունը, դա մեկնաբանել իրադարձության համաժամանակակցի աչքերով), դրանք կապել/համեմատել համապատասխան ժամանակաշրջանի Վրաստանի պատմության հարցերի հետ: |

| **Թեմա. Վրաստանը Ռուսաստանի կայսրության կազմի մեջ** |
|---|
| Թեման ենթադրում է 1801-1917 թվականների Վրաստանի պատմության հետ կապված հանգուցային իրադարձությունների և գործընթացների հետազոտում: Հետազոտական հարցերի վրա հիմնվելով՝ դարաշրջանի բնութագրերի/ոգու/առանձնահատկությունների ցուցաբերում: |
| **Թեմայի շրջանակներում արդյունքներին հասնելու ստուգիչները**<br><br>**Աղբյուր/մեկնաբանություն** – Աշակերտը պետք է կարողանա.<br>● Տարբեր տեսակի աղբյուրների վրա հիմնվելով՝ հետազոտել 1801-1917 թվականների Վրաստանի պատմության համար արդիական խնդիրները (նախանշել համալիր խնդիր, կազմակերպել գիտելիքները և փոխկապակցել՝ հետազոտական խնդիրը լուծելու համար, սեփական հետազոտության արդյունքները կապել պատմագիտության մեջ արտահայտված կարծիքների հետ):<br><br>**Ժամանակ –** Աշակերտը պետք է կարողանա.<br>● 1801-1917 թվականների Վրաստանի պատմության հարցերը կապել պարբերացման տարբեր համակարգերի հետ, վերլուծել դրանք նախորդ և հետագա ժամանակաշրջանների իրադարձությունների հետ կապի մեջ:<br><br>**Տարածություն –** Աշակերտը պետք է կարողանա.<br>● 1801-1917 թվականների Վրաստանի պատմության խնդրահարույց հարցերի հետազոտման ժամանակ օգտագործել ճիշտ պատմաաշխարհագրական եզրույթներ (օրինակ՝ Թբիլիսիի նահանգ, Գորիի գավառ): Բնութագրել հանգուցային նշանակություն ունեցող պատմաաշխարհագրական տարածքները:<br><br>**Հասարակություն –** Աշակերտը պետք է կարողանա.<br>● Հետազոտել 1801-1917 թվականների ժամանակահատվածի հասարակության բնութագրերը (աշխարհայացք, ինքնության միջոցներ, «մշակութային այլ»-ի նկատմամբ վերաբերմունքը) և ամենօրյա կյանքը (տնտեսության ձևեր, կապի միջոցներ, բնակավայրերի տեսակներ, ավանդույթներ և այլ): Դարաշրջանը տեսնել իր ժամանակակիցների աչքով:<br><br>**Իշխանություն –** Աշակերտը պետք է կարողանա.<br>● Հետազոտել իշխանության երևույթի հետ կապված հարցերը (խորհրդանիշներ, իշխանական կառույցներ, իշխանության բաշխում, իշխանության համար պայքարի ձևեր, իշխանության երևույթի նկատմամբ վերաբերմունք) 1801-1917 թվականների Վրաստանի պատմության օրինակների հիման վրա:<br><br>**Պատմական իրադարձություն/գործընթաց –** Աշակերտը պետք է կարողանա.<br>● Հետազոտել 1801-1917 թվականների Վրաստանի պատմության հետ կապված սոցիալական և քաղաքական գործընթացները (օրինակ, Վրաստանին ի՞նչ արդյունքներ բերեցին Միխեիլ Վորոնցովի բարեփոխումները), հետազոտական թեմային առնչվող փաստերը և իրադարձությունները խմբավորել տիպաբանական առումով, վերլուծել տարբեր տեսանկյուններից, այդ թվում, որոշել պատճառահետևանքային կապերը, ըմբռնել հետազոտության թեմայի պատմական նշանակությունը, դա մեկնաբանել իրադարձության համաժամանակակցի աչքերով): |

| **Թեմա. «Կարճատև XX դարը»** |
|---|
| **Թեմայի շրջանակներում արդյունքներին հասնելու ստուգիչները**<br><br>**Աղբյուր** – Աշակերտը պետք է կարողանա.<br>● Տարբեր տեսակի աղբյուրների վրա (գրավոր աղբյուրներ, աուդիո-փոտո-ֆոնո նյութ) հիմնվելով՝ վերլուծել XX դարի (ենթադրվում է «Կարճատև XX դարը») պատմական իրադարձությունները/ գործընթացները:<br><br>**Ժամանակ** – Աշակերտը պետք է կարողանա.<br>● XX դարի (ենթադրվում է «Կարճատև XX դարը») հետ կապված պատմական իրադարձությունները/ գործընթացները կապել պարբերացման տարբեր համակարգերի հետ:<br>● Համաշխարհային պատմության պարբերացման սխեմաները կապել Վրաստանի պատմության պարբերացման համակարգի հետ:<br>● Վերլուծել այն գործոնները, որոնք XX դարում (ենթադրվում է «Կարճատև XX դարը») ազդում էին փոփոխականության/ժամանակի երևույթի նորովի ընկալման վրա:<br><br>**Տարածություն** – Աշակերտը պետք է կարողանա.<br>● XX դարի հետ (ենթադրվում է «Կարճատև XX դարը») կապված իրադարձությունների/ գործընթացների մասին դատողություն անելիս՝ օգտագործել ճիշտ պատմաաշխարհագրական եզրույթներ:<br>● Բնութագրել XX դարի համար (ենթադրվում է «Կարճատև XX դարը») առանցքային նշանակություն ունեցող պատմաաշխարհագրական տարածությունները (այդ թվում, Կովկասը):<br>● Վերլուծել այն գործոնները, որոնք XX դարում (ենթադրվում է «Կարճատև XX դարը») ազդում էին տարածության երևույթի նորովի ընկալման վրա:<br><br>**Հասարակություն** – Աշակերտը պետք է կարողանա.<br>● Ուրվագծել XX դարի (ենթադրվում է «Կարճատև XX դարը») հասարակության առանձնահատկությունները (ինքնության միջոցներ, «մշակութային այլ»-ի երևույթը, սոցիալական շերտերը, առօրյան) և համեմատել այլ պատմական ժամանակաշրջանների հասարակությունների հետ:<br><br>**Իշխանություն** – Աշակերտը պետք է կարողանա.<br>● Վերլուծել իշխանության երևույթի հետ կապված հարցերը (խորհրդանիշներ, իշխանական կառույցներ, իշխանության բաշխում, իշխանության համար պայքարի ձևեր, իշխանության երևույթի նկատմամբ վերաբերմունք) Վրաստանի և Եվրոպայի երկրների օրինակների հիման վրա:<br><br>**Պատմական իրադարձություն/գործընթաց** – Աշակերտը պետք է կարողանա.<br>● Վերլուծել XX դարի (ենթադրվում է «Կարճատև XX դարը») հետ կապված սոցիալական և քաղաքական իրադարձությունները և գործընթացները (հետազոտության թեմային առնչվող փաստերը և իրադարձությունները խմբավորել տիպաբանական առումով, վերլուծել տարբեր տեսանկյուններից, այդ թվում, որոշել պատճառահետևանքային կապերը, ըմբռնել հետազոտության թեմայի պատմական նշանակությունը, դա մեկնաբանել իրադարձության համաժամանակակցի աչքերով), դրանք կապել/ համեմատել համապատասխան ժամանակաշրջանի Վրաստանի պատմության հարցերի հետ: |

## XII ԴԱՍԱՐԱՆ

| **Թեմա. Վրաստանի Դեմոկրատական Հանրապետություն** |
|---|
| Թեման ենթադրում է Վրաստանի Դեմոկրատական Հանրապետության պատմության հետ կապված համազգային իրադարձությունների և գործընթացների հետազոտում: Հետազոտական հարցերի վրա հիմնվելով՝ դարաշրջանի բնութագրերի/ոգու/առանձնահատկությունների ցուցաբերում: |
| **Թեմայի շրջանակներում արդյունքներին հասնելու ստուգիչները**<br><br>**Աղբյուր/մեկնաբանություն** – Աշակերտը պետք է կարողանա.<br>● Տարբեր տեսակի աղբյուրների վրա հիմնվելով՝ հետազոտել 1918-1921 թվականների ժամանակաշրջանի Վրաստանի պատմության համար արդիական խնդիրները (նախանշել համալիր խնդիր, կազմակերպել գիտելիքները և փոխկապակցել՝ հետազոտական խնդիրը լուծելու համար, սեփական հետազոտության արդյունքները կապել պատմագիտության մեջ արտահայտված կարծիքների հետ):<br><br>**Ժամանակ –** Աշակերտը պետք է կարողանա.<br>● 1918-1921 թվականների ժամանակաշրջանի Վրաստանի պատմության հարցերը կապել պարբերացման տարբեր համակարգերի հետ, վերլուծել դրանք նախորդ և հետագա ժամանակաշրջանների իրադարձությունների հետ կապի մեջ:<br><br>**Տարածություն –** Աշակերտը պետք է կարողանա.<br>● 1918-1921 թվականների ժամանակաշրջանի Վրաստանի պատմության հետ կապված խնդրահարույց հարցերի հետազոտման ժամանակ օգտագործել ճիշտ պատմաաշխարհագրական եզրույթներ: Բնութագրել համազգային նշանակություն ունեցող պատմաաշխարհագրական տարածքները:<br><br>**Հասարակություն –** Աշակերտը պետք է կարողանա.<br>● Հետազոտել 1918-1921 թվականների հասարակության բնութագրերը (աշխարհայացք, ինքնության միջոցներ, «մշակութային այլ»-ի նկատմամբ վերաբերմունքը) և ամենօրյա կյանքը (տնտեսության ձևեր, կապի միջոցներ, բնակավայրերի տեսակներ, ավանդույթներ և այլ): Դարաշրջանը տեսնել իր ժամանակակիցների աչքով:<br><br>**Իշխանություն –** Աշակերտը պետք է կարողանա.<br>● Հետազոտել իշխանության երևույթի հետ կապված հարցերը (խորհրդանիշներ, իշխանական կառույցներ, իշխանության բաշխում, իշխանության համար պայքարի ձևեր, իշխանության երևույթի նկատմամբ վերաբերմունք) 1918-1921 թվականների Վրաստանի պատմության օրինակների հիման վրա:<br><br>**Պատմական իրադարձություն/գործընթաց –** Աշակերտը պետք է կարողանա.<br>● Հետազոտել 1918-1921 թվականների ժամանակաշրջանի Վրաստանի պատմության հետ կապված սոցիալական և քաղաքական երևույթները/գործընթացները (<u>օրինակ, Վրաստանին ինչո՞ւ ընդունեցին Ազգերի լիգա</u>), հետազոտական թեմային առնչվող փաստերը և իրադարձությունները խմբավորել տիպաբանական առումով, վերլուծել տարբեր տեսանկյուններից, այդ թվում, որոշել պատճառահետևանքային կապերը, ըմբռնել հետազոտության թեմայի պատմական նշանակությունը, դա մեկնաբանել իրադարձության համաժամանակակցի աչքերով: |

| **Թեմա. Աշխարհը հազարամյակների սահմանագծին** |
| --- |
| **Թեմայի շրջանակներում արդյունքներին հասնելու ստուգիչները**<br><br>**Աղբյուր** – Աշակերտը պետք է կարողանա.<br>● Տարբեր տեսակի աղբյուրների վրա (գրավոր աղբյուրներ, աուդիո-ֆոտո-ֆոնո նյութ) հիմնվելով՝ վերլուծել «Սառը պատերազմին» հաջորդող ժամանակաշրջանի հետ կապված պատմական իրադարձությունները/գործընթացները:<br><br>**Ժամանակ** – Աշակերտը պետք է կարողանա.<br>● «Սառը պատերազմին» հաջորդող ժամանակաշրջանի հետ կապված պատմական իրադարձությունները/գործընթացները կապել պարբերացման տարբեր համակարգերի հետ:<br>● Համաշխարհային պատմության պարբերացման սխեմաները կապել Վրաստանի պատմության պարբերացման համակարգի հետ:<br>● Վերլուծել այն գործոնները, որոնք «Սառը պատերազմին» հաջորդող ժամանակաշրջանում ազդում էին փոփոխականության/ժամանակի երևույթի ընկալման վրա:<br><br>**Տարածություն** – Աշակերտը պետք է կարողանա.<br>● «Սառը պատերազմին» հաջորդող ժամանակաշրջանի հետ կապված իրադարձությունների/ գործընթացների մասին դատողություն անելիս՝ օգտագործել ճիշտ պատմաաշխարհագրական եզրույթներ:<br>● Բնութագրել «Սառը պատերազմին» հաջորդող ժամանակաշրջանի հետ կապված առանցքային նշանակություն ունեցող պատմաաշխարհագրական տարածությունները (այդ թվում, Կովկասը):<br>● Վերլուծել այն գործոնները, որոնք «Սառը պատերազմին» հաջորդող ժամանակաշրջանում ազդում էին տարածության երևույթի ընկալման վրա:<br><br>**Հասարակություն** – Աշակերտը պետք է կարողանա.<br>● Ուրվագծել «Սառը պատերազմին» հաջորդող ժամանակաշրջանի հետ կապված հասարակության առանձնահատկությունները (ինքնության միջոցներ, «մշակութային այլ»-ի երևույթը, սոցիալական շերտերը, առօրյան) և համեմատել այլ պատմական ժամանակաշրջանների հասարակությունների հետ:<br><br>**Իշխանություն** – Աշակերտը պետք է կարողանա.<br>● Վերլուծել իշխանության երևույթի հետ կապված հարցերը (խորհրդանիշներ, իշխանական կառույցներ, իշխանության բաշխում, իշխանության համար պայքարի ձևեր, իշխանության երևույթի նկատմամբ վերաբերմունք)՝ «Սառը պատերազմին» հաջորդող ժամանակաշրջանի Վրաստանի և աշխարհի այլ երկրների օրինակների վրա հիմնվելով:<br><br>**Պատմական իրադարձություն/գործընթաց** – Աշակերտը պետք է կարողանա.<br>● Վերլուծել «Սառը պատերազմին» հաջորդող ժամանակաշրջանի հետ կապված սոցիալական և քաղաքական իրադարձությունները և գործընթացները (հետազոտության թեմային առնչվող փաստերը և իրադարձությունները խմբավորել տիպաբանական առումով, վերլուծել տարբեր տեսանկյուններից, այդ թվում, որոշել պատճառահետևանքային կապերը, ըմբռնել հետազոտության թեմայի պատմական նշանակությունը, դա մեկնաբանել իրադարձության համաժամանակակցի աչքերով), դրանք կապել/համեմատել համապատասխան ժամանակաշրջանի Վրաստանի պատմության հարցերի հետ: |

| Թեմա. Վրաստանը Խորհրդային Միության մեջ |
| --- |
| Թեման ենթադրում է խորհրդային ժամանակաշրջանի պատմության հետ կապված հանգուցային իրադարձությունների և գործընթացների հետազոտում: Հետազոտական հարցերի վրա հիմնվելով՝ դարաշրջանի բնութագրերի/ոգու/առանձնահատկությունների ցուցաբերում: |
| **Թեմայի շրջանակներում արդյունքներին հասնելու ստուգիչները** |

**Աղբյուր/մեկնաբանություն** – Աշակերտը պետք է կարողանա.

- Տարբեր տեսակի աղբյուրների վրա հիմնվելով՝ հետազոտել խորհրդային շրջանի Վրաստանի պատմության համար արդիական խնդիրները (նախանշել համալիր խնդիր, կազմակերպել գիտելիքները և փոխկապակցել՝ հետազոտական խնդիրը լուծելու համար, սեփական հետազոտության արդյունքները կապել պատմագիտության մեջ արտահայտված կարծիքների հետ):

**Ժամանակ** – Աշակերտը պետք է կարողանա.

- Խորհրդային ժամանակաշրջանի Վրաստանի պատմության հարցերը կապել պարբերացման տարբեր համակարգերի հետ, վերլուծել դրանք նախորդ և հետագա ժամանակաշրջանների իրադարձությունների հետ կապի մեջ:

**Տարածություն** – Աշակերտը պետք է կարողանա.

- Խորհրդային ժամանակաշրջանի Վրաստանի պատմության հետ կապված խնդրահարույց հարցերի հետազոտման ժամանակ օգտագործել ճիշտ պատմաաշխարհագրական եզրույթներ: Բնութագրել հանգուցային նշանակություն ունեցող պատմաաշխարհագրական տարածքները:

**Հասարակություն** – Աշակերտը պետք է կարողանա.

- Հետազոտել խորհրդային ժամանակաշրջանի հասարակության բնութագրերը (աշխարհայացք, ինքնության միջոցներ, «մշակութային այլ»-ի նկատմամբ վերաբերմունքը) և ամենօրյա կյանքը (տնտեսության ձևեր, կապի միջոցներ, բնակավայրերի տեսակներ, ավանդույթներ և այլ): Պատմական ժամանակաշրջանը տեսնել իր ժամանակակիցների աչքով:

**Իշխանություն** – Աշակերտը պետք է կարողանա.

- Հետազոտել իշխանության երևույթի հետ կապված հարցերը (խորհրդանիշներ, իշխանական կառույցներ, իշխանության բաշխում, իշխանության համար պայքարի ձևեր, իշխանության երևույթի նկատմամբ վերաբերմունք) խորհրդային ժամանակաշրջանի Վրաստանի պատմության օրինակով:

**Պատմական իրադարձություն/գործընթաց** – Աշակերտը պետք է կարողանա.

- Հետազոտել խորհրդային ժամանակաշրջանի Վրաստանի պատմության հետ կապված սոցիալական և քաղաքական երևույթները/գործընթացները (օրինակ, ո՞ր գործոնները նպաստեցին Խորհրդային Միության փլուզմանը), հետազոտական թեմային առնչվող փաստերը և իրադարձությունները խմբավորել տիպաբանական առումով, վերլուծել տարբեր տեսանկյուններից, այդ թվում, որոշել պատճառահետևանքային կապերը, ըմբռնել հետազոտության թեմայի պատմական նշանակությունը, դա մեկնաբանել իրադարձության համաժամանակակցի աչքերով:

| Թեմա. Վրաստանը և ժամանակակից աշխարհը |
| --- |
| Թեման ենթադրում է 1990-ական թվականների և հաջորդ ժամանակաշրջանի Վրաստանի պատմության հետ կապված հանգուցային իրադարձությունների և գործընթացների հետազոտում: Հետազոտական հարցերի վրա հիմնվելով՝ դարաշրջանի բնութագրերի ցուցաբերում: |

**Թեմայի շրջանակներում արդյունքներին հասնելու ստուգիչները**

**Աղբյուր/մեկնաբանություն** – Աշակերտը պետք է կարողանա.

- Տարբեր տեսակի աղբյուրների վրա հիմնվելով՝ հետազոտել 1990-ական թվականների հաջորդ ժամանակաշրջանի Վրաստանի պատմության համար արդիական խնդիրները (նախանշել համալիր խնդիր, կազմակերպել գիտելիքները և փոխկապակցել՝ հետազոտական խնդիրը լուծելու համար, սեփական հետազոտության արդյունքները կապել պատմագիտության մեջ արտահայտված կարծիքների հետ):

**Ժամանակ** – Աշակերտը պետք է կարողանա.

- 1990-ական թվականների հաջորդ ժամանակաշրջանի Վրաստանի պատմության հետ կապված հարցերը կապել պարբերացման տարբեր համակարգերի հետ, վերլուծել դրանք նախորդ և հետագա ժամանակաշրջանների իրադարձությունների հետ կապի մեջ:

**Տարածություն** – Աշակերտը պետք է կարողանա.

- 1990-ական թվականների հաջորդ ժամանակաշրջանի Վրաստանի պատմության հետ կապված խնդրահարույց հարցերի հետազոտման ժամանակ օգտագործել ճիշտ պատմաաշխարհագրական եզրույթներ: Բնութագրել հանգուցային նշանակություն ունեցող պատմաաշխարհագրական տարածքները:

**Հասարակություն** – Աշակերտը պետք է կարողանա.

- Հետազոտել 1990-ական թվականների հաջորդ ժամանակաշրջանի Վրաստանի հասարակության բնութագրերը (աշխարհայացք, ինքնության միջոցներ, «մշակութային այլ»-ի նկատմամբ վերաբերմունքը) և ամենօրյա կյանքը (տնտեսության ձևեր, կապի միջոցներ, բնակավայրերի տեսակներ, ավանդույթներ և այլ): Պատմական ժամանակաշրջանը տեսնել իր ժամանակակիցների աչքով:

**Իշխանություն** – Աշակերտը պետք է կարողանա.

- Հետազոտել իշխանության երևույթի հետ կապված հարցերը (խորհրդանիշներ, իշխանական կառույցներ, իշխանության բաշխում, իշխանության համար պայքարի ձևեր, իշխանության երևույթի նկատմամբ վերաբերմունք) 1990-ական թվականների հաջորդ ժամանակաշրջանի օրինակով:

**Պատմական իրադարձություն/գործընթաց** – Աշակերտը պետք է կարողանա.

- Հետազոտել 1990-ական թվականների հաջորդ ժամանակաշրջանի Վրաստանի պատմության հետ կապված սոցիալական և քաղաքական երևույթները և գործընթացները (հետազոտական թեմային առնչվող փաստերը և իրադարձությունները խմբավորել տիպաբանական առումով, վերլուծել տարբեր տեսանկյուններից, այդ թվում, որոշել պատճառահետևանքային կապերը, ըմբռնել հետազոտության թեմայի պատմական նշանակությունը, դա մեկնաբանել իրադարձության համաժամանակակցի աչքերով):

**Պատմական իրադարձություն/գործընթաց** – Աշակերտը պետք է կարողանա.

- Հետազոտել 1990-ական թվականների հաջորդ ժամանակաշրջանի Վրաստանի պատմության հետ կապված սոցիալական և քաղաքական երևույթները և գործընթացները (օրինակ, ի՞նչ մարտահրավերների առջև է Վրաստանին կանգնեցնում գլոբալացումը), հետազոտական թեմային առնչվող փաստերը և իրադարձությունները խմբավորել տիպաբանական առումով, վերլուծել տարբեր տեսանկյուններից, այդ թվում, որոշել պատճառահետևանքային կապերը, ըմբռնել հետազոտության թեմայի պատմական նշանակությունը, դա մեկնաբանել իրադարձության համաժամանակակցի աչքերով):

# ԹԵՄԱՅԻ ԿԱՅՈՒՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ

Թեմատիկ կայուն պատկերացումները որակապես տարբերվում են նպատակային հասկացությունների հետ կապված կայուն պատկերացումներից:

**Թեմայի հետ կապված կայուն պատկերացումների** գործառույթը աշակերտի մոտ ուսումնասիրվելիք թեմայի ուրվագծերի հետ կապված պատկերացման ստեղծումն է:

Առաջարկում ենք X դասարանում ուսումնասիրվելիք թեմաների կայուն պատկերացումները.

**Միջնակարգ աստիճան**

**Թեմա 1. Քարի և բրոնզի դար**

| Նպատակային հասկացություն | Աշակերտը պետք է հասկանա, որ. |
|---|---|
| **Ժամանակ** | ● Պատմաբանները նախապատմական ժամանակաշրջան/քարի դար են անվանում մարդու ծագումից մինչև գիր և պետություն ստեղծելու ժամանակահատվածը:<br>● Քարի դարում հասարակության զարգացման վրա մեծ ազդեցություն են ունեցել կլիմայական պայմանները, ուստի հնագիտական պարբերացումը նախատեսում է երկրաբանական ժամանակաշրջանների հերթագայությունը:<br>● Գիտնականների միջև կարծիքների տարբերություն կա, թե երբ է առաջացել առաջին քաղաքակրթությունը/համալիր հասարակությունը, և ինչ էական հատկանիշներ ուներ նա:<br>● Քարի և բրոնզի դարերում Վրաստանի տարածքում ապրող մարդիկ ինտենսիվ կապեր են ունեցել Մերձավոր Արևելքի հետ, հետևաբար՝ Վրաստանի պատմության պարբերացումը սերտորեն հետևում է Մերձավոր Արևելքի պատմության/հնագիտական պարբերացման սխեմաներին:<br>● Հին Արևելքի ժողովուրդների մոտ հանդիպում ենք պատմության պարբերացման առաջին փորձերին (ստեղծվել են ժամանակի հաշվառման առաջին համակարգերը (օրացույց, թվականություն): |
| **Տարածություն** | ● Քարի դարում աշխարհին առավել զարգացած էր Մերձավոր Արևելքում՝ այսպես կոչված «Պտղաբեր կիսալուսնի» տարածքում: «Նեոլիթյան հեղափոխության» նվաճումները Եվրասիայի մյուս տարածաշրջաններ հենց այստեղից էին տարածվում:<br>● Վրաստանի և Անդրկովկասի տարածքը հարևան էր, ուղղակիորեն սահմանակցում էր հնագետների կողմից «Պտղաբեր կիսալուսին» անվանված տարածքին:<br>● Հին արևելյան ժամանակաշրջանում մի քանի տեղերում զարգացավ «համալիր հասարակություն» (Միջագետք, Եգիպտոս, Միջերկրական ծովի տարածք, Սիրիա-Պաղեստին, Արևելյան Եվրոպա, Հյուսիսային Իրան, Փենջաբ, Հուանխեի հովիտ):<br>● Ք.ա. IV-I հազարամյակներում Միջագետքի, Անատոլիայի, Եգիպտոսի ու Իրանի տարածքում գոյություն ունեցող քաղաքակրթությունները իրար հետ են ունեցել շփումներ, այս փուլում նրանք շփումներ չեն ունեցել Հնդկաստանի և Չինաստանի տարածքում գոյություն ունեցող քաղաքակրթությունների հետ:<br>● Վրաստանի տարածքում ապրող էթնիկ խմբերը Հին Արևելքի պետություններից առավել ինտենսիվ հարաբերություններ են ունեցել խեթերի, միթանացիների, ասորիների և ուրարտացիների հետ:<br>● Հին արևելյան ժամանակաշրջանից քարտեզներ չեն պահպանվել, թեև տարբեր տեսակի տեքստերի վերլուծությունը ցույց է տալիս, որ Հին Արևելքի պետությունները լավ տեղեկացված են եղել ինչպես հարևան, այնպես էլ հեռավոր տարածքների մասին:<br>● Հին արևելյան ժամանակաշրջանից չեն պահպանվել քարտեզներ և ճանապարհորդների գրառումներ, ինչը մեզ մտածելու տեղիք է տալիս, որ աշխարհագրական գիտելիքները հասանելի չեն եղել լայն հանրությանը, սակայն տեքստերի վերլուծությունը ցույց է տալիս, որ սոցիալական տարբեր շերտերի ներկայացուցիչներ (օրինակ՝ առևտրականներ, դիվանագետներ) լավ տեղեկացված են եղել ոչ միայն հարևան, այլ նաև շատ հեռավոր տարածքների մասին: |

| | |
|---|---|
| **Տարածություն** | ● Հին Արևելքի մարտնչող պետությունների աշխարհագրական գիտելիքները տարածաշրջանի և նրանից դուրս գտնվող աշխարհի մասին համալրվում էին ինչպես առևտրատնտեսական հարաբերություններով, այնպես էլ հարևան և հեռավոր, քիչ հայտնի երկրների/ժողովուրդների դեմ ռազմական արշավանքներով:<br>● Քարի և բրոնզի դարում Անդրկովկասի ժողովուրդներն ամենաինտենսիվ կապեր են ունեցել Փոքր Ասիայում և Հյուսիսային Միջագետքում ապրող ժողովուրդների հետ: Կովկասի բնակչության զարգացման վրա որոշակիորեն ազդել են նաև Միջերկրական ծովի ափերին և Եվրասիական տափաստաններում ընթացող գործընթացները: |
| **Աղբյուր** | ● Քարի դարում Վրաստանի տարածքում ապրող մարդկանց մասին տեղեկություններ ունենք հնագիտական տվյալների միջոցով: Ուշ բրոնզի դարի ժամանակաշրջանից հնագիտական տվյալների հետ մեկտեղ հետաքրքիր տեղեկություններ ենք ստանում սեպագիր թիթեղներից և վիմագրական հուշարձաններից:<br>● Քարի, բրոնզի և երկաթի դարաշրջանի հասարակությունը համալիր նկարագրելու համար հնագետներն օգտվում են հնագիտական մշակույթներից:<br>● Գիտնականները հաճախ են վիճում այն մասին, թե ինչի հիման վրա պետք է առանձնացվի հնագիտական մշակույթը, և պատմական ինչ գործընթացներ են կապված դրա ձևավորման, զարգացման, անկման հետ:<br>● Սեպագիր տախտակներն ու վիմագրական հուշարձանները փոխանցում են տարբեր տեսակի տեքստեր (օրենսդրական հուշարձաններ, կրոնական տեքստեր, թագավորական տարեգրություններ, գրական հուշարձաններ, նամակներ և այլն), դրանք գիտնականների կողմից տարբեր ինտենսիվությամբ օգտագործվում են Հին Արևելքի հասարակությունն ուսումնասիրելու համար: |
| **Հասարակություն** | ● Քարի դարում տոհմանական համայնքը հասարակական կազմակերպման միակ ձևն էր:<br>● Մոգությունը նախնադարյան մարդու կարևորագույն աշխարհայացքային հիմքն էր, սակայն, գիտնականների միջև կարծիքների տարբերություն կա՝ կապված նախնադարյան կրոնների էության և դասակարգման սկզբունքների հետ:<br>● Հին արևելյան ժամանակաշրջանում հասարակության հիմնական բջիջը համայնքն էր, իսկ տնտեսության արտադրության ձևը հիմնականում կոլեկտիվ էր:<br>● Հին արևելյան հասարակությունը ներառում էր ազատ և ոչ ազատ սոցիալական խմբերի, որտեղ ազատության բոլոր տեսակի սահմանափակումներն ընկալվում էին որպես ստրկություն:<br>● Հին արևելյան համալիր հասարակությունը կառավարվում էր օրենքներով, որոնց առաջին ծածկագրումը նույնպես կապված է այս ժամանակաշրջանի հետ:<br>● Հին արևելյան հասարակության կրոնը բազմազան է՝ հիմնականում ներկայացված բազմաստվածային (մարդաբանական/ոչ մարդաբանական) դիցարանով, կամ դուալիստական հավատով և հենց միաստվածության ձևով նույնպես: |
| **Իշխանություն** | ● Նախնադարյան հասարակության մեջ իշխանության համար պայքարը չէր կրում ինստիտուցիոնալացված բնույթ:<br>● Հին Արևելքում արքայատոհմերի, քաղաքների, տարածքային կայսրությունների պայքարը սերտորեն կապված էր կրոնի և պաշտամունքի հետ: Այստեղ աշխարհիկ և հոգևոր իշխանություններն իրարից տարանջատված չէին:<br>● Թագավորական իշխանության խորհրդանիշներ էին հանդիսանում մոնումենտալ հուշարձաններն ու տաճարները, որոնք բնորոշ էին Հին արևելյան աշխարհին:<br>● Հին արևելյան ժամանակաշրջանին բնորոշ են կենտրոնացված իշխանությունը և իշխանության կենտրոնացումը մեկ անձի ձեռքում, չնայած այն հանգամանքին, որ պետական կառավարումը ներկայացված է ինչպես քաղաք-պետություններով, այնպես էլ կենտրոնացված պետական և տարածքային կայսրությունների տեսքով: |

| | |
|---|---|
| **Պատմական իրադարձություն/ գործընթաց** | ● Մարդկության պատմության մեջ առաջին պետությունները ձևավորվել են մեծ գետերի երկայնքով:<br>● Հին արևելյան ժամանակաշրջանում գոյություն է ունեցել դիվանագիտություն և միջազգային հարաբերությունների լավ գործող համակարգ, որը Ք.ա. IV-III-II-I հազարամյակներում գործել է տարբեր ինտենսիվությամբ:<br>● Հին Արևելքում սոցիալական-քաղաքական խնդիրների լուծումը միահյուսված էր հովանավոր աստվածությունների և պաշտամունքային ծառայողների հետ:<br>● Հին Արևելքի ժամանակաշրջանում գոյություն են ունեցել պետությունների մի քանի տեսակներ՝ քաղաք-պետություններ, կենտրոնացված միապետություն և ցամաքային կայսրություն, որը կարողացել է միավորել Միջին և Մերձավոր Արևելքի քաղաքակրթական տարածքը մեկ իշխանության ներքո:<br>● Քոչվոր ժողովուրդների արշավանքները մեծ վտանգ էին ներկայացնում Հին արևելյան քաղաքակրթությունների համար:<br>● Վրաստանի տարածքը հանդիսանում էր Հին արևելյան աշխարհի հյուսիսային ծայրամասը, ուստի նվազագույն տեղեկություններ են պահպանվել վրացալեզու միավորումների միջազգային հասարակական-քաղաքական գործընթացներին ներգրավվածության մասին: |

**Միջնակարգ աստիճան**

**Թեմա 2. Քարի և բրոնզի դար**

| Նպատակային հասկացություն | Աշակերտը պետք է հասկանա, որ. |
|---|---|
| **Ժամանակ** | ● Հնագույն դարաշրջանը կապված է միջերկրածովյա ժողովուրդների, հատկապես հունական տարրի կողմից հեգեմոնիայի ձեռքբերման հետ:<br>● Հին դարաշրջանն ընդգրկում է էլլինական, հելլենիստական և հռոմեական ժամանակաշրջանները: Այս բաժանումը ուշ շրջանի է և գիտական մեկնաբանության արդյունք է:<br>● Գիտնականների շրջանում հաճախ է քննարկվում, թե որ բնութագրիչները պետք է սահմանեն հնագույն դարաշրջանի սկիզբը կամ ավարտը:<br>● Էլլինական (հունական) պատմության պարբերացումը կապված է հույների բնակման տարածքների, ապրելակերպի, մշակութային ընկալումների և իշխանության գերիշխող ձևի փոփոխության հետ:<br>● Մենք Հռոմի պատմությունը պարբերացնում ենք իշխանության ձևի փոփոխությամբ և առանձնացնում թագավորների կառավարման, հանրապետական և կայսերական կառավարման շրջաններ:<br>● Անտիկ ժամանակաշրջանում հունահռոմեական աշխարհի հետ սերտ կապի շնորհիվ տիպիկ պարբերացման սկզբունքները արդիական են նաև այս դարաշրջանի Վրաստանի համար:<br>● Հույներն ու հռոմեացիներն ունեին ժամանակի հաշվառման տարբեր համակարգեր, այս առումով Հռոմն ավելի նախատեսել է նախորդ քաղաքակրթության (Եգիպտոս) փորձը: |
| **Տարածություն** | ● Հնագույն տարածության կենտրոնն էին Միջերկրական և Սև ծովի ավազանները:<br>● Հունական գաղութացումը, Ալեքսանդրի արշավանքը և հռոմեական նվաճումները վճռական ազդեցություն են ունեցել հնագույն աշխարհագրական-քաղաքական տարածության ձևավորման վրա:<br>● Աշխարհագրական և կլիմայական գործոնները մեծապես որոշել են հույների և հռոմեացիների ապրելակերպը և քաղաքական-տնտեսական կազմակերպման տեսակը:<br>● Կովկասը գտնվում էր հնագույն տարածության ծայրամասում և հանդիսանում էր այս տարածության անբաժանելի մասը: Դա հաստատում են ինչպես քաղաքական-տնտեսական շփումները, այնպես էլ պատմագիտական հնագիտական և վիմագրական աղբյուրներն ու դիցաբանական պատմությունները:<br>● Կովկասը հռոմեա-պարթևական և հռոմեա-սասանյան դիմակայությունների ժամանակաշրջանում երկու խոշորագույն կայսրությունների շահերի բախման տարածք է:<br>● Անտիկ ժամանակաշրջանի տարբեր հատվածներում հունահռոմեական գերիշխանությամբ փոխվում են տվյալ տարածքի քաղաքական և մշակութային կենտրոնները:<br>● Հնագույն շրջանում է ձևավորվել աշխարհագրությունը, որպես գիտություն: Հնագույն աշխարհագրագետները բավականին լավ գիտեին իրենց դարաշրջանի աշխարհը: Նրանց հետաքրքրության ոլորտում էր հայտնվել նաև Կովկասը: |

| | |
|---|---|
| **Աղբյուր** | • Պատմագիտությունը, որպես անցյալն ուսումնասիրող վերլուծաբանական գիտություն, ստեղծվել և զարգացել է Հին Հունաստանում: Դա պայմանավորված էր հունահռոմեական աշխարհին բնորոշ աշխարհը վերլուծական կերպով ճանաչելու ցանկությամբ:<br>• Անտիկության մասին մեզ հիմնականում պատմում են պատմագրական, վիմագրական, հնագիտական աղբյուրները: Կարևոր աղբյուրներ են նաև դիցաբանությունը, լեզվաբանությունը և գեղարվեստական գրականությունը: Հնագույն աղբյուրների վերլուծության և մեկնաբանության հարցը գիտնականների քննարկման առարկա է:<br>• Հնագույն դարաշրջանի Վրաստանի պատմության վերակառուցումը մեծապես տեղի է ունենում հենց հունահռոմեական աղբյուրների օգնությամբ:<br>• Տարբեր է հնագույն աղբյուրների հուսալիության աստիճանը: Հուսալիության աստիճանը պայմանավորում են աղբյուրի տեսակը, գրավոր աղբյուրի դեպքում՝ հեղինակի տեղեկացվածությունը, նրա հասանելիությունը սկզբնաղբյուրին, նրա քաղաքական-հասարակական դիրքորոշումն ու ժանրային առանձնահատկությունները:<br>• Պատմական իրադարձությունների, էթնոսների և աշխարհայացքի գնահատման մեջ հնագույն ժամանակաշրջանում ստեղծված հունահռոմեական եզրույթները (օրինակ՝ բարբարոս, վանդալիզմ...) օգտագործվում են նաև արդի ժամանակներում: |
| **Հասարակություն** | • Ամբողջ հնագույն ժամանակվա ընթացքում գերիշխողը ծովային և քաղաքային մշակույթն է:<br>• Չնայած քաղաքական կազմակերպման ձևերի բազմազանությանը, աշխարհագրական տարածվածությանը և պոլիսների փոխադարձ դիմակայությանը՝ հունական աշխարհն ուներ կտրուկ արտահայտված ինքնության միջոցներ, որոնք ստեղծում էին հելլենիստական մշակութային ինքնօրինակություն:<br>• Հնագույն դարաշրջանին բնորոշ է զարգացումը արևմտյան-արևելյան մշակութային- արժեքային հակամարտության համատեքստում: Արևելքը, որը միավորված էր Պարսկական կայսրությունում, հելլենների համար համարվում էր մշակութային «ուրիշ»:<br>• Հնագույն ժամանակաշրջանում հնարավոր է դարձել հին արևելյան տարածության մեծ մասը էլլինական ազդեցությունը մեջ ներգրավել:<br>• Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքը տրամագծորեն փոխեց ինչպես հասարակական կյանքի ձևերը, այնպես էլ սկիզբ դրեց հելլենիզմին՝ իր հստակ արտահայտված ինքնության միջոցներով, որոնք հիմնվում էին գլոբալիստական սկզբունքների վրա:<br>• Հնագույն հասարակությունը ստրկատիրական հասարակություն է, որի տնտեսական ու հասարակական կարիքների համար մեծ նշանակություն ուներ ստրկական աշխատանքը:<br>• Հանրապետական ժամանակաշրջանի հռոմեական հասարակությունը զարգանում էր սոցիալական և հասարակական դասերի դիմակայության պայմաններում:<br>• Հանրապետական ժամանակաշրջանի հռոմեական հասարակությունը այնքան էլ բաց չէր մշակութային բազմազանության նկատմամբ: Կայսերական կառավարման ժամանակաշրջանում հռոմեական հասարակությունը դառնում է ավելի բաց, բազմամշակույթ ու բազմազգ:<br>• Հնագույն ժամանակաշրջանի միջերկրածովյա տարածքի համար գերիշխող էր հունահռոմեական դիցարանը, սակայն հենց այս ժամանակաշրջանում են առաջանում դուալիստական և միաստվածային կրոնները:<br>• Հնագույն ժամանակաշրջանի Կոլխեթին և Իբերիայի հասարակությունը զարգանում է Արևելյան և Արևմտյան, իրանական և հունահռոմեական աշխարհների քաղաքական-մշակութային հատման սահմանագծին: |

| | |
|---|---|
| **Իշխանություն** | ● Հին աշխարհին բնորոշ է իշխանության հիմնական ձևերի հայեցակարգային ըմբռնումը և պետության քաղաքական զարգացման ձևերի մասին բաց և լայն քննարկումը:<br>● Քաղաքական ձևերի բազմազանությունը և տարբեր քաղաքական գաղափարների ու կառույցների դիմակայությունը հունական քաղաքական մշակույթի անբաժանելի մասն են:<br>● Դասական դարաշրջանի հունական և հանրապետական շրջանի հռոմեական պետության կազմակերպման իդեալը հիմնված էր իշխանության տարանջատման սկզբունքի վրա, իսկ արևելյան կայսրությունները զարգանում էին միանձնյա իշխանության համատեքստում:<br>● Ժողովրդավարությունը, որպես կառավարման ձև, հնագույն ժամանակաշրջանի արդյունք է:<br>● Ժամանակակից աշխարհը իշխանության ձևերի և քաղաքական կազմակերպման առումով մեծ չափով հիմնված է հնագույն հիմքի վրա:<br>● Ինչպես հունական, այնպես էլ հռոմեական քաղաքական մշակույթը իրենց զարգացման հետագա փուլում շատ բան են վերցնում իշխանության արևելյան ձևերից: |
| **Պատմական իրադարձություն/ գործընթաց** | ● Հնագույն ժամանակաշրջանում հունական գաղութացումն ընդգրկում էր ինչպես Միջերկրական ծովի, այնպես էլ Սև ծովի ավազանը:<br>● Հնագույն շրջանում Արևելյան և Արևմտյան/միջերկրածովյա պետությունները հակադրվում էին միմյանց:<br>● Ալեքսանդր Մակեդոնացու գործունեությունը հիմք դրեց հելլենական և արևելյան մշակույթների միավորմանը (հելլենիզմին):<br>● Հնագույն դարաշրջանում ռազմական գերազանցության հաշվին Հռոմը կարողացել է ընդարձակվել Եվրոպայի, Ասիայի և Աֆրիկայի տարածքներում, սակայն դեպի արևելք այն փորձեց ընդարձակել Սասանյան Պարսկաստանը:<br>● Հնագույն պատմության մեջ ըստ բեկումնային պատմական իրադարձությունների-գործընթացների փոխվում են Հին աշխարհի քաղաքական և մշակութային կենտրոնները, աշխարհագրական տարածությունը և սոցիալ-տնտեսական միջավայրը, ստեղծվում են նոր պետություններ և կայսրություններ:<br>● Հնագույն պատմության կարևոր իրադարձությունների պատճառների, դրանց հետևանքների և մեկնաբանությունների մասին քննարկումը ժամանակակից գիտական ուսումնասիրությունների և քննարկումների օրգանական մաս է:<br>● Հնագույն ժամանակաշրջանի Վրաստանում տեղի ունեցող պատմական գործընթացները սերտորեն կապված էին համաշխարհային պատմական իրադարձությունների և գործընթացների հետ: Անհնար է հնագույն դարաշրջանի Վրաստանի պատմությունն ընկալել առանց գլոբալ համատեքստի: |

## ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### ՔԱՂՎԱԾՔ ՈՒՂԵՑՈՒՅՑԻՑ

**ա) Առարկայական նպատակային հասկացություններ.** Ազգային ուսումնական պլանի յուրաքանչյուր արդյունք կապվում է առարկայական նպատակային հասկացության հետ: Աստիճանի մակարդակում արդյունքների հետ մեկտեղ դրանց (արդյունքներ/նպատակային հասկացություններ) տիրապետումը, առարկայի ուսանում-ուսուցման երկարաժամկետ նպատակն է: Ստորև թվարկված են նպատակային հասկացություններ «Պատմություն» առարկայի համար: Յուրաքանչյուր հասկացության կողքին փակագծերում գրված է, թե որ արդյունքի հետ է այն կապվում.

**Պատմական աղբյուր** (Պատմ.միջն.՝1,2,4,5)
**Ժամանակ (պատմական ժամանակաշրջան)** (Պատմ.միջն.՝1,2,3,4,5,6)
**Տարածություն (շրջակա միջավայր, տարածք)** (Պատմ.միջն.՝1,2,3,4,5,6)
**Հասարակություն** (Պատմ.միջն.՝ 1,2,3,4,5,6)
**Իշխանություն** (Պատմ.միջն.՝ 3,4,5,6,7,8)
**Պատմական իրադարձություն/գործընթաց** (Պատմ.միջն.՝ 3,4,5,6)

Երկարաժամկետ նպատակները (արդյունքները և նպատակային հասկացությունները) ճշգրտում և ավելի հստակ են դարձնում հասկացության հետ կապված (ա) ենթահասկացությունները, (բ) կայուն պատկերացումները և (գ) աստիճանի հանգուցային հարցերը:

| Նպատակային հասկացություն | Ենթահասկացություններ | Հարցեր/ենթահարցեր |
|---|---|---|
| **Պատմական աղբյուր** | Հնագիտական հուշարձաններ և արտեֆակտ | Կոնկրետ հնագիտական հուշարձան/ արտեֆակտ |
| | Վիմագրական նյութ | Կոնկրետ վիմագրական հուշարձան |
| | Պատմական աղբյուրներ | Կոնկրետ պատմական աղբյուր (վրացական, օտարերկրյա) |
| | Փաստաթղթեր | Կոնկրետ իրավական փաստաթուղթ |
| | Գրական ստեղծագործություններ | Կոնկրետ գրական ստեղծագործությունը, որպես պատմական աղբյուր |
| | Հուշեր և եպիստոլարական ժառանգություն | Կոնկրետ անձի հուշեր և նամակներ |
| | Աուդիո-ֆոտո-ֆոնո նյութեր | Աուդիո-ֆոտո-ֆոնո նյութեր՝ կապված կոնկրետ պատմական իրադարձության հետ |
| **Ժամանակ (պատմական ժամանակաշրջան)** | Ժամանակի հաշվառման համակարգ | Ժամանակի հաշվառման կոնկրետ համակարգ (օրացույց, պարբերացման և թվականության համակարգ) |
| | Պատմական դարաշրջան, հնագիտական ժամանակաշրջան | Կոնկրետ դարաշրջան/պատմական ժամանակաշրջան |
| | Որևէ անհատի անվան հետ նույնացված դարաշրջան | (Օրինակ՝ Թամար թագուհու դարաշրջան, Թագուհի Վիկտորիայի դարաշրջան) |

| | | |
|---|---|---|
| | Որևէ մասշտաբային պատմական իրադարձության հետ նույնացված դարաշրջան | (Օրինակ՝ խաչակրաց արշավանքների դարաշրջան, Աշխարհագրական Մեծ հայտնագործությունների դարաշրջան) |
| **Տարածություն (շրջակա միջավայր, տարածք)** | Պատմամշակութային տարածք | Կոնկրետ պատմաաշխարհագրական տարածք (օրինակ՝ Մեզոամերիկա, միջերկրածովյա տարածք) |
| | Պատմաաշխարհագրական տարածք | Կոնկրետ պատմաաշխարհագրական միավոր (Օրինակ՝ Հարավային Միջագետք, Ատտիկա, Լակոնիա) |
| | Հնում գոյություն ունեցած պետության/կայսրության միավոր/միավորներ (Օրինակ՝ Քարթլիի թագավորության էրիսթավիություններ, Աքեմենյան Իրանի սատրապություններ) | Հնում գոյություն ունեցած պետության/կայսրության կոնկրետ վարչական միավոր/միավորներ (օրինակ՝ Քարթլիի թագավորության էրիսթավիություններ, Աքեմենյան Իրանի սատրապություններ) |
| | Պաշտամունքային քաղաքներ/վայրեր | Կոնկրետ պաշտամունքային քաղաքներ/վայրեր (օրինակ՝ Հին Մցխեթա, Դելֆոս, «Սուրբ երկիր») |
| **Հասարակություն** | Առօրյա կյանք (ամենօրյա կենցաղ ու կյանք) | Այս կամ այն պատմական դարաշրջանին բնորոշ ազգագրական կենցաղ |
| | Կրոն | Կոնկրետ կրոն (որպես աշխարհայացք) |
| | Գաղափար/ գաղափարախոսություն | Կոնկրետ գաղափար/ գաղափարախոսություն |
| **Իշխանություն** | Կառավարման ձև | Կոնկրետ կառավարման կառուցվածք |
| | Հասարակական կազմակերպություն | Կոնկրետ հասարակական կազմակերպության ձևավորման պատմություն |
| | Կառավարման համակարգի հետ կապված բարեփոխում | Կառավարման համակարգի փոփոխման հետ կապված կոնկրետ բարեփոխում |
| **Պատմական իրադարձություն/ գործընթաց** | Պատմական անհատ | Կոնկրետ պատմական անհատների գործունեություն |
| | Բարեփոխում | Կոնկրետ բարեփոխում |
| | Ապստամբություն | Կոնկրետ ապստամբություն |
| | Հեղափոխություն | Կոնկրետ հեղափոխություն |
| | Դիվանագիտական բանակցություն/ զինադադար/ պայմանագիր | Կոնկրետ զինադադար/ դիվանագիտական բանակցություն/ պայմանագիր |
| | Ճակատամարտ/պատերազմ | Կոնկրետ ճակատամարտ/ պատերազմ |

| Նպատակային հասկացություն | Նպատակային հասկացության հետ կապված կայուն պատկերացումներ |
|---|---|
| **Պատմական աղբյուր** | • Անցյալի մասին տեղեկություններ պատմաբանները ստանում են աղբյուրներից։<br>• Անցյալն ուսումնասիրելիս պատմաբանները հիմնվում են տարբեր տեսակի աղբյուրների (նյութական, ազգագրական, գրավոր, լեզվաբանական, կինո-ֆոտո-ֆոնո փաստաթղթեր) վրա։<br>• Ոչ բոլոր աղբյուրներն են հավասարապես վստահելի։<br>• Աղբյուրներից ստացված տեղեկությունները միանշանակ չեն, ուստի դրանց մեկնաբանությունը պատմաբանների միջև քննարկման առարկա է։ |
| **Ժամանակ (պատմական Ժամանակաշրջան)** | • Պատմությունը ժամանակի մեջ ընթացող փոփոխականությունն ուսումնասիրող ոլորտ է։<br>• Մարդկության անցած ճանապարհը բաժանված է տարբեր պատմական դարաշրջանների և ժամանակաշրջանների։<br>• Տարբեր ժողովուրդներ ունեին ժամանակի հաշվառման տարբեր համակարգեր։ |
| **Տարածություն (շրջակա միջավայր, տարածք)** | • Աշխարհագրական միջավայրը և աշխարհագրական գիտելիքներն ազդում են մարդկային հասարակության զարգացման վրա։<br>• Շփման հաճախականությունը հանգեցնում է մեծ/փոքր սոցիալ-մշակութային տարածքների ստեղծման։<br>• Կոնկրետ պատմաաշխարհագրական տարածքներ ունեն որոշակի տնտեսական, ռազմավարական և մշակութային նշանակություն։ |
| **Հասարակություն** | • Պատմականորեն շատ հասարակություններ են գոյություն ունեցել, սակայն նրանցից յուրաքանչյուրին բնորոշ էին ընդհանուր հատկանիշներ. նրանց անդամներն ունեին ընդհանուր ինքնություն, շահեր, մտահոգություններ և համաձայնում էին վարքագծի կանոնների և արժեքների շուրջ։<br>• Հասարակությունը բաժանված է ավելի փոքր հասարակական խմբերի։<br>• Փոքր հասարակությունները սովորաբար ավելի մեծ հասարակության մաս են կազմում։<br>• Հասարակության անդամները տարբեր վերաբերմունք ունեն բազմազանության նկատմամբ։ |
| **Իշխանություն** | • Իշխանության համար պայքարը պատմության անբաժանելի մասն է։<br>• Իշխանության համար պայքար տեղի է ունենում ինչպես անհատների, այնպես էլ հասարակական խմբերի միջև։ Պայքարելիս նրանք օգտագործում են երկրում առկա հասարակական-քաղաքական կառույցները։<br>• Իշխանություն ձեռք բերելու և պահպանելու համար անհրաժեշտ միջոցներ են ռեսուրսների (ֆինանսներ, մարդկային ռեսուրսներ) տիրապետումը, խորհրդանիշները, գաղափարախոսությունը։<br>• Որոշ հասարակություններում իշխանությանը տիրապետում էին միանձնյա, իսկ որոշ տեղերում այն բաշխված էր մարդկանց/ հասարակական խմբերի միջև։<br>• Ժողովրդավարական պետության իշխանության աղբյուրը ժողովուրդն է։ |
| **Պատմական իրադարձություն/ գործընթաց** | • Յուրաքանչյուր պատմական իրադարձություն ունի իր սեփական պատճառը/ պատճառները և հետևանքը/հետևանքները։<br>• Պատմաբանները հաճախ բանավիճում են պատմական իրադարձությունների պատճառների և հետևանքների շուրջ։<br>• Որոշ պատմական իրադարձություններ ունեն տեղական, իսկ որոշները՝ համաշխարհային նշանակություն։<br>• Պատմական փաստերն ու իրադարձությունները կարելի է տիպաբանորեն խմբավորել ըստ քաղաքական, սոցիալական, տնտեսական, մշակութային չափանիշների։ |

## ԱՇԱԿԵՐՏԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ

Ուսանում-ուսուցման գործընթացի երկարաժամկետ կողմնորոշման հետ անմիջականորեն կապված է աշակերտի գնահատումը: Ուսուցումը և գնահատումը նույն մեդալի երկու կողմերն են, և չեն հանդիսանում երկու մեկուսացված բաղադրիչներ: Աշակերտը կարող է ուղղակիորեն գնահատվել ուսումնական գործընթացում՝ առանց հատուկ նշանակված հարցումների և ստուգողական գրավորների:

**Ազգային ուսումնական պլանում կիրառվում է երկու տեսակ գնահատում՝ զարգացնող և որոշող:**

| | Զարգացնող | Որոշող |
|---|---|---|
| **Նպատակներ** | Բարելավել ուսանման որակը:<br>Նպաստել աշակերտի առաջընթացին և զարգացմանը: | Որոշել աշակերտի ակադեմիական ձեռքբերումը՝ կապված առարկայական ուսումնական պլանի արդյունքների հետ: |
| **Խնդիրներ** | Գնահատել գիտելիքի կառուցքավորման և գիտելիքները փոխկապակցելու գործընթացը:<br>Որոշել նախնական գիտելիքը/պատկերացումները:<br>Աշակերտի կողմից իր իսկ հզոր և թույլ կողմերի որոշման ունակությունը գնահատել:<br>Աշակերտի կողմից սեփական առաջընթացին նպաստելու համար գիտակցված քայլեր կատարելու ունակությունը գնահատել:<br>Գնահատել գիտելիքի յուրացման բոլոր երեք կարգերը:<br>Գնահատել գիտելիքների համակցությունը գործառնորեն կիրառելու ունակությունը: | Գնահատել գիտելիքները փոխկապակցելու ունակությունը:<br>Գնահատել գիտելիքի բոլոր երեք կարգերի կիրառման ունակությունը:<br>Գնահատել գիտելիքների համակցությունը գործառնորեն կիրառելու ունակությունը: |
| **Հաջողության չափանիշը** | Իրականացված առաջընթացը՝ կապված նախապես ունեցած արդյունքների/նախնական մակարդակի համեմատ: | Ձեռքբերման մակարդակը առարկայական ուսումնական պլանի արդյունքների համեմատ: |
| **Գնահատողը և գնահատման ձևերը** | **Ուսուցիչ.** բանավոր կամ գրավոր հետադարձ կապ, խրախուսող ցուցումներ, խորհրդանշական նշաններ և այլն:<br>**Աշակերտներ.** ինքնագնահատմամբ, փոխադարձ գնահատմամբ: | Ուսուցիչ. միավոր (կարող է ուղեկցվել մեկնաբանությամբ՝ ուժեղ և թույլ կողմերի մեկնաբանություններով, թերությունները շտկող ցուցումներով): |

**Որոշող գնահատման համար ըստ ազգային ուսումնական պլանի օգտագործվում է երկու մոդել.**

**Մոդել 1.** Գնահատական է նշանակվում ընթացիկ դասարանական, տնային և ամփոփիչ առաջադրանքների բաղադրիչներից, իսկ կիսամյակի միավորը հաշվարկվում է այս երեք բաղադրիչների միջին թվաբանականի հիման վրա:

**Մոդել 2.** Գնահատական է նշանակվում միայն ամփոփիչ առաջադրանքներից: Դրանց թիվը որոշում է հենց դպրոցը՝ ելնելով դպրոցական ուսումնական ծրագրի առաջնահերթություններից: Դպրոցն իրավունք ունի տարբեր դասարաններում, տարբեր առարկաներից օգտագործել որոշող գնահատման տարբեր մոդելներ: Ստորև ներկայացված է գնահատման աղյուսակ, որը ցույց կտա, թե ուսանում-ուսուցման գործընթացում ինչ նրբերանգներ պետք է գնահատել գնահատականով:

| **Ընդհանուր չափանիշ (ընդհանուր)** | **Գնահատման չափանիշներ (կոնկրետ)** | **Միավոր** | **Մեկնաբանություն** |
|---|---|---|---|
| Աշակերտն ակտիվորեն ներգրավված է ուսումնական գործընթացում: | Աշակերտը ճիշտ է հասկացել համալիր առաջադրանքի պայմանը: | | |
| Աշակերտը դրսևորում է փաստացի նյութի իմացություն, ընթացակարգային գիտելիքի օգտագործմամբ ընդհանրացնում է նպատակային հասկացության հետ կապված տեսակետները: | Առարկայական հարցը/ հարցերը: | | |
| Աշակերտը կարող է ընդհանրացնել համալիր առաջադրանքի գնահատման չափանիշի տեսքով ձևակերպված տեսակետները: | Համալիր առաջադրանքի գնահատման չափանիշ 1. | | |
| | Համալիր առաջադրանքի գնահատման չափանիշ 2. | | |

**Ամփոփիչ (զարգացնող և որոշող) գնահատում**

Ամփոփիչ գնահատումը պետք է չափի, թե որքան լավ է աշակերտը տիրապետում և / կամ օգտագործում նպատակային հասկացությունները: Հասկացությունների տիրապետման աստիճանը գնահատելու համար այսպես կոչված ՈՒԴԱԿ աստիճանակարգումը (տաքսոնոմիան) (դիտարկելի ուսումնական արդյունքների կառուցվածքի տաքսոնոմիա, անգլերեն - SOLO – Structure of Observed Learning Outcomes), որը հանդիսանում է հարթակ գնահատման չափանիշների մշակման համար: ՈՒԴԱԿ տաքսոնոմիան չափում է աշակերտների նվաճումներն ըստ 5 մակարդակների:

| |
|---|
| **SOLO 1. Նախակառուցվածքային կամ կապակցված մակարդակ**<br>Աշակերտն ընդհանրապես չի հասկանում հարցը, օգտագործում է չհամապատասխանող, ոչ պատշաճ տեղեկատվություն և/կամ ընդհանրապես շեղված է հարցից: |
| **SOLO 2. Ունիկառուցվածքային կամ միակապ մակարդակ**<br>Աշակերտը կարող է քննարկել միայն մեկ ասպեկտ և հաստատել պարզ, ակնհայտ / հստակ կապեր: Աշակերտը կարող է օգտագործել տերմինաբանություն, բանավոր փոխանցել (մտաբերել), կատարել պարզ հրահանգներ/ ալգորիթմներ, շրջասել, նույնականացնել, անվանել կամ հաշվել: |
| **SOLO 3. Բազմակառուցվածքային կամ բազմակապ մակարդակ**<br>Աշակերտը կարող է առանձին քննարկել մի քանի ասպեկտ՝ իրարից առանձնացված, առանց միմյանց հետ կապի: Նա կարող է թվարկել, նկարագրել, դասակարգել, համադրել, օգտագործել մեթոդներ, կառուցվածք, կատարել ընթացակարգեր և այլն: |
| **SOLO 4. Հարաբերական կամ ամբողջացված մակարդակ**<br>Աշակերտը կարող է հասկանալ կապը մի քանի ասպեկտների միջև, ինչպես նաև գիտի այն, թե ինչպես են այդ ասպեկտները համադրվում և ինչպես են ստեղծում ամբողջ, ամբողջականություն: Նրա մտածողությունը կառուցքավորված է, ուստի աշակերտն ունի կարողություն, որ համեմատի, կապակցի, վերլուծի, կիրառի տեսությունը, բացատրի խնդիրը՝ պատճառների և հետևանքների առումով: |
| **SOLO 5. Ընդլայնված վերացական մակարդակ**<br>Աշակերտը կարող է ընդհանրացնել կառուցվածքը տրվածից/առաջարկվողից դուրս, ընկալել կառուցվածքը բազմաթիվ տարբեր տեսանկյուններից/հեռանկարներից և գաղափարները տեղափոխել նոր ոլորտ: Նա կարող է ընդհանրացնել, վարկած արտահայտել, քննադատել կամ ձևակերպել տեսություն: |

Ամփոփիչ գնահատման համար կիրառվում են համալիր առաջադրանքներ, որոնք պահանջում են գործնական համատեքստում նպատակային հասկացություններով սահմանված գիտելիքների ինտեգրված օգտագործում:

Ձեզ ենք ներկայացնում ըստ համալիր առաջադրանքի կոնկրետ նմուշի ստեղծված զարգացնող գնահատման խորագիր:

Ստորև բերված գնահատման խորագիրը կարող է օգտագործվել ինչպես աշակերտի ձեռքբերումները նպատակային հասկացությունների հետ կապված նկարագրելու, այնպես էլ զարգացնող մեկնաբանության համար:

Սա ուսուցչի աշխատանքային թերթիկն է, որի հիման վրա նա կոնկրետ հարցերի շրջանակներում կձևակերպի մեկնաբանություն՝ կապված տարբեր նպատակային հասկացությունների հետ: Այս մեկնաբանություններն ուսուցիչը, կապված տարբեր նպատակային հասկացությունների հետ, ուսանում-ուսուցման գործընթացում պետք է անի պարբերաբար:

**Զարգացնող գնահատման խորագրի նկարագրություն.**

Աղյուսակի առաջին հորիզոնական, տիտղոսային վանդակում տրված տեղեկությունը ընդգծում է այն, որ.

- Այս ձևով **բոլոր աշակերտները գնահատվում են անհատապես:**
- Աշակերտները գնահատվում են՝ **երկարաժամկետ նպատակների** կամ **առարկայական նպատակային հասկացությունների** համեմատ:
- Առարկայական հասկացության վրա աշխատանքը տեղի է ունենում **կոնկրետ (և ոչ ընդհանուր) առարկայական հարցի վրա** հիմնվելով:
- Առարկայական հարցի հետ կապված աշակերտի գիտելիքները ստուգվում են **համալիր առաջադրանքի միջոցով:**

Երկնագույն (մոխրագույն) հորիզոնական սյունակում տրված են նպատակային հասկացությունները (այստեղ ենթադրվում է այնքան ուղղահայաց սյունակ, որքան նպատակային հասկացություն կա կոնկրետ առարկայից), իսկ երկնագույն (մոխրագույն) ուղղահայաց սյունակում տրված են այս նպատակային հասկացությունների ըմբռնման մակարդակները (SOLO տաքսոնոմիայի համաձայն): Երկնագույն սյունակում տրված է ընդհանուր նկարագրություն, իսկ հասկացության և մակարդակի հատման տեղում այս նկարագրությունները կիստակեցվեն ստորև բերված օրինակների համաձայն:

Աշակերտի անուն, ազգանուն. ____________________________________________

Առարկան և նպատակային հասկացությունը. ______________________________

Հարցը. _____________________________________________________________

| Չափանիշ | Նպատակային հասկացություն 1 | | Նպատակային հասկացություն 2 | | Նպատակային հասկացություն 3 | |
|---|---|---|---|---|---|---|
| **Վերացական մակարդակ** Աշակերտը խորությամբ հասկանում է հարցի էությունը/ էական բնութագրերը, ինչը նրան հնարավորություն է տալիս ընդհանրացնել այս գիտելիքները/ նման այլ օրինակների հետ համեմատելու հնարավորություն է տալիս: Քննարկվող հարցը կապում է իր անձնական փորձի հետ: | | Նկարագրություն | | | Մեկնաբանություն | |
| **Հարաբերական մակարդակ** Աշակերտը հասկանում է քննարկվող հարցի էությունը, տեսնում է հիմնախնդրի հետ կապված էական կառուցվածքային միավորների միջև փոխհարաբերությունները: | Նկարագրություն | Մեկնաբանություն | Նկարագրություն | Մեկնաբանություն | Նկարագրություն | Մեկնաբանություն |
| **Բազմակառուցվածքային մակարդակ** Աշակերտն ունի միայն մի քանի, իրար հետ չկապակցված, առանց համակարգ զուգորդություն /պատկերացում՝ կապված քննարկվելիք հարցի հետ: | Նկարագրություն | Մեկնաբանություն | Նկարագրություն | Մեկնաբանություն | Նկարագրություն | Մեկնաբանություն |
| **Ունիկառուցվածքային մակարդակ** Աշակերտն ունի միայն մեկ ոչ կառուցքավորված զուգորդություն/ պատկերացում՝ կապված քննարկվելիք հարցի հետ: | Նկարագրություն | Մեկնաբանություն | Նկարագրություն | Մեկնաբանություն | Նկարագրություն | Մեկնաբանություն |
| **Նախակառուցվածքային մակարդակ** Աշակերտը հարցի հետ կապված չունի պատշաճ տեղեկություն: | Նկարագրություն | Մեկնաբանություն | Նկարագրություն | Մեկնաբանություն | Նկարագրություն | Մեկնաբանություն |

**Ինչպե՞ս պետք է արվի մեկնաբանություն զարգացնող գնահատման համար:**

Օրինակ՝ պատկերացնենք, որ աշակերտին սովորեցնում ենք Թամար թագուհու գործունեությունը և այդ հարցի հետ կապված տվել ենք հետևյալ համալիր առաջադրանքը.

Ծանոթացե՛ք Ղուլթլու-Արսլանի խմբավորման շարժման մասին անհայտ հեղինակի տեղեկություններին «Քարթլիի կյանքից», որտեղ իրադարձությունները նկարագրված են հօգուտ Թամար թագուհու: Պատկերացրե՛ք, որ Թամար թագուհու դարաշրջանում ապրող մատենագիր եք, որը բարեհաճ է տրամադրված թագուհու հակառակորդ Ղութլու Արսլանի նկատմամբ և աջակցում է «Իսանիի վրանի» հիմնմանը: Ստեղծե՛ք համառոտ «տարեգրություն», որտեղ Ղութլու Արսլանի խմբավորման շարժումը Թամար թագուհու անհայտ մատենագրից տարբեր մեկնաբանությամբ կներկայացնեք:

**Աշխատության մեջ/աշխատության ներկայացման մեջ հստակ ցո՛ւյց տվեք.**

1. Ի՞նչ գործոններով է պայմանավորված դարաշրջանի համաժամանակակից պատմաբանի միտումնավորությունը:
2. Ի՞նչ նրբերանգներով են տարբերվում Ղութլու-Արսլանի խմբավորման շարժման մասին ձեր և ձեր հակառակորդ պատմաբանի, օրինակ՝ Բասիլի սենեկապետի, տեսակետները միմյանցից: Ինչո՞վ է պայմանավորված տարբեր մեկնաբանությունների առկայությունը:
3. Ի՞նչ այլ աղբյուրներ կան Թամար թագուհու դարաշրջանի մասին: Որքանո՞վ են դրանք հուսալի:

Համալիր առաջադրանքն ուղղված է հասկանալու «Աղբյուր» նպատակային հասկացությունը և, համապատասխանաբար, դրա չափանիշները («Աշխատության մեջ/աշխատության ներկայացման ժամանակ հստակ ցո՛ւյց տուր» ենթավերնագրի տակ) կապված են «Աղբյուր» նպատակային հասկացության կայուն պատկերացումների հետ.

- Պատմաբանները անցյալի մասին տեղեկությունները վերցնում են աղբյուրներից:
- Անցյալն ուսումնասիրելիս պատմաբանները հիմնվում են տարբեր տեսակի աղբյուրների (նյութական, ազգագրական, գրավոր, լեզվաբանական, կինո-ֆոտո-ֆոնո-փաստաթղթեր) վրա:
- Ոչ բոլոր աղբյուրներն են հավասարապես վստահելի:
- Աղբյուրներից ստացված տեղեկությունը միանշանակ չէ, հետևաբար դրանց մեկնաբանությունը պատմաբանների միջև վեճի առարկա է:

Իհարկե, տարբեր աշակերտներ այս առաջադրանքը կկատարեն տարբեր որակով: Համապատասխանաբար, մեր կողմից էլ նրանց ձեռքբերումների գնահատումն ու զարգացնող մեկնաբանությունը պետք է տարբեր լինի: Ստորև գնահատված է 5 աշակերտների համալիր առաջադրանք Թամար թագուհու մասին, որոնցից առաջինը նախակառուցվածքային մակարդակի հետ է կապված, երկրորդը՝ ունիկառուցվածքային մակարդակի, երրորդը՝ բազմակառուցվածքային, չորրորդը՝ հարաբերական, հինգերորդը՝ վերացական: Յուրաքանչյուր աշակերտի դեպքում լրացված է երկու վանդակ՝ մեկն արտացոլում է, թե ինչ է արել աշակերտը և ինչ եզրահանգում ես արել դրա հիման վրա (նկարագրության) և երկրորդում արտացոլված է, թե ինչ խորհուրդ եմ տվել աշակերտին (մեկնաբանություն):

**Առաջին աշակերտի աշխատանքը. նախակառուցվածքային մակարդակ**

Աշակերտը չի կարողացել հասկանալ առաջադրանքի էությունը և դրա հետ կապված հարցերը, հետևաբար, ուսուցչի մեկնաբանությունը նախակառուցվածքային մակարդակի տողում կհայտնվի «Աղբյուր»նպատակային հասկացության սյունակում:

| **Նպատակային հասկացություն** | **Աղբյուր** | |
| --- | --- | --- |
| **Չափանիշ** | Նկարագրություն<br>**Ինչ արեց աշակերտը, և ինչ եզրակացություն արեցի դրա հիման վրա:** | Մեկնաբանություն<br>**Ինչ խորհուրդ տվեցի աշակերտին (զարգացնող գնահատում)** |
| **Նախակառուցվածքային մակարդակ**<br>Աշակերտը հարցի հետ կապված չունի պատշաճ տեղեկություն: | Աշակերտը չկատարեց առաջադրանքը, չկարողացավ կռահել Թամար թագուհու հետ կապված առաջադրանքի պայմանը (ստեղծել ընդդիմադիր տարեգրություն) | Հիշի՛ր, թե ինչ ես իմացել Թամար թագուհու մասին: Գտի՛ր լրացուցիչ տեղեկություն, կամ մտածի՛ր, թե որտեղից կարող ես իմանալ ավելին:<br><br>Մտաբերի՛ր դեպք, երբ միևնույն պատմությունը երկու մարդ տարբեր կերպ են պատմում և արտահայտում են տարբեր դիրքորոշումներ: |

**Երկրորդ աշակերտի աշխատանքը. ունիկառուցվածքային մակարդակ**

Աշակերտը հասկացավ առաջադրանքի էությունը, սակայն դրա հետ կապված հարցերին արձագանքում է միայն հանգուցային հարցերի հետ կապված, հետևաբար, ուսուցչի մեկնաբանությունը ունիկառուցվածքային մակարդակի տողում կհայտնվի «Աղբյուր» նպատակային հասկացության սյունակում:

| **Նպատակային հասկացություն** | **Աղբյուր** | |
| --- | --- | --- |
| **Չափանիշ** | Նկարագրություն<br>**Ինչ արեց աշակերտը, և ինչ եզրակացություն արեցի դրա հիման վրա:** | Մեկնաբանություն<br>**Ինչ խորհուրդ տվեցի աշակերտին (զարգացնող գնահատում)** |
| **Ունիկառուցվածքային մակարդակ**<br>Աշակերտը հարցի հետ կապված չունի պատշաճ տեղեկություն: | Աշակերտը հասկացավ առաջադրանքի էությունը, ստեղծեց «տարեգրության» նման մեկ պարբերությամբ պատմություն, սակայն, այս տեքստը ներառում է միայն մակերեսային գնահատողական բառեր (մասնավորապես, նշում է, որ «Թամարն այնքան էլ բարի չէ, ինչպես կարծում են մյուսները, որովհետև նա դաժանորեն վարվեց իր հակառակորդների հետ»: Կամ էլ. «Թամարի կողմնակից պատմաբանները ստում են և նրա վատ գործերի մասին չեն գրում»): Երևում է, որ աշակերտը ոչինչ չգիտի Թամարի դարաշրջանի հետ կապված փաստերի մասին: | Դու ճիշտ ես հասկացել առաջադրանքը, բայց երևում է, որ չես կարդացել ուսումնական նյութը: Խնդրում եմ, ուշադիր կարդա՛ և ճշգրտի՛ր, թե ինչում չես համաձայնում Թամարի պատմիչի հետ: |

**Երրորդ աշակերտի աշխատանքը. բազմակառուցվածքային մակարդակ**

Աշակերտն ունի բազմաթիվ զուգորդություններ՝ կապված ուսումնասիրվելիք հարցի հետ, սակայն նույն հարցի/գլխավոր գաղափարի հետ կապված նրա կողմից փոխանցված պատմությունները չունեն կարգավորված, հաջորդական տեսք: Համապատասխանաբար, ուսուցչի մեկնաբանությունը կհայտնվի բազմակառուցվածքային մակարդակի «Աղբյուր» նպատակային հասկացության սյունակում:

| **Նպատակային հասկացություն** | **Աղբյուր** | |
|---|---|---|
| **Չափանիշ** | Նկարագրություն<br>**Ինչ արեց աշակերտը, և ինչ եզրակացություն արեցի դրա հիման վրա:** | Մեկնաբանություն<br>**Ինչ խորհուրդ տվեցի աշակերտին (զարգացնող գնահատում)** |
| **Բազմակառուցվածքային մակարդակ**<br>Աշակերտը հարցի հետ կապված չունի պատշաճ տեղեկություն: | Աշակերտը ճիշտ հասկացավ առաջադրանքի էությունը և դրա հետ կապեց պարագրաֆում ներկայացված նյութը (մասնավորապես, նա նշեց , որ Թամարը վատ վարվեց, որովհետև զբաղեցրեց Դեմնա Բատոնիշվիլիին պատկանող գահը, անարդարացիորեն կալանավորեց Ղութլու Արսլանին): Սակայն, նա ուշադրությունը չի կենտրոնացնում առաջադրանքի գլխավոր գաղափարի վրա, չի բացահայտում Թամարի կողմնակից պատմիչի միտումնավորությունը: Առաջադրանքի ձևը նույնպես ունի բարելավման կարիք, մասնավորապես, աշակերտը մեզ պատմությունը չի փոխանցում այնպես, ինչպես դա հարիր է «տարեգրության», այլ տալիս է առանձին նախադասություններ՝ կապված հարցի հետ: | Դու ճիշտ ես հասկացել առաջադրանքի պայմանը: Կարդացել ես նաև պարագրաֆում տրված նյութը և կապել ես առաջադրանքի հետ, սակայն, խնդրում եմ առաջադրանքում հստակ ընդգծես, թե ինչում չես համաձայնում Թամարի պատմիչի հետ և հստակ նշես, թե ինչու ես կարծում, որ մարդիկ չպիտի հավատան նրա պատմածին:<br>Նաև նկատի ունեցիր, որ «տարեգրության» մեջ պատմությունը հետաքրքիր պատմության տեսքով պետք է փոխանցվի, որպեսզի ունկնդիրների համար ավելի հասկանալի լինի: |

**Չորրորդ աշակերտի աշխատանքը. հարաբերական մակարդակ**

Աշակերտը համակարգված և հետևողականորեն փոխանցում է նպատակային հասկացության հետ կապված պատմություններ: Փոխկապակցված կերպով դատողություն է անում նպատակային հասկացության էական բնութագրերի մասին: Ընդգծում է համալիր առաջադրանքի գնահատման չափանիշներով սահմանված նրբերանգները: Համապատասխանաբար, ուսուցչի մեկնաբանությունը կհայտնվի հարաբերական մակարդակի տողում «Աղբյուր» նպատակային հասկացության սյունակում:

| **Նպատակային հասկացություն** | **Աղբյուր** | |
|---|---|---|
| **Չափանիշ** | Նկարագրություն<br>**Ինչ արեց աշակերտը, և ինչ եզրակացություն արեցի դրա հիման վրա:** | Մեկնաբանություն<br>**Ինչ խորհուրդ տվեցի աշակերտին (զարգացնող գնահատում)** |
| **Հարաբերական մակարդակ**<br>Աշակերտը հարցի հետ կապված չունի պատշաճ տեղեկություն: | Աշակերտը հետաքրքիր և ստեղծագործաբար է փոխանցում Թամար թագուհու մասին տեղեկատվությունը: Նրա աշխատանքում ընդգծված են փաստեր, որոնք պայմանավորում են Թամարի պատմաբանի միտումնավորությունը (մասնավորապես, ասում է, որ պատմաբանը թագուհու մերձավորն է, նա թաքցնում է մի շարք փաստեր, օրինակ Գիորգի Երրորդի ճնշամիջոցները, որոնք նախորդում էին Թամարի գահակալմանը): | Դու հոյակապ ես հաղթահարել առաջադրանքի պայմանը: Քո աշխատանքում ընդգծված են չափանիշները.<br>Ո՞ր գործոններն են պայմանավորում դարաշրջանի ժամանակակից պատմաբանի միտումնավորություն:<br>Ի՞նչ նրբերագներով են տարբերվում Ղութլու Արսլանի խմբավորման շարժման մասին ձեր և ձեր հակառակորդ պատմաբանի կարծիքներն իրարից: Ի՞նչն է տարբեր մեկնաբանության առաջացման պատճառ:<br><br>Սակայն, այնքան էլ լավ չի երևում շեշտադրումը «ուրիշ ի՞նչ աղբյուրներ գոյություն ունեն Թամար թագուհու դարաշրջանի մասին» չափանիշի վրա: Որքանո՞վ վստահելի են դրանք:<br><br>Գուցե փորձեիր անվանել Թամարի դարաշրջանն արտացոլող ուրիշ աղբյուրներ, որոնք ավելի են խոսում քո պատմածի օգտին:<br><br>Ուշադրությունը կենտրոնացրո՛ւ նաև փաստական սխալների վրա (օրինակ՝ իշխաններ և իշխանություններ այդ դարաշրջանում դեռևս գոյություն չունեին):<br><br>Վերհիշի՛ր նաև, թե որ թագավորներն էին թագավորում Թամարի գահակալությունից առաջ: |

**Հինգերորդ աշակերտի աշխատանքը. վերացական մակարդակ**

Աշակերտը համալիր առաջադրանքի միջոցով, ընդգծված օրինակների վրա հիմնվելով, փոխկապակցված կերպով դատողություն է անում թեմայի շրջանակներում բացահայտված մի քանի/բոլոր նպատակային հասկացությունների մասին: Համալիր առաջադրանքի միջոցով բացահայտված տվյալները կապում է անձնական փորձառության և այլ կենսական իրավիճակների հետ: Համապատասխանաբար, ուսուցչի մեկնաբանությունը կհայտնվի վերացական մակարդակի տողի «Աղբյուր» նպատակային հասկացության սյունակում:

| **Նպատակային հասկացություն** | **Աղբյուր** | |
|---|---|---|
| **Չափանիշ** | Նկարագրություն<br>**Ինչ արեց աշակերտը, և ինչ եզրակացություն արեցի դրա հիման վրա:** | Մեկնաբանություն<br>**Ինչ խորհուրդ տվեցի աշակերտին (զարգացնող գնահատում)** |
| **Վերացական մակարդակ**<br>Աշակերտը հարցի հետ կապված չունի պատշաճ տեղեկություն: | Աշակերտը հասկացավ առաջադրանքի էությունը, ստեղծեց «տարեգրություն», որում Թամարի թագավորությունն արտացոլող պատմությունը փոխանցեց տարբերվող մեկնաբանությամբ (օրինակ, Ղութլու Արսլանի խմբավորման ելույթի դրդապատճառ անվանեց այն, որ այլևս չէին ցանկանում, որ թագուհու կողմից կրկնվեր այն դաժանությունը, որ տեղ ուներ Գիորգի թագավորի գահակալության ժամանակ): Թամար թագուհու պատմաբանի միումնավորությունը բացատրեց թագավորական արքունիքի հետ նրա մերձությամբ (օրինակ, ներկայացրել է այն փաստը, որ Թամարի մատենագիրը դիվանապետ Ճղոնդիդելին էր): Աշխատությունից երևում է, որ աշակերտը տիրապետում է Թամարի դարաշրջանի հետ կապված նյութին և դրանք ըմբռնել է նպատակային հասկացության համատեքստում, մասնավորապես, ցուցաբերում է 12-րդ դարի Վրաստանի և աշխարհի քաղաքական քարտեզների իմացություն (նպատակային հասկացություն «տարածություն»), երկրի սոցիալ-քաղաքական կազմակերպման իմացություն, օրինակ՝ համարժեքորեն է օգտագործում տերմինները՝ «դիվանապետ-Ճղոնդիդելի», «ոչ ազնվականների վերելք», «էրիսթավիություններ» (նպատակային հասկացություն «իշխանություն»), պատճառահետևանքային կապեր է հաստատում Թամարի թագավորության և նրա նախորդ շրջանի պատմական իրադարձությունների միջև (նպատակային հասկացություն «պատմական իրադարձություն/ գործընթաց»):<br>Դարաշրջանի ոգին ավելի լավ ցուցաբերելու համար օգտագործվում են հնաբանություններ: | Դուք հիանալի աշխատանք եք կատարել: Քո աշխատությունից երևում է, որ խորը ըմբռնել ես.<br><br>«Քարթլիի կյանքի», որպես հետաքրքիր աղբյուրի, կարևորությունը:<br>Իշխանության համար պայքարի առանձնահատկությունները Թամարի դարաշրջանում:<br><br>Համապատասխան դարաշրջանի Վրաստանի արտաքին և ներքին քաղաքականության համար հրատապ հարցեր:<br><br>Ղութլու-Արսլանի խմբավորման ելույթի պատճառները և հետևանքները:<br><br>Խնդրում եմ, հիշել օրինակներ պատմությունից, քո անձնական կյանքից, որոնք կապված են «տարեգրության» ընդգծված նրբությունների հետ:<br>Արդյոք քեզ որևէ մեկի հիշեցնո՞ւմ է Թամարի պատմաբանի միտումնավորությունը:<br>Ո՞ր պատմական իրադարձությունն է քեզ հիշեցնում Ղութլու-Արսլանի խմբավորման շարժումը:<br>Ո՞րն է տարբերությունը Թամարի դարաշրջանի և նրա դարաշրջանին բնորոշ պատմական իրադարձությունների ու այլ պատմական դարաշրջանների միջև: |

**Տիպիկ առաջադրանքներ ամփոփիչ գնահատման համար**

Մենք առաջարկում ենք չափորոշչով նախատեսված տիպիկ ամփոփիչ առաջադրանքների ցանկ: Աշակերտից և/կամ ուսուցչից է կախված, թե որ առաջադրանքը/առաջադրանքները կընտրի:

- Աղբյուրի վերլուծություն
- Տեսանյութերի և ֆիլմերի վերլուծություն
- Այցելություն թանգարան
- Էքսկուրսիա
- Հարցման/հետազոտության անցկացում
- Դերախաղ՝ պիեսի բեմադրում, որևէ բանի բեմականացում
- Գրական բովանդակության ստեղծագործական ապրանքի ստեղծում (առաջին դեմքով օրագիր, էսքիզ գրել):

# ՈՒՍԱՆՈՒՄ-ՈՒՍՈՒՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կրթական գրականության մեջ ընդունված են դասավանդման մեթոդների տարբեր դասակարգումներ: Հիմնականում առանձնացվում է մեթոդների երկու խումբ.

- մեթոդներ, որոնք նպաստում են կոնկրետ նյութի յուրացմանը,
- մեթոդներ, որոնք ուղղված են ընդհանուր/փոխանցելի հմտությունների զարգացմանը:

Վերոհիշյալ բաժանումը որոշակի պայմանական բնույթ ունի, քանի որ մեթոդների մեծ մասը առարկայականի հետ աշակերտներին օգնում է նաև ընդհանուր կարողունակության զարգացման մեջ:

Հետազոտությունները ցույց են տվել, որ ոչ մի մեթոդ ընդհանրական չէ: Կարևոր է, որ ուսուցիչը վերլուծի և հասկանա յուրաքանչյուր մեթոդի կիրառման հնարավորությունները՝ կապված կոնկրետ առարկայի, տարիքային խմբի, որոշակի անհատական հատկանիշներ ունեցող աշակերտների հետ, և միայն դրանից հետո կատարի համապատասխան ընտրություն: «Մեթոդ» հասկացությունը նշանակում է նպատակին հասնելու ճանապարհ, միջոց: Ուսուցման մեթոդը ուսուցչի նպատակաուղղված գործողություններն են՝ աշակերտների մոտ համապատասխան կարողություններ զարգացնելու համար: Ուսուցման մեթոդի ընտրության համար կարևոր է, որ ուսուցիչը սահմանի դասի ուսումնական նպատակները և ակնկալվող արդյունքները, քանի որ հենց արդյունքից են կախված ուսուցման մեթոդները: Այսպիսով, կոնկրետ մեթոդ ընտրելիս պետք է նկատի ունենալ ընտրված մեթոդի համապատասխանությունը ակտիվությանը, աշակերտների հնարավորություններին և փորձին, կարևոր են նաև գործունեության համար անհրաժեշտ ռեսուրսների հասանելիությունը, ակտիվության համար սահմանված ժամանակի համապատասխանությունը և այլն:

Ուշագրավ է, որ շատ դեպքերում ակտիվությունն ու մեթոդը նույնացնում են: Ակտիվությանը տրվում է հարց. «Ի՞նչ է անում ուսուցիչը»: Օրինակ, ուսուցիչը դասարանի հետ միասին կազմում է խմբային աշխատանքի կանոններ, իսկ այն, ինչին տրվում է «Ինչպե՞ս է անում ուսուցիչը» հարցը (այսինքն՝ ի՞նչ դիդակտիկ միջոցով է իրականացնում այս ակտիվությունը), դա մեթոդ է:

Որպեսզի աշակերտը արդյունավետ օգտագործի ուսուցման մեթոդները, նա պետք է տիրապետի սովորելու արդյունավետ ռազմավարությունների, որոնց մեջ նույնպես առանձնացնում են. **1. Ճանաչողական ռազմավարություններ:** Դրանց միջոցով աշակերտը ձեռք է բերում/ստանում է գիտելիք, վերամշակում, վերլուծում, քննադատաբար գնահատում, օգտագործում այլ իրավիճակում: **2. Մետաճանաչողական ռազմավարություններ** (մետաճանաչում – մտածել սեփական մտածողության մասին): Այն օգնում է աշակերտին ակտիվորեն ներգրավվել սեփական ուսուցման գործընթացի, կառավարման, մոնիթորինգի և գնահատման գործընթացի մեջ, զարգացնում է աշակերտի վերլուծելու ունակությունը և եզրակացություն է անում, թե ինչ է սովորել և ինչպես է պլանավորել իր ինքնազարգացումը: **3. Սոցիալական ռազմավարություն,** որը հիմնվում է սոցիալական ինտերակցիայի վրա և ուսումնական միջավայրում գիտելիքների կառուցքավորման համար առավելությունը շնորհում է համագործակցային ուսուցմանը (օրինակ՝ խմբային աշխատանք, քննարկում, փոխադարձ ուսուցում և այլն): **4. Ռեսուրսների վրա հիմնված ռազմավարություն** (մուլտիմեդիա, ցանցային ուսուցման միջոցներ, օրինակ, ինտերնետ, գրադարան և այլն):

1. Ճանաչողական դիագրամներ

Գրաֆիկական սխեմաների օգտագործումը ներկայացման ոչ լեզվական ձևերի թվում ամենալայնորեն տարածված մեթոդն է: Գրաֆիկական սխեման սովորաբար ենթադրում է ներկայացման երկու ձևերն էլ՝ լեզվական և ոչ լեզվական: Լեզվական են բառերն ու բառակապակցությունները: Ոչ լեզվական են տարբեր տեսակի խորհրդանշանները և սլաքները, որոնք արտահայտում են հարաբերությունները խորհրդանշանների միջև:

Ճանաչողական դիագրամներով, այսինքն՝ գրաֆիկական կազմակերպիչներով աշխատանքն աշակերտներին օգնում է ընկալել կարևոր տեղեկատվությունը: Աշակերտներին տրվում է տեքստ, գաղափար, հարցի վերահսկողության մեխանիզմ, որը նրանց օգնում է որոշել և տեսողականորեն ըմբռնել մասի և ամբողջի, հասկացության և մանրամասների փոխհարաբերությունը:

**Ճանաչողական դիագրամների միջոցով աշակերտը.**

- Մասերի է բաժանում տրված տեղեկատվությունը:
- Կազմակերպում է տեղեկատվությունը:
- Ճանաչում է ամբողջի և մանրամասների փոխհարաբերությունները:
- Վարժվում է քննադատական մտածողության:
- Ընտելանում է ինքնուրույն աշխատելուն:

**Երբ և ինչպես են օգտագործվում ճանաչողական դիագրամները.**

- Օգտագործվում են ինչպես նոր նյութին ծանոթանալիս և այն ներկայացնելիս, այնպես էլ նյութը յուրացնելուց հետո ամփոփիչ աշխատանք կատարելու ընթացքում:
- Օգտագործվում են ինչպես տեքստը կարդալու և մշակելու, այնպես էլ գրավոր աշխատանքը սկսելու ժամանակ:
- Օգտագործվում են ինչպես տնային, այնպես էլ դասարանական աշխատանք անցկացնելու ժամանակ:
- Օգտագործվում են ինչպես անհատական, այնպես էլ խմբերով աշխատելու ժամանակ:

Մեթոդները, որոնք կապված են նմանությունների և տարբերությունների հետ, կարելի է համարել սովորելու անկյունաքարը: Հետազոտություններում, որոնցում այս մեթոդի արդյունավետությունը հիմնավորված է փորձարարական աշխատանքի վերլուծության հիման վրա, ուշադրությունը կենտրոնացված է այն փաստի վրա, որ փաստերը, իրադարձությունները և այլն համեմատելիս՝ կողմնորոշումը ընդհանուր և տարբերվող հատկանիշների բացահայտմանը նպաստում է հարցերի առաջացմանը, համապատասխան փաստարկներով տարբերակների առաջացմանը, քննարկման իրավիճակի ստեղծմանը: Բացի այդ, այս կարգի առաջադրանքների վրա աշխատելիս, աշակերտները դրսևորում են իրենց ձեռք բերած գիտելիքները հասկանալու և տարբեր համատեքստում օգտագործելու հմտություններ ու կարողություններ: Հատկապես արդյունավետ է նմանության և տարբերության մեթոդի կիրառումը, երբ աշակերտները առանց ուսուցչի հրահանգների, միասին աշխատելու (խմբային) պայմաններում համապատասխան եզրակացություններ են անում, և դա նպաստում է նոր, երբեմն հակասական գաղափարների խթանմանը: Գիտելիքների ըմբռնման և կիրառման արդյունավետությունը զգալիորեն մեծացնում է աշակերտների կողմից գրաֆիկական սխեմաների և դիագրամների օգտագործման հաճախականությունը, նպաստում է ընդհանուր և տարբերակիչ հատկանիշների հայտնաբերման խթանմանը: Արդյունավետ համեմատության համար կարևոր է աշակերտների կողմից համեմատվելիք առարկաների, փաստերի, իրադարձությունների կարևոր հատկանիշների հստակ սահմանումը, որն այնուհետև կդառնա նմանության ու տարբերության նույնականացման հիմք: Կարևոր է, որ ուսուցիչը համեմատության համար օգտագործի հստակ կառուցքավորված վարժություններ (ինչն են համեմատում և

ըստ որ բնութագրերի), ինչն ուշագրավ է աշակերտների ջանքերը որոշակի տեսակի եզրակացությունների միտելու առումով: Այդպիսի առաջադրանքները միտված են աշակերտների կողմից միևնույն հատկանիշների միջև առկա նմանություններն ու տարբերությունները ճանաչելուն: Համեմատության և նմանություն-տարբերության նպատակով օգտագործվում են.

**ՎԵՆՆԻ ԴԻԱԳՐԱՄ**



Վեննի դիագրամն օգտագործվում է երկու թեմա կամ իրադարձություն, քննարկվող հարցեր, փաստեր, տարբեր արվեստագետների ստեղծագործություններ, արվեստի մեկ ոլորտի, ժանրի նմուշների ինչպես ընդհանուր, այնպես էլ տարբերակիչ նշաններն ընդգծելու համար. շրջանագծերի հատման հատվածում գրվում է ընդհանուր նշանը, իսկ աջ և ձախ հատվածներում գրվում են տարբերակիչ նշանները:

Վեննի դիագրամի վրա աշխատելը նպաստում է, որ աշակերտն ավելի լավ հասկանա քննարկվող հարցը, ըմբռնի, զարգացնի դիտարկելիության, քննադատական ու վերլուծական մտածողության և ինքնուրույն աշխատելու հմտություններն ու կարողությունները:

Վեննի դիագրամի վրա կարող եք աշխատել ինչպես առանձին, այնպես էլ զույգերով և խմբային վարժություն կատարելիս:

## ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՏՐԻՑԱ

Այս գրաֆիկական սխեման օգտագործվում է այն դեպքում, երբ պետք է համեմատվեն երկուսից ավելի առարկաներ կամ իրադարձություններ, ստեղծագործություններ և այլն, ինչը նախատեսում է ավելի մանրամասն մոտեցում համեմատության օբյեկտների նկատմամբ և համեմատություն-տարբերությունից բացի նշվում են նաև յուրաքանչյուր օբյեկտի բնութագրերը:

**Դիագրամ 2**
**Համեմատության մատրիցա**
**Մատրիցա**

| Բնութագրեր | Համեմատելու թեմաներ | | | |
|---|---|---|---|---|
| | # 1 | # 2 | # 3 | |
| 1 | | | | Նմանություններ |
| | | | | Տարբերություններ |
| 2 | | | | Նմանություններ |
| | | | | Տարբերություններ |
| 3 | | | | Նմանություններ |
| | | | | Տարբերություններ |
| 4 | | | | Նմանություններ |
| | | | | Տարբերություններ |

**T-դիագրամ**

| Հետաքրքրություններ | Վտանգներ |
|---|---|

Սխեման օգտագործվում է քննարկվելիք հարցերը (փաստեր, իրադարձություններ, գեղարվեստական ուղղություններ, ժամանակաշրջաններ, դարաշրջաններ, արվեստագետների գործեր, արվեստի նմուշներ և այլն) համեմատելու, հակադրելու, այսինքն՝ միայն տարբերակիչ նշանները նշելու համար: Համապատասխանաբար, սխեմայի յուրաքանչյուր սյունակում կգրանցվեն փաստեր, իրադարձություններ և այլ տարբեր նշաններ: Սխեմայի վրա աշխատանքը կհեշտացնի, որ աշակերտն ավելի լավ հասկանա քննարկվելիք հարցը, թափանցի դրա էության մեջ, զարգացնի դիտարկման, եզրակացություններ անելու, քննադատական մտածողության և ինքնուրույն աշխատելու կարողությունները: Սխեմայի վրա հնարավոր է աշխատել ինչպես անհատական, այնպես էլ զույգերով և խմբերով:

**Երկկողմ գրառումների օրագիր**

Այս սխեմայի վրա աշխատանքը օգտագործվում է աշակերտի քննադատական մտածողության և փաստարկված դատողության, ինքնուրույն աշխատանքի հմտությունների զարգացման համար: Տրված սխեմայի առաջին վանդակում («մեջբերում») մենք աշակերտներին կառաջարկենք գրի առնել մեջբերումը դասագրքից (այդ նպատակով հնարավոր է օգտագործել այլ տեսակի տեղեկություններ), ինչի հետ կապված էլ սեփական կարծիքները գրում է աղյուսակի երկրորդ մասում («մեկնաբանություն»):

| Մեջբերում | Մեկնաբանություն |
|---|---|
| | |

**«Գիտեմ, սովորեցի, ուզում եմ իմանալ»:**

Նոր թեմա սկսելիս աշակերտները գրառումներ են անում տրված սխեմայի առաջին սյունակում: Թեման ավարտելիս՝ հիմնականում ամփոփիչ դասի ժամանակ լրացնում են երկրորդ և երրորդ սյունակները: Ուսուցչի համար կարևոր է վերլուծել գրառումները, ինչը հստակ խոսում է աշակերտների կողմից ձեռք բերված գիտելիքների յուրացման որակի, ինչպես նաև ճանաչողական հետաքրքրությունների մասին, որը երևում է երրորդ սյունակում կատարված գրառման մեջ:

| Ինչ գիտեմ | Ինչ սովորեցի | Ինչ եմ ուզում իմանալ |
|---|---|---|
| | | |

**«3, 2, 1»**

Տվյալ սխեմայի վրա աշխատելը կարևոր է ինչպես ձեռք բերված գիտելիքների ցուցաբերման, սեփական վերաբերմունքի փոխանցման, այնպես էլ ինքնագնահատման կարողությունների դրսևորման համար:

Տվյալ սխեմայի վրա աշխատանքը նպատակահարմար է թեմատիկ ցիկլի եզրափակիչ դասի համար: Ցանկալի է, որ աշակերտները նախապես տեղեկացված լինեն, որ յուրաքանչյուր սյունակում միայն թեմաների կամ հարցերի թվարկումը բավարար չէ: Նրանք պետք է հիմնավորեն իրենց կարծիքները, ինչը կնպաստի ուսումնական նյութի վրա կենտրոնացման, քննադատական մտածողության և փաստարկված դատողության հմտությունների ու կարողությունների զարգացմանը:

| | |
|---|---|
| Գրի՛ր 3 թեմա/հարց, որոնցով հատկապես հետաքրքրվեցիր: | |
| 2 թեմա/հարց, որոնց հետ կապված քեզ մոտ առաջացել է ավել տեղեկություններ ստանալու հետաքրքրություն: | |
| 1 թեմա/հարց, որի մասին դատողություն կանեիր ընկերներիդ հետ: | |

**Ասոցիատիվ քարտեզ (այսպես կոչված՝ «Սարդոստայն»)**

Ասոցիատիվ քարտեզն օգտագործվում է աշակերտների ուշադրության առավելագույն մոբիլիզացման և կենտրոնացման համար, մտածողության ակտիվացման, ձեռք բերված գիտելիքների բացահայտման-ամրապնդման, ամփոփման նպատակով: Գրատախտակի կամ թղթի կենտրոնում գրված է հանգուցային բառ/արտահայտություն, որը կարող է արտահայտել կոնկրետ տերմին, դարաշրջան, իրադարձություն, անձ և այլն: Տվյալ հանգուցային բառի շուրջ աշակերտները գրում են բառեր, արտահայտություններ, որոնք կհիշեն՝ կապված այս բառի/արտահայտության հետ: Դրանից հետո նրանք տրամաբանորեն կապում են այս բառերը, արտահայտություններն ինչպես իրար, այնպես էլ հանգուցային բառի հետ և արտացոլում են գծերով: Այս մեթոդը կարող է օգտագործվել ինչպես անհատական, այնպես էլ զույգերով և խմբային աշխատանքի ժամանակ:



Բացի այս ճանաչողական սխեմաներից, առաջարկում ենք նաև մի քանի գրաֆիկական սխեմաներ, որոնք համապատասխանում են տեղեկատվության տեսակավորման կոնկրետ պարադիգմների:

- **Նկարագրական պարադիգմներ:** Նկարագրական պարադիգմը կարող ենք օգտագործել կոնկրետ մարդկանց, վայրերի, առարկաների և իրադարձությունների մասին փաստեր ներկայացնելու համար: Պարտադիր չէ, որ նկարագրական պարադիգմներում ներառված տեղեկությունները դասավորված լինեն որևէ հաջորդականությամբ:




- **Ժամանակային հաջորդականության պարադիգմներ:** Ժամանակային հաջորդականության պարադիգմը նշանակում է իրադարձությունների դասավորում ըստ ժամանակագրական սկզբունքի: Նման սխեմաների լրացումը աշակերտներին կօգնի ժամանակագրությունը որոշելու և տեսնելու հարցում:






Ժամացույց՝ իրադարձությունների հաջորդականություն

**Գործընթացի/պատճառահետևանքայնության պարադիգմներ:** Գործընթացի/պատճառահետևանքայնության պարադիգմը նշանակում է տեղեկատվության դասավորում. ա. Կառուցատիվ ցանցում, որը մեզ տանում է մինչև կոնկրետ արդյունք: բ. Գործողությունների միասնության մեջ, որը տրամաբանորեն ավարտվում է կոնկրետ արդյունքով:

ա.




բ.

Իրադարձություն 1 **Սա տեղի է ունեցել, որովհետև**

Արդյունք




**Դրվագի պարադիգմներ**: Դրվագի պարադիգմը հնարավորություն է տալիս որոշակի համակարգի մեջ բերել այնպիսի կոնկրետ տեղեկություններ, ինչպիսիք են.

ա. իրադարձության ժամանակը և վայրը, բ. կոնկրետ մարդիկ, գ. իրադարձության տևողությունը, դ. իրադարձությունների որոշակի հաջորդականություն, ե. կոնկրետ պատճառ և հետևանք:

**Իրադարձության նկարագրություն**



2. Մետաճանաչողական (մետակոգնիտային) ռազմավարություններ

Մետաճանաչողությունը բառացի նշանակում է ճանաչողություն (գիտելիք, ճանաչում) ճանաչողության մասին կամ գիտելիք գիտելիքի և ուսանման մասին: Սա ամենաբարձր կարգի մետաճանաչողությունն է, որը կիրառվում է ճանաչողական գործընթացները վերահսկելու և կարգավորելու համար, այնպիսի գործընթացներ, ինչպիսիք են տրամաբանական մտածողությունը, ըմբռնում-վերլուծումը, խնդիրների լուծումը, ուսանումը և այլն: Քանի որ մարդիկ տարբերվում են իրենց մետաճանաչողական գիտելիքներով և ունակություններով, նրանք տարբերվում են նաև ըստ ուսանման որակի և արագության:
Մետաճանաչումը ներառում է գիտելիքի երեք տեսակ.

**(1) Դեկլարատիվ գիտելիք** իր, որպես սովորողի մասին, այն գործոնների մասին, որոնք ազդում են քո ուսանման ու հիշողության և որոշակի առաջադրանքների կատարման համար անհրաժեշտ հմտությունների, ռազմավարությունների և ռեսուրսների վրա:

**(2) Ընթացակարգային գիտելիք** կամ ռազմավարություններ օգտագործելու իմացություն:

**(3) Պայմանի վրա հիմնված գիտելիքներ առաջադրանքի կատարումն ապահովելու համար՝** նրա իմացություն, թե երբ և ինչու օգտագործել ռազմավարությունները և ընթացակարգերը:

Մետաճանաչողությունն այս դեկլարատիվ, ընթացակարգային և պայմանի վրա հիմնված գիտելիքների ռազմավարական օգտագործումն է նպատակներին հասնելու և խնդիրները հաղթահարելու համար:
Մետաճանաչողական գիտելիքներն օգտագործվում են մտածողության և ուսանման կարգավորման համար: Գոյություն ունեն երեք էական կարողություններ, որոնց միջոցով իրականացվում է այս գործընթացը: Դրանք են. պլանավորումը, մոնիթորինգը և գնահատումը:
**Պլանավորումը** ենթադրում է նրա որոշում, թե ինչ ժամանակ հատկացնել առաջադրանքին, ինչ ռազմավարություններ օգտագործել, ինչպես սկսել առաջադրանքի կատարումը, ինչ ռեսուրսներ պետք է օգտագործել, ինչ հաջորդականության հետևել, ինչի վրա շատ ժամանակ չկորցնել, ինչի վրա հատուկ ուշադրություն հրավիրել և այլն:
**Մոնիթորինգը** տվյալ պահի ընկալումն է, նրա գիտակցումը, թե «ինչ եմ անում»: Մոնիթորինգը ներառում է հարցեր. «Արդյոք սա իմաստ ունի՞: Շատ չե՞մ շտապում: Բավականաչափ սովորե՞լ եմ»:
**Գնահատումը** ներառում է մտածողության, ուսանման գործընթացների և արդյունքների մասին գնահատումներ անելը. «Արդյոք ավելի լավ չի՞ լինի փոխել ռազմավարությունը: Արդյոք օգնություն չխնդրե՞մ: Հանձնվե՞մ: Այս աշխատանքն ավարտվա՞ծ է:

Առանձնացվում են ռազմավարությունների հետևյալ տեսակները.

| Ռազմավարության տեսակ | Օրինակ |
|---|---|
| **Նյութը կրկնելու պարզ ռազմավարություններ** | Փաստական տվյալների մի քանի անգամ կրկնություն |
| **Նյութը կրկնելու բարդ ռազմավարություններ** | Տեքստի կարևոր կետերի ընդգծում |
| **Տեղեկությունների մշակման պարզ ռազմավարություններ** | Զուգորդությունների ձևավորում |
| **Տեղեկությունների մշակման բարդ ռազմավարություններ** | Համանմանությունների ձևավորում, շրջասում, արդյունքների ամփոփում, կապակցում |
| **Տեղեկությունների կազմակերպման պարզ ռազմավարություններ** | Խմբավորում, դասակարգում |
| **Տեղեկությունների կազմակերպման բարդ ռազմավարություններ** | Հիմնական գաղափարի նույնականացում, ընդհանրացված հասկացություններ արտացոլող աղյուսակների մշակում: |
| **Նյութի հասկանալը ստուգելու ռազմավարություններ** | Հարցերի ինքնաստուգման համար, հիմնական թեզիսների, կետերի թվարկում, նպատակների նախանշում և այս ուղղությամբ սեփական առաջընթացին հետևել: |
| **Աֆեկտիվ և մոտիվացիոն ռազմավարություններ** | Ներքին մոտիվացիայի կիրառում, «Ես կարող եմ դա անել, ինձ ուղղակի ժամանակ է պետք, զգացմունքների կառավարման տեխնիկա, դրական տրամադրվածության մշակում»: |

**3. Սոցիալական ռազմավարություն.** Ինչպես նշեցինք, նման ռազմավարությունները կառուցված են փոխադարձ համագործակցության վրա: Առաջարկում ենք մեթոդական հանձնարարականներ, որոնք անհրաժեշտ են խմբային աշխատանքի համար:

**Խմբային աշխատանք**

**Խմբում աշխատանքի պլանավորում**

- Խմբում աշխատելու համար անհրաժեշտ է, որ աշակերտները տեսնեն և լսեն միմյանց: Անհրաժեշտ է նյութը բաժանել խմբերին: Ուսումնական միջոցները պետք է հասանելի լինեն:
- Աշխատանքային թերթիկի վրա հրահանգները պետք է լինեն աշակերտին հասկանալի լեզվով և ճշգրիտ ձևակերպված, այնպես, որ դրանք հնարավոր լինի կատարել առանց ուսուցչի:
- Խմբում աշխատելիս պետք է մտածել ոչ միայն կրթական նպատակների իրագործման, այլև համագործակցության ունակության զարգացման վրա:

**Համագործակցության հիմնական սկզբունքները**

- Խմբի անդամները պետք է լսեն իրենց հասակակիցներին, յուրաքանչյուրը պետք է մասնակցի աշխատանքին, անհրաժեշտության դեպքում, նա պետք է օգնություն խնդրի և ստանա այն:
- Ուսուցիչը հետևում է, որ յուրաքանչյուր աշակերտ կատարի սահմանված դերը (կազմակերպիչ-առաջնորդ, բանախոս, ընդհանրացնող, ժամանակը վերահսկող և այլն), բացի այդ, տարբեր առաջադրանքների ժամանակ դերերը պետք է փոխվեն:

**Ինչպե՞ս բաժանել խմբերի:**

- Խմբի օպտիմալ չափը՝ 4-5 աշակերտ: Մեծ ծավալով առաջադրանքի համար, որը բաժանված է մի քանի վարժությունների, հնարավոր է նաև ավելի մեծ խմբեր ստեղծել:
- Խմբերը պետք է լինեն շարունակաբար փոփոխական, բացառությամբ այն դեպքի, երբ խմբին տրված առաջադրանքը պահանջում է մի քանի օրվա համատեղ աշխատանք: Դասարանը բաժանելը անփոփոխ խմբերի կարող է խափանել նման աշխատանքի սկզբունքը, քանի որ բոլոր աշակերտները պետք է ակտիվ աշխատեն:

**Ի՞նչ է անում ուսուցիչն այն ժամանակ, երբ աշակերտներն աշխատում են:**

- Հետևե՛ք խմբերի աշխատանքին, բայց մի՛ ղեկավարեք նրանց: Աշակերտներն աշխատում են ինքնուրույն՝ անձնական պատասխանատվության զգացումով: Կարող եք օգնել խմբերին՝ փոխանակեք տեղեկություններ աշխատանքային գործընթացին առնչվող հարցերի վերաբերյալ: Աշխատանքի ժամանակ աշխատե՛ք նոր գաղափարներ տրամադրել նրանց:
- Խնդրե՛ք աշակերտներին կիսվել իրենց կարծիքներով միմյանց հետ, լսել ուրիշներին և ստացված տեղեկությունների հիման վրա ինքնուրույն եզրակացություններ անել:
- Աշխատանքի ընթացքում արե՛ք մեկնաբանություններ: Տեղեկությունները աշակերտների ելույթների մասին պետք է կոնկրետ լինեն: Մի՛ խուսափեք հաճախակի, կոնկրետ և բաց մեկնաբանություններից: Դա պետք է անել ինչպես խմբային աշխատանքի, այնպես էլ ստացված արդյունքների ամփոփման ժամանակ:
- Եթե խմբերը դառնում են դժվար վերահսկելի, ընդհատե՛ք աշխատանքը և քննարկե՛ք այդ հարցը:
- Նշե՛ք, թե ինչպիսի վարքագիծն է առաջացնում խնդիրներ, որ աշակերտը չի կատարում իր դերը և բացատրե՛ք, որ բոլորը պատասխանատու են առաջադրանքը կատարելու համար: Յուրաքանչյուր խմբի 5 րոպեով նշանակե՛ք դիտորդ: Ավելի ուշ այս դիտորդները կարտահայտեն իրենց տպավորությունները: Խմբի գործունեությունը պետք է քննարկի ամբողջ դասարանը:

**4. Ռեսուրսների վրա հիմնված ռազմավարություն:** Բնական է առանց այս բաղադրիչի ակտիվ օգտագործման անհնար է հասնել ժամանակակից կրթության նպատակներին և խնդիրներին, պարզապես հետաքրքիր և ստեղծագործական դաս անցկացնել: Առաջարկում ենք մի քանի տեսակի ռեսուրսների օգտագործման համար անհրաժեշտ մեթոդաբանական հանձնարարականներ:

**Աշխատանք գրավոր աղբյուրների վրա**

Գրավոր աղբյուրները Աշակերտի գրքի հիմնական բաղադրիչներից են: Դրանց մշակումը նպաստում է աշակերտի հետազոտական-վերլուծական կարողության զարգացմանը և համապատասխանում է Ազգային ուսումնական պլանի հիմնական կրթական սկզբունքներին, քանի որ ներառում է գիտելիքի ինչպես դեկլարատիվ, այնպես էլ ընթացակարգային կարգերը:

Գրավոր աղբյուրը այն հիմնական ռեսուրսն է, որից ստացվում են պատմական գիտելիքները և դրանց մշակման արդյունքում հնարավոր է դառնում վերականգնել անցյալի պատկերը:

Պետք է նկատի ունենալ այն գործոնը, որ աղբյուրի վերլուծությունը ենթադրում է տեքստի լավ ըմբռնում, քանի որ պատասխանների մեծ մասը հենց տեքստի մեջ է: Աղբյուրի վրա աշխատանքը նկատի ունի պատասխանների որոնում այն հարցերին, որոնց նկատմամբ դրանք առաջանում են:

- Ո՞վ է հեղինակը: Ե՞րբ էր նա ապրում: Նա գրել է սեփական փորձից ելնելով, թե՞ որևէ տեղեկությունից էր օգտվում: Կարո՞ղ էր որևէ մեկը/ինչ-որ բան ազդել հեղինակի վրա տեքստը ստեղծելիս:

- Ի՞նչ գրվածքների հետ գործ ունենք: Օրինակ՝ տարեգրություն, պատմողական ակնարկ, գրական ստեղծագործություն, պետական փաստաթուղթ, ճամփորդական օրագիր, թե այլ:
- Որտե՞ղ և ե՞րբ են տեղի ունենում սկզբնաղբյուրում նկարագրված իրադարձությունները: Ինչի՞ մասին է այնտեղ խոսքը: Ինչպիսի եզրակացություն կարելի է անել:
- Ինչպիսի՞ն է հեղինակի շարադրանքի տոնայնությունը: Ի՞նչ նպատակ ունի հեղինակը պատմությունը պատմելով: Պարունակո՞ւմ է արդյոք տեքստը հեղինակային գնահատականներ: Դրսևորո՞ւմ է արդյոք կողմնակալություն: Ի՞նչ է ցանկանում ասել ընթերցողին:

Ի հավելումն այս ընդհանուր տեղեկատվության, յուրաքանչյուր աղբյուր տրամադրում է տեղեկություններ կոնկրետ դարաշրջանի, կոնկրետ թագավորի, պետական կամ եկեղեցական գործչի, որևէ կոնկրետ ճակատամարտի կամ թեկուզ մարդկանց առօրյա կյանքի մասին: Ուստի յուրաքանչյուր աղբյուր պահանջում է հարցերի առաջադրում տեքստի բովանդակության հիման վրա:

**Աշխատանք նկարազարդման վրա**

Նկարազարդման և դրա վերլուծության վրա աշխատանքը կարևորագույն բաղադրիչներից մեկն է, որը ծառայում է վերլուծական մտածողության զարգացմանը:

Նկարազարդումը ցանկացած տեսողական տիպի տպագիր նյութ է, օրինակ՝ ծաղրանկար, պաստառ, նկար, լուսանկար, ցուցապաստառ, փոստային նամականիշ և այլն:

Նկարազարդումը միշտ արժեքավոր աղբյուր է, քանի որ կարող է նրանում պատկերված լինել պատմական դեմք, ամսաթիվ, որևէ պատմական իրադարձություն/ գործընթաց: Աշակերտը պետք է ուշադիր դիտի նկարազարդման մեջ ներկայացված բոլոր մանրամասները. նկարազարդման ընդհանուր սյուժեն, տարեթվերը, գրության լեզուն և բովանդակությունը: Որպես սկզբնաղբյուր ևս նկարազարդումն ունի ընդհանուր, ընդհանրական հարցեր.

- Ե՞րբ է ստեղծվել նկարազարդումը:
- Պատմական ո՞ր ժամանակաշրջանն է նկարագրում նկարազարդումը:
- Ո՞վ է նկարազարդման հեղինակը, և ո՞րն է եղել այն ստեղծելու շարժառիթը:

**Աշխատանք քարտեզի վրա**

Քարտեզի վրա աշխատանքը նույնպես Աշակերտի գրքի և տետրի կարևոր բաղադրիչներից է և առաջին հերթին ծառայում է պատմական տարածության մեջ կողմնորոշվելու կարողության զարգացմանը:

Առաջարկվող վարժությունները ներառում են աշխատանք պատմական և ժամանակակից քաղաքական քարտեզների վրա միաժամանակ, դրանց համեմատություն, հին պետությունների, կայսրությունների տեղում այսօր որ պետություններն են գտնվում:

Բացի այդ, պատմական քարտեզը բազմաթիվ տեղեկություններ է փոխանցում, դրա վրա նշված են սահմանների փոփոխությունները, միգրացիաները: Քարտեզի վրա աշխատանքը պահանջում է տեսական նյութի կապակցում գործնական աշխատանքի հետ:

Մինչ աշակերտները կսկսեն աշխատել քարտեզների վրա, անհրաժեշտ է քարտեզի լեգենդը քննարկել:

# ԹԵՄԱՏԻԿ ՄԱՏՐԻՑԱՆԵՐ

| Թեմա. Ուշ Անտիկ դարաշրջան և վաղ միջնադար | |
|---|---|
| **Թեմայի հետ կապված կայուն պատկերացումներ** | **Թեմայի հետ կապված հանգուցային հարցեր** |
| • Հռոմեական իրավունքը և կառավարման համակարգը հիմք են հանդիսանում ժամանակակից եվրոպական/արևմտյան իրավունքին և կառավարման համակարգին։<br>• Կոստանդիանոս կայսեր ժամանակներից ի վեր Հռոմում քրիստոնեությունը դարձավ գլխավոր կրոն։<br>• Ուշ անտիկ դարաշրջանում եղել են եկեղեցական պառակտումներ (օրինակ՝ միաբնակների և երկբնակների միջև), վիճելի հարցերը լուծվել են տիեզերական եկեղեցական ժողովներում։<br>• Հռոմեական կայսրությունն անկում ապրեց գերմանական ցեղերի արշավանքների արդյունքում։ Միջնադար է կոչվում Հռոմեական կայսրության անկումից հետո ընկած ժամանակաշրջանը։<br>• Քրիստոնեությունը և իսլամը միաստվածային կրոններ են։<br>• Միջնադարում հաճախակի են եղել պառակտումներ քրիստոնեության տարբեր ուղղությունների միջև։ Վիճահարույց հարցերը լուծվում էին եկեղեցական տիեզերական ժողովներում։<br>• Միջնադարում վանքերը կրթական կենտրոններ էին հանդիսանում։<br>• Միջնադարին բնորոշ է ավատատիրությունը՝ ֆեոդալիզմը («եռանդամ հասարակություն» Եվրոպայում)։ | • Ի՞նչ պատճառներ են հանգեցրել Հռոմեական կայսրության ճգնաժամին։<br>• Հռոմեական կայսրությունում ինչո՞ւ քրիստոնեությունը գերակայություն ձեռք բերեց՝ չնայած կատաղի հալածանքներին։<br>• Ինչպե՞ս փոխվեց Եվրոպայի քաղաքական և էթնիկական քարտեզը Հռոմեական կայսրության անկումից հետո։<br>• Ինչպե՞ս է Ֆրանկական թագավորությունը գերազանցել մնացած Գերմանական թագավորություններին և ինչպե՞ս է ստեղծել ընդարձակ եվրոպական կայսրություն։<br>• Ինչո՞ւ էր միավորում Բյուզանդիայի կայսրը աշխարհիկ և հոգևոր իշխանությունը։<br>• Ինչո՞ւ է Հուստինիանոս Մեծի կառավարումը համարվում ոսկեդար։<br>• Ի՞նչ առանձնահատուկ հատկանիշներ էին առանձնացնում Սասանյան Իրանին։<br>• Ի՞նչ հետևանք բերեցին Իրանին և Բյուզանդիային շարունակական պատերազմները։<br>• Ինչպե՞ս կարողացավ Հերակլիոս կայսրը պարտության մատնել Սասանյան Իրանին։<br>• Ինչպե՞ս Մուհամմեդը դարձավ նոր կրոնի և պետության ղեկավար։<br>• Ինչպե՞ս փոխվեց աշխարհը արաբական նվաճումների հետևանքով։<br>• Ի՞նչ ազդեցություն ունեցավ իսլամական քաղաքակրթությունը քրիստոնեական Եվրոպայի վրա։<br>• Ինչպե՞ս հզորացավ Ֆրանկական թագավորությունը, և ի՞նչը հանգեցրեց նրա փլուզման։<br>• Ինչպե՞ս էին շփվում տարբեր սոցիալական խմբեր ֆեոդալիզմի դարաշրջանում։<br>• Ինչպե՞ս փոխեցին նորմանական նվաճողական պատերազմները Եվրոպան։<br>• Ի՞նչ հետևանքներով ավարտվեցին ներքին և արտաքին խնդիրները Բյուզանդիայում։<br>• Ինչպե՞ս կարողացան Մակեդոնյան դինաստիայի տիրակալները հզորացնել Բյուզանդական կայսրությունը։<br>• Ինչո՞ւ բաժանվեց քրիստոնեական աշխարհը լատինական և հունական տարածքների։ |

| **Համալիր առաջադրանքներ (անվանումը)** | **Նպատակային հասկացություններ և ենթահասկացություններ** | **Հարցերը** | **Հանգուցային հարցեր** |
|---|---|---|---|
| 1.Երկսյունակ աղյուսակի ստեղծում | Հասկացություն/հասկացություններ. իշխանություն, ժամանակ,<br><br>Ենթահասկացություն/ենթահասկացություններ.պատմական դարաշրջան, կառավարման համակարգի հետ կապված բարեփոխում | Դիոկղետիանոսի բարեփոխումները | Ինչպես ներկայացնեմ երկսյունակ աղյուսակի միջոցով Հռոմը ճգնաժամային դարաշրջանում և այն, թե ինչպես ամրապնդեց Դիոկղետիանոսը կայսրությունն իր բարեփոխումներով։ |
| 2. Գրավոր զեկույց ստեղծել | Հասկացություն/հասկացություններ. տարածություն, հասարակություն<br><br>Ենթահասկացություն/ենթահասկացություններ. պատմաաշխարհագրական տարածք, սոցիալական խավեր | Բյուզանդիայի և Սասանյան Իրանի դիմակայությունը VI դարում | Ինչպե՞ս ներկայացնեմ գրավոր զեկույցի միջոցով VI դարում Բյուզանդիա-Սասանյան Իրանի միջև առկա դիմակայության մեջ աշխարհագրական տարածքի կարևորությունը և պատերազմական գոտում ապրող հասարակությունների էթնիկ, տնտեսական և կրոնական բնութագրերը։ |

| | | | |
|---|---|---|---|
| 3. Քարթլիի էրիսմթավարիի անունով նամակ կազմել | Հասկացություն/հասկացություններ. պատմական իրադարձություն, հասարակություն<br><br>Ենթահասկացություն. ճակատամարտ/պատերազմ, առօրյա կյանք | Արաբական նվաճումները | Ինչպե՞ս ներկայացնեմ Քարթլիի էրիսմթավարիի անունով գրված նամակում արաբական նվաճումների հետևանքները և նրանց վերաբերմունքը նվաճված ժողովուրդների նկատմամբ։ |
| 4. Համառոտ տարեգրության ստեղծում | Հասկացություն/հասկացություններ. աղբյուր, մեկնաբանություն<br><br>Ենթահասկացություն. պատմողական աղբյուր | Բյուզանդիան IX դարում | Ինչպե՞ս ներկայացնեմ համառոտ տարեգրության միջոցով բյուզանդացի հեղինակների կողմից ստեղծված գրավոր աղբյուրների քննադատությունը IX դարում Բյուզանդիայում ընթացող իրադարձությունների մասին։ |
| 5. Համառոտ տարեգրության ստեղծում | Հասկացություն/հասկացություններ. իշխանություն, հասարակություն<br><br>Ենթահասկացություն. կառավարման ձևեր, ամենօրյա կենցաղ, ապրելակերպ | Ֆրանկական կայսրություն | Ինչպե՞ս ներկայացնեմ տարեգրությունների միջոցով միջնադարին բնորոշ կառավարման ձևերը և հասարակությունը։ |

<table>
<tr>
<td>Երկարաժամկետ նպատակ<br><br>Նպատակային հասկացություն և դրա հետ կապված կայուն պատկերացումներ</td>
<td>Հարց/ենթահարցեր. Դիոկղետիանոսի բարեփոխումները<br><br>Ենթահասկացություններ. պատմական դարաշրջան, կառավարման համակարգի հետ կապված բարեփոխում</td>
<td>Հանգուցային հարց/հարցեր Ինչպե՞ս ներկայացնեմ երկյունակ աղյուսակի միջոցով Հռոմը ճգնաժամային դարաշրջանում և այն, թե ինչպես ամրապնդեց Դիոկղետիանոսը կայսրությունն իր բարեփոխումներով։</td>
<td>Միջանկյալ ուսումնական նպատակ<br><br>Համալիր առաջադրանքի պայմանը</td>
</tr>
<tr>
<td>Իշխանություն<br><br>1. Իշխանության համար պայքարը պատմության անբաժանելի մասն է։<br><br>2.Իշխանության համար պայքար տեղի է ունենում ինչպես անհատների, այնպես էլ հասարակական խմբերի միջև։ Պայքարելիս նրանք օգտագործում են երկրում առկա հասարակական-քաղաքական կառույցները։<br>3.Իշխանություն ձեռք բերելու և պահպանելու համար անհրաժեշտ միջոցներ են ռեսուրսների (ֆինանսներ, մարդկային ռեսուրսներ) տիրապետումը, խորհրդանիշները, գաղափարախոսությունը։<br><br>4. Որոշ հասարակություններում իշխանությանը տիրապետում էին միանձնյա, իսկ որոշ տեղերում այն բաշխված էր մարդկանց/հասարակական խմբերի միջև։</td>
<td colspan="2">Համալիր առաջադրանքի մշակման փուլերը (ռեսուրսներ, ակտիվություններ).<br>I փուլ. Համալիր առաջադրանքի ձևը<br>Ինչպե՞ս պետք է ցույց տամ սեփական գիտելիքս՝ կապված ուսումնասիրվելիք հարցի հետ։<br><br>Ծանոթացնել քննարկվելիք հարցը և համալիր առաջադրանքի պայմանը<br><br>I փուլում բոլոր աշակերտները պետք է ստանան առաջադրանքը և պայմանավորվեն, թե ինչ ձևով են ներկայացնելու այն։ Հնարավոր է համալիր առաջադրանքի պայմանը հարմարեցնել՝ ըստ աշակերտի կարիքների։<br><br>Նույն փուլում պետք է քննարկվի ստեղծագործական առաջադրանքի արդյունքը։<br><br>Ռեսուրսներ/ակտիվություններ.<br>1. Երկսյունակ աղյուսակի նմուշ<br><table><tr><td>Խնդիրներ</td><td>Խնդրի լուծման ուղիներ</td></tr><tr><td></td><td></td></tr></table><br>Առաջադրանքի պայմանին և ստեղծագործական արդյունքին ծանոթանալուց հետո ուսուցիչը պետք է խթանման փուլը կիրառի մինի ձևաչափով՝ հարցերով.<br><br>1. Կատարե՞լ եք երբևէ առաջադրանք երկսյունակ աղյուսակի կիրառմամբ։</td>
<td>Պատկերացրո՛ւ, որ Դիոկղետիանոս կայսեր մերձավորներից մեկն ես՝ նրա խորհրդականը։ Կայսրը որոշել է լայնածավալ բարեփոխումներ իրականացնել և քեզ է դիմել խորհուրդ ստանալու համար։ Պետք է ստեղծես երկսյունակ աղյուսակ, որի մի կողմում ներկայացված կլինեն երրորդ դարում Հռոմեական կայսրությունում առկա արտաքին և ներքին հիմնախնդիրները, իսկ երկրորդ կողմում՝ քո առաջարկություններն ու խորհուրդները կայսերը, թե ինչպես կարող է կայսերական իշխանությունը լուծել այս հիմնախնդիրները։<br>Պետք է առանձնացվի առնվազն 5 կարևոր հիմնախնդիր այնպես, որ դարաշրջանը լավ ներկայացված լինի։<br><br>Աղյուսակում հստակ ցո՛ւյց տուր.</td>
</tr>
</table>

| | | |
|---|---|---|
| 5.Ժողովրդավարական պետության իշխանության աղբյուրը ժողովուրդն է:<br><br>**Ժամանակ**<br><br>1. Պատմությունը ժամանակի մեջ ընթացող փոփոխականությունն ուսումնասիրող ոլորտ է:<br><br>2.Մարդկության անցած ճանապարհը բաժանված է տարբեր պատմական դարաշրջանների և ժամանակաշրջանների:<br><br>3.Տարբեր ժողովուրդներ ունեին ժամանակի հաշվարման տարբեր համակարգեր: | 2. Ի՞նչ բնութագրիչների վրա եք կենտրոնացնում ուշադրությունը հարցի ուսումնասիրման ժամանակ երկսյունակ աղյուսակի կիրառմամբ:<br>3. Ինչո՞ւ է կարևոր հարցն ուսումնասիրել երկսյունակ աղյուսակի կիրառմամբ:<br>4. Կատարե՛ք գործնական առաջադրանք՝ վերհիշե՛ք ուսումնասիրած նյութը և, օգտագործելով երկսյունակ աղյուսակը, քննարկե՛ք Պերիկլեսի դարաշրջանում Աթենքում առկա խնդիրները:<br><br>Ուսուցիչն օգնում է աշակերտներին կատարել գործնական առաջադրանքը:<br><br>**II փուլ. Համալիր առաջադրանքի բովանդակությունը**<br>**Քայլ 1**. Ինչպես փոխվեց Հռոմեական կայսրությունը դարաշրջանի փոփոխության հետ մեկտեղ, և ինչ մարտահրավերների է նա բախվում համեմատաբար խաղաղ II դարից հետո: (Ժամանակ, Կ.պ.1)<br>Ինչ հիմնական բնութագրերով ու մարտահրավերներով է առանձնանում Հռոմեական կայսրության համար III դարը, որպես դարաշրջան: (Ժամանակ Կ.պ.2)<br><br>**Կայուն պատկերացումները մշակելու համար անհրաժեշտ ռեսուրսներ.**<br>• Դասագիրք. պարագրաֆներ՝ 33, 34, 35:<br>• Հռոմը կայսրության դարաշրջանում. Հեռուստադպրոց<br>https://youtu.be/973jDZ1G6kM<br>• Հռոմեական կայսրությունը<br>https://youtu.be/xeGg3iL_18w<br><br>1. Ինչպե՞ս են սկսվում Հռոմեական կայսրությունում փոփոխությունները դարաշրջանի փոփոխությունների հետ II դարում:<br>2. Ինչո՞ւ Հռոմեական կայսրությունում կայուն դարաշրջանը փոխվեց ճգնաժամային դարաշրջանով:<br>3. Ի՞նչ գործոններ էին հանգեցնում Հռոմում կայուն դարաշրջանը ճգնաժամային դարաշրջանով փոփոխության:<br>4. Ի՞նչ մարտահրավերների էր բախվել Հռոմը III դարի սկզբին:<br>5. Հռոմում սկսված փոփոխություններն ինչպե՞ս ազդեցին դարաշրջանի վրա:<br>6. Ի՞նչ հիմնական բնութագրերով ու մարտահրավերներով է առանձնանում III դարը, որպես դարաշրջան, Հռոմեական կայսրության համար:<br>7. Ի՞նչ քաղաքական և տնտեսական փոփոխություններ են իրականացվել Հռոմում III դարում, որոնք այն վերածեցին ռազմական բռնապետության:<br>8. Ինչո՞ւ բարդացավ Հռոմի սահմանների մոտ իրավիճակը III դարի սկզբում:<br>9. Ինչպե՞ս է ճգնաժամի դարաշրջանն արտացոլվում Հռոմի արտաքին քաղաքականության վրա:<br>10. Ինչպե՞ս արտացոլվեց Հռոմում սկսված ճգնաժամային դարաշրջանը Սասանյան Իրանի և Քարթլիի թագավորության վրա:<br>11. Ի՞նչ փոփոխություններ բերեց համաշխարհային ճգնաժամը համաշխարհային և Հռոմեական պատմության մեջ:<br>12. Ի՞նչ չափանիշներ կարող ես բնութագրել նոր դարաշրջանի Հռոմի և աշխարհի պատմության մեջ:<br>13. Ինչո՞ւ են ժամանակակից պատմաբանները III դարը համարում նոր պատմական փուլի՝ ուշ անտիկ շրջանի սկիզբ:<br>14. Ինչո՞ւ են պատմաբանները վիճում տարբեր պատմական ժամանակաշրջանները սկսվելու և ավարտվելու տարեթվերի ու չափանիշների շուրջ: | • Ինչպես փոխվեց Հռոմեական կայսրությունը դարաշրջանի փոփոխության հետ մեկտեղ, և ինչ մարտահրավերների է նա բախվում համեմատաբար խաղաղ II դարից հետո: (Ժամանակ Կ.պ.1)<br><br>• Ինչ հիմնական բնութագրերով ու մարտահրավերներով է առանձնանում Հռոմեական կայսրության համար III դարը, որպես դարաշրջան: (Ժամանակ Կ.պ.2)<br><br>• Ինչպես պետք է փոխվի և ինչ գործոնների վրա պետք է հիմնված լինի կայսերական իշխանությունը, որպեսզի խնդիրներն ավելի արդյունավետ լուծի. միանձնյա պետք է լուծվի, թե՞ բաշխվի սուբյեկտների վրա: (Իշխանություն Կ.պ.2, 3, 4) |

**Քայլ 2**. Ինչպես պետք է փոխվի և ինչ գործոնների վրա պետք է հիմնված լինի կայսերական իշխանությունը, որպեսզի խնդիրներն ավելի արդյունավետ լուծի. միանձնյա պետք է լուծվի, թե՝ բաշխվի սուբյեկտների վրա: (Իշխանություն Կ.պ.2, 3, 4)

**Կայուն պատկերացումները մշակելու համար անհրաժեշտ ռեսուրսներ.**

• Դասագիրք. պարագրաֆ 36:
• Հռոմը կայսրության դարաշրջանում. Հեռուստադպրոց
https://youtu.be/973jDZ1G6kM
• Հռոմեական կայսրություն
https://youtu.be/xeGg3iL_18w
• Դիոկղետիանոսի բարեփոխումները
https://youtu.be/Y6M9zc7LSC4?t=451

1. Հիշի՛ր, թե ինչու էր Հռոմը փլուզման եզրին:
2. Որքա՞ն ժամանակ Հռոմը կկարողանար գոյություն ունենալ, եթե Ավրելիանոսը չհաղթեր:
3. Ինչպե՞ս Դիոկղետիանոսը վերաբաշխեց իշխանությունը:
4. Բարեփոխումների իրականացման ընթացքում իշխանության պահպանման և ամրապնդման համար ի՞նչ միջոցների վրա էր հիմնվում Դիոկղետիանոսը:
5. Ինչպե՞ս ավարտեց Դիոկղետիանոսը Հռոմում ներքին բախումներն իշխանության համար:
6. Ինչպե՞ս ազդեց Դիոկղետիանոսի արտաքին քաղաքականությունը Կովկասի, այդ թվում՝ Քարթլիի թագավորության վրա:
7. Որքանո՞վ կարողացավ Դիոկղետիանոսն իր կողմից իրականացված բարեփոխումների միջոցով լուծել Հռոմի առջև ծառացած խնդիրներն ու մարտահրավերները:
8. Հիշի՛ր, թե ինչ պատճառներ են հանգեցրել Հռոմում տնտեսական և ֆինանսական ճգնաժամի զարգացման, որքանո՞վ կարող էր Դիոկղետիանոսը լուծել այս խնդիրները:
9. Ինչո՞ւ քրիստոնյաները ընդունելի չէին հռոմեական իշխանության համար: Որքանո՞վ էր հնարավոր, որ այս հալածանքները հաջողություն ունենային: Պատմական զուգահեռներ անցկացրո՛ւ:
10. Ի՞նչ գործոնների վրա պետք է հիմնված լինի կայսեր իշխանությունը, որպեսզի նա ավելի արդյունավետ դառնա խնդիրների լուծման համար:
11. Առանձնացրո՛ւ հինգ կարևոր խնդիր և մշակի՛ր այս խնդիրների լուծման քո տարբերակները:

**Աշակերտների կողմից համալիր առաջադրանք ներկայացնելու գործընթացում ուսուցչի կողմից տրված հարցերը.**

• Նկարագրի՛ր, թե ինչպես է ընթացել առաջադրանքի վրա աշխատելու գործընթացը:
• Նկարագրի՛ր, թե ինչ արդյունք ես ստացել:
• Ո՞ր հարցին կանդրադառնա քո կողմից պատրաստված առաջադրանքը:
• Ըստ քեզ՝ ո՞ւմ պետք է հետաքրքրի քո կողմից ստեղծված համալիր առաջադրանքը և ինչո՞ւ:
• Ի՞նչ խոչընդոտների հանդիպեցիր առաջադրանքի վրա աշխատելիս:
• Ի՞նչ կանեիր այլ կերպ, եթե հիմա սկսեիր աշխատել առաջադրանքի վրա:
• Մեկ այլ ժամանակ կատարե՞լ ես նման ձևի կամ բովանդակության առաջադրանք:
• Քո կարծիքով, ինչո՞վ է նման քո առաջադրանքը քո դասընկերների աշխատանքներին և ինչո՞վ է տարբերվում նրանցից:

<table>
<tr>
<td>Երկարաժամկետ նպատակ<br><br>Նպատակային հասկացություն և դրա հետ կապված կայուն պատկերացումներ</td>
<td>Հարց/ենթահարցեր.<br>Բյուզանդիայի և Սասանյան Իրանի դիմակայությունը VI դարում<br><br>Ենթահասկացություն.<br>պատմաաշխարհագրական տարածություն, սոցիալական խավեր</td>
<td>Հանգուցային հարց/հարցեր<br>Ինչպես ներկայացնեմ գրավոր զեկույցի միջոցով VI դարում Բյուզանդիա-Սասանյան Իրանի միջև եղած դիմակայության մեջ աշխարհագրական տարածքի նշանակությունը և պատերազմական գոտում ապրող հասարակությունների էթնիկ, տնտեսական և կրոնական բնութագրերը:</td>
<td>Միջանկյալ ուսումնական նպատակ<br><br>Համալիր առաջադրանքի պայմանը</td>
</tr>
<tr>
<td>Տարածություն<br><br>1. Աշխարհագրական միջավայրը և աշխարհագրական գիտելիքներն ազդում են մարդկային հասարակության զարգացման վրա:<br><br>2. Շփման հաճախականությունը հանգեցնում է մեծ/փոքր սոցիալ-մշակութային տարածքների ստեղծման:<br><br>3.Կոնկրետ պատմաաշխարհագրական տարածքներ ունեն որոշակի տնտեսական, ռազմավարական և մշակութային նշանակություն:<br><br>Հասարակություն<br><br>1. Պատմականորեն շատ հասարակություններ են գոյություն ունեցել, սակայն նրանցից յուրաքանչյուրին բնորոշ էին ընդհանուր հատկանիշներ. նրանց անդամներն ունեին ընդհանուր ինքնություն, շահեր, մտահոգություններ և համաձայնում էին վարքագծի կանոնների և արժեքների շուրջ:<br>2. Հասարակությունը բաժանված է ավելի փոքր հասարակական խմբերի:<br>3. Փոքր հասարակությունները սովորաբար ավելի մեծ հասարակության մաս են կազմում:<br>4. Հասարակության անդամները տարբեր վերաբերմունք ունեն բազմազանության նկատմամբ:</td>
<td colspan="2">Համալիր առաջադրանքի մշակման փուլերը (ռեսուրսներ, ակտիվություններ).<br>I փուլ. Համալիր առաջադրանքի ձևը<br><br>Ինչպե՞ս պետք է ցուցաբերեմ իմ գիտելիքը՝ կապված ուսումնասիրվելիք հարցի հետ:<br><br>Ծանոթացնել քննարկվելիք հարցը և համալիր առաջադրանքի պայմանը<br><br>I փուլում բոլոր աշակերտները պետք է ստանան առաջադրանքը և պայմանավորվեն, թե ինչ ձևով են ներկայացնելու այն: Հնարավոր է համալիր առաջադրանքի պայմանը հարմարեցնել՝ ըստ աշակերտի կարիքների:<br><br>Նույն փուլում պետք է քննարկվի ստեղծագործական առաջադրանքի արդյունքը<br><br>Ռեսուրս/ակտիվություն.<br>Պայմանը և առաջադրանքի արդյունքը ծանոթացնելուց հետո ուսուցիչը կկիրառի խթանման փուլը մինի ձևաչափով՝ հարցերով.<br>• Ի՞նչ է զեկույցը:<br>• Ի՞նչ նպատակով են պատրաստում զեկույցը:<br>• Ի՞նչ ձևով կարելի է ներկայացնել զեկույցը:<br>• Ըստ տվյալների՝ գրավոր զեկույցի ի՞նչ ձևեր գոյություն ունեն:<br>• Վեննի դիագրամի օգտագործմամբ համեմատե՛ք հրատապ, ոչ հրատապ և ամփոփիչ գրավոր զեկույցի առանձնահատկությունները (Սխեմա 1)<br>• Ինչպե՞ս կազմել գրավոր զեկույցի տեքստը:<br>• Ունե՞ք արդյոք գրավոր զեկույց պատրաստելու փորձ:<br>• Կախված առաջադրանքի պայմանից՝ ո՞ր ձևի գրավոր զեկույցի վրա կաշխատեք:<br><br>Ուսուցիչն աշակերտներին մշակել է տալիս N1 ռեսուրսը և Վեննի դիագրամի օգտագործմամբ ուշադրությունը կենտրոնացնում գրավոր զեկույցի ձևի և հատկանիշների վրա, իսկ տեսանելիացման համար առաջարկում է N2 ռեսուրսը:<br><br>1. Գրավոր զեկույց<br>https://bit.ly/3fxQqol<br>2. Գրավոր զեկույցի նմուշ<br>http://legionerebi.com/failebi/salute.pdf<br><br>Վեննի դիագրամի օգտագործմամբ հրատապ, ոչ հրատապ և ամփոփիչ գրավոր հաշվետվության առանձնահատկությունների համեմատություն<br><br><table><tr><td colspan="2">Հրատապ գրավոր զեկույց</td></tr><tr><td>Ոչ հրատապ գրավոր զեկույց</td><td>Ամփոփիչ գրավոր զեկույց</td></tr><tr><td colspan="2"></td></tr></table></td>
<td>Պատկերացրո՛ւ, որ Հուստինիանոսի դարաշրջանում գործող զինվորական ստրատեգ ես: Կայսրը քեզ հրավիրել է պալատ և տեղեկացրել, որ դու նշանակվել ես կայսրության արևելյան զորքերի հրամանատար: Նա քեզ հանձնարարել է ուսումնասիրել կայսրության արևելյան սահմանները, ինչը նշանակում է Սասանյան Պարսկաստանի ռազմական ներուժի նկարագրություն, ինչպես նաև՝ սահմանամերձ տարածաշրջանում ապրող մարդկանց բնութագրերի ուսումնասիրություն: Կայսերը պետք է գրավոր զեկույց ներկայացվի, որում մանրամասն նկարագրված կլինեն քո գաղափարները. արևելքում որ սահմանամերձ գոտին ռազմավարական նշանակություն ունի և ինչու, ինչպես նաև տեղեկություններ այն մասին, թե ով է ապրում այս տարածքում և ինչու պետք է նրանց դարձնեք ձեզ աջակից: Ինչու պետք է կայսրը գլխավոր շեշտադրումն անի արևելքի վրա: Զեկույցին պետք է կցվի քարտեզ՝ համապատասխան նշումներով:</td>
</tr>
</table>

**II փուլ. Համալիր առաջադրանքի բովանդակությունը**

**Քայլ 1.** Այն աշխարհագրական տարածքը, որ Բյուզանդիայի և Սասանյան Իրանի միջև դիմակայության առարկա է: (Տարածություն, Կ.պ.1, Կ.պ.2, Կ.պ.3)

**Կայուն պատկերացումները մշակելու համար անհրաժեշտ ռեսուրսներ**
Դասագրքի պարագրաֆներ՝ 43, 44, 45, 46
• Բյուզանդիան IV-VII դարերում. Հեռուստադպրոց
https://youtu.be/smijg81s9Cs
• Պատմություն. Բյուզանդիան և Սասանյան Իրանը - EL.GE
https://youtu.be/CWFBJNE6Lw0

1. Ո՞ր աշխարհագրական տարածքն էր փորձում զավթել Բյուզանդիան, և ի՞նչ էր այս որոշման դրդապատճառը:
2. Ո՞ր աշխարհագրական տարածքն էր ներառում Սասանյան Իրանը, և արդյոք Վրաստանի տարածքը համարվո՞ւմ էր նրա մի մաս:
3. Առանձնացրո՛ւ Բյուզանդա-Սասանյան Իրան դիմակայության աշխարհագրական տարածքը և դատողությո՛ւն արա նրա աշխարհագրական առանձնահատկությունների մասին:
4. Ո՞րն էր այն տարածքի ռազմավարական նշանակությունը, որը փորձում էր վերահսկել Բյուզանդիան:
5. Ինչպե՞ս էր փոխվում Բյուզանդիա-Սասանյան Իրանի քաղաքական իրավիճակը պատերազմների արդյունքում III–VI դարերի ընթացքում:
6. Դատողությո՛ւն արա, թե ինչու էին աշխարհագրական գործոնները նպաստում Իրանի տարածքում առևտրային ուղիների առկայությանը:
7. Ինչո՞ւ էին և՛ Բյուզանդիան, և՛ Իրանը փորձում վերահսկել Կովկասը: Ի՞նչ ռազմավարական նշանակություն ուներ այս տարածքը:
8. Ընտրի՛ր աշխարհագրական տարածքը, որտեղ Սասանյան Իրանի դեմ հարձակում կիրականացնես:

**Քայլ 2.** Այս տարածքում ապրող համայնքների էթնիկ, կրոնական բնութագրերը. ինչ ընդհանուր բան ունեն նրանք ձեզ հետ, ծրագիրը, թե ինչպես պետք է նրանց ձեզ աջակից դարձնեք (Հասարակություն. Կ.պ.1, Կ.պ.2, Կ.պ.4)

**Կայուն պատկերացումները մշակելու համար անհրաժեշտ ռեսուրսներ**
Դասագրքի պարագրաֆներ՝ 43, 44, 45, 46
• Բյուզանդիայի և Սասանյան Իրանի դիմակայությունը IV-VII դարերում. Հեռուստադպրոց
https://youtu.be/fMUHtHZn9L0
• Վավերագրական ֆիլմ. Ճակատամարտ Դարայի մոտ, Ք.ա. 530 թ.
https://youtu.be/9GR_VRMq88Y

1. Հասարակական ի՞նչ շերտերից էին կազմված ինչպես Բյուզանդիայի, այնպես էլ Սասանյան Իրանի հասարակությունը, և ի՞նչ նշաններով էր կատարվում բաժանումը խավերի:
2. Ինչպե՞ս է արտացոլվել քրիստոնեության ներսում առկա երկու հոսանքների (միաբնակների և երկբնակների) միջև եղած դիմակայությունը պատերազմական գոտում ապրող հասարակության բոլոր ոլորտների վրա: Ո՞րն էր նրանց միջև եղած հիմնական տարբերությունը:
3. Դատողությո՛ւն արա. ի՞նչ հիմնական հասարակական խնդիրներ ուներ Բյուզանդական կայսրությունը Հուստինիանոսի դարաշրջանում: Ի՞նչ հիմնական խմբերի էր բաժանվում բյուզանդական հասարակությունը:
4. Բացատրի՛ր, թե ինչու էր Հուստինիանոսը պահպանում չեզոքություն քրիստոնեական հերետիկոսների նկատմամբ:

5. Ո՞րն էր Հուստինիանոսի ներքին քաղաքականության հիմնական նպատակը. ի՞նչ խմբերի էր բաժանվում նրա կայսրության հասարակությունը, և ինչպե՞ս էր նա փորձում միավորել այն։
6. Գնահատի՛ր Հուստինիանոսի գործունեությունը, ուրվագծի՛ր նրա կառավարման ժամանակահատվածում կարևորագույն ձեռքբերումներն ու արդյունքները ինչպես քաղաքական և տնտեսական, այնպես էլ հասարակական և մշակութային առումով։
7. Ի՞նչ նշանակություն ուներ միաստվածային կրոնը իրանական հասարակության համար, և ինչպիսի՞ գործունեությունը վերածվեց առաջատարի պարսկական հասարակության մեջ։
8. Ո՞րն էր իրանական հասարակության հիմնական միավորողը, ինչի՞ վրա էին հիմնվում նրանց ինքնությունն ու հետաքրքրությունները։
9. Ի՞նչ տեղ էին զբաղեցնում քրիստոնյաները իրանական հասարակության մեջ։
10. Ինչպե՞ս է առևտրային ուղիների առկայությունն ազդում Իրանի հասարակության վրա։
11. Ինչո՞ւ է Իրանը դարձել մշակույթների հանդիպման վայր։ Ինչպե՞ս նպաստեց տարբեր մշակույթների հետ շփումը իրանական հասարակության զարգացմանը։
12. Ինչպե՞ս է քաղաքային կյանքը նպաստում տնտեսության և հասարակական կյանքի զարգացմանը։
13. Դու, որպես Բյուզանդական կայսրության արևելյան զորքերի հրամանատար, պարսկական հասարակության ո՞ր սոցիալական խավին կաշխատես քեզ կողմնակից դարձնել և ինչպե՞ս։

**Քայլ 3.** Ո՞ր քաղաքները և ռազմավարական օբյեկտները պետք է նվաճի Բյուզանդական կայսրությունը և ինչո՞ւ։ (Տարածություն, Կ.պ.3)

**Կայուն պատկերացումները մշակելու համար անհրաժեշտ ռեսուրսներ.**
Դասագիրք. պարագրաֆներ՝ 43, 44, 45, 45

- Վավերագրական ֆիլմ. Ճակատամարտ Դարայի մոտ, 530 թ.
- https://youtu.be/9GR_VRMq88Y
- Ռազմական արվեստը միջնադարում
- https://files.fm/f/eakbftaty

Պատասխանի՛ր հարցերին և կազմի՛ր գրավոր զեկույց.
1. Ի՞նչ խնդիր պետք է լուծի Բյուզանդիան։
2. Ի՞նչ տարածք է պատրաստվում գրավել Բյուզանդիան։ Ինչո՞ւ է այս տարածքի գրավումը կարևոր։
3. Անվանի՛ր այն քաղաքներն ու տարածքները, որոնք մտադիր ես գրավել, վերլուծի՛ր այն որպես աշխարհագրական միջավայր, որը կազդի մարտական գործողությունների վրա, ինչպես նաև՝ սեփական և հակառակորդի ռազմական ուժերը, հասարակության կազմը, տնտեսությունը, մշակույթը։ Հիմնավորի՛ր այս քաղաքների գրավման կարևորությունը։
4. Դատողությո՛ւն արա SWOT վերլուծության իրականացման արդյունքների մասին։
5. Թեզերի տեսքով գրի՛ր այն խորհուրդները, որոնց վրա կկենտրոնացնես ուշադրությունը գրավոր զեկույցի ստեղծման ժամանակ։

**Աշակերտների կողմից համալիր առաջադրանք ներկայացնելու գործընթացում ուսուցչի կողմից տրված հարցերը.**

- Նկարագրի՛ր, թե ինչպես է ընթացել առաջադրանքի վրա աշխատելու գործընթացը։
- Նկարագրի՛ր, թե ինչ արդյունք ես ստացել։
- Ո՞ր հարցին կանդրադառնա քո կողմից պատրաստված առաջադրանքը։
- Բացատրի՛ր, թե ինչու ես ստեղծել արշավանքի պլան։ Ի՞նչ էիր ուզում ասել դրանով։

| | | |
|---|---|---|
| | • Ինչո՞ւ ես կարծում, որ քո ստացած արդյունքը իսկապես արշավանքի պլան է։<br>• Ըստ քեզ՝ ո՞ւմ պետք է հետաքրքրի քո կողմից ստեղծված համալիր առաջադրանքը և ինչո՞ւ։<br>• Ի՞նչ խոչընդոտների հանդիպեցիր առաջադրանքի վրա աշխատելիս։<br>• Ի՞նչ կանեիր այլ կերպ, եթե հիմա սկսեիր աշխատել առաջադրանքի վրա։<br>• Մեկ այլ ժամանակ կատարե՞լ ես նման ձևի կամ բովանդակության առաջադրանք։<br>• Քո կարծիքով, ինչո՞վ է նման քո առաջադրանքը քո դասընկերների աշխատանքներին և ինչո՞վ է տարբերվում նրանցից։ | |

| **Երկարաժամկետ նպատակ**<br><br>**Նպատակային հասկացություն և դրա հետ կապված կայուն պատկերացումներ** | **Հարց/ենթահարցեր**. Արաբական նվաճումները, արաբների վերաբերմունքը զավթված ժողովուրդների նկատմամբ<br><br>**Ենթահասկացություններ.** ճակատամարտ/պատերազմ, առօրյա կյանք | **Հանգուցային հարց/հարցեր** Ինչպես ներկայացնեմ Քարթլիի էրիսմթավարիի անունով գրված նամակում արաբական նվաճումների հետևանքները և նրանց վերաբերմունքը զավթված ժողովուրդների նկատմամբ։ | **Միջանկյալ ուսումնական նպատակ**<br><br>**Համալիր առաջադրանքի պայմանը** |
|---|---|---|---|
| **Պատմական իրադարձություն/ գործընթաց**<br><br>1.Յուրաքանչյուր պատմական իրադարձություն ունի իր սեփական պատճառը/ պատճառները և հետևանքը/հետևանքները։<br>2.Պատմաբանները հաճախ բանավիճում են պատմական իրադարձությունների պատճառների և հետևանքների շուրջ։<br>3.Որոշ պատմական իրադարձություններ ունեն տեղական, իսկ որոշները՝ համաշխարհային նշանակություն։<br>4.Պատմական փաստերն ու իրադարձությունները կարելի է տիպաբանորեն խմբավորել ըստ քաղաքական, սոցիալական, տնտեսական, մշակութային չափանիշների։<br><br>**Հասարակություն**<br><br>1.Պատմականորեն շատ հասարակություններ են գոյություն ունեցել, սակայն նրանցից յուրաքանչյուրին բնորոշ էին ընդհանուր հատկանիշներ. նրանց անդամներն ունեին | **Համալիր առաջադրանքի մշակման փուլերը (ռեսուրսներ, ակտիվություններ).**<br>**I փուլ. Համալիր առաջադրանքի ձևը**<br>**Ինչպե՞ս պետք է ցուցաբերեմ իմ գիտելիքը՝ կապված ուսումնասիրվելիք հարցի հետ**։<br>Ծանոթացնել քննարկվելիք հարցը և համալիր առաջադրանքի պայմանը<br>I փուլում բոլոր աշակերտները պետք է ստանան առաջադրանքը և պայմանավորվեն, թե ինչ ձևով են ներկայացնելու այն։ Հնարավոր է համալիր առաջադրանքի պայմանը հարմարեցնել՝ ըստ աշակերտի կարիքների։<br>Նույն փուլում պետք է քննարկվի ստեղծագործական առաջադրանքի արդյունքը<br><br>**Ռեսուրս/ակտիվություն**.<br>Պայմանը և առաջադրանքի արդյունքը ծանոթացնելուց հետո ուսուցիչը կկիրառի խթանման փուլը մինի ձևաչափով՝ հարցերով.<br>1. Ունե՞ք նամակ գրելու փորձ։<br>2. Ինչպե՞ս գրել նամակ։<br>3. Ի՞նչ հանձնարարականներ պետք է հաշվի առնել նամակ գրելիս։<br>Դրանից հետո ուսուցիչը դասարանի աշակերտներին բացատրում է գրավոր նախագծի առանձնահատկությունները՝ միաժամանակ առաջարկելով ռեսուրսներ ըմբռնելու համար։<br>1. Հանձնարարականներ նամակ ստեղծելու համար<br>https://files.fm/f/r8289d48g<br>2. Պատմական նամակի նմուշ<br><br>  | | Պատկերացրո՛ւ, որ VII դարում ապրող վրացի մարտիկ ես։ Յարմուքի ճակատամարտում կռվում էիր բյուզանդական կողմից և դրանից հետո քո աչքով տեսար, թե ինչպես արաբները գրավեցին Սիրիան և Պաղեստինը։ Պաղեստինին վրացական մենաստանից՝ Խաչի վանքից, հայրենակիցներին իրազեկելու նպատակով պետք է **գրես նամակ Քարթլիի էրիսմթավարիի անունով** և նրան տեղեկություն տրամադրես այն իրադարձությունների մասին, և նրան տեղեկություն տրամադրես այն իրադարձությունների մասին, որոնց ականատես ես եղել Սիրիայում և Պաղեստինում, նկարագրես նոր ժողովրդին, որը փոխեց նրանց ծագումը, կրոնը, առանձնահատկություն ները։ Լավ կլինի, եթե նամակում էրիսմթավարիին |

<table>
<tr>
<td>ընդհանուր ինքնություն, շահեր, մտահոգություններ և համաձայնում էին վարքագծի կանոնների և արժեքների շուրջ:<br>2. Հասարակությունը բաժանված է ավելի փոքր հասարակական խմբերի:<br>3. Փոքր հասարակությունները սովորաբար ավելի մեծ հասարակության մաս են կազմում:<br>4. Հասարակության անդամները տարբեր վերաբերմունք ունեն բազմազանության նկատմամբ:</td>
<td>Տրված ռեսուրսներն ավելի լավ ըմբռնելու նպատակով լրացրե՛ք ստորև տրված աղյուսակը.<br><br>
<table>
<tr><th>Նամակ ստեղծելու փուլերը</th><th>Բնութագրեր</th></tr>
<tr><td></td><td></td></tr>
<tr><td></td><td></td></tr>
</table>
<br>II փուլ. Աշխատանք համալիր առաջադրանքի բովանդակության վրա<br><br>
Քայլ 1. Ինչ պատճառներ հանգեցրին արաբների կողմից Սիրիա-Պաղեստինի զավթմանը, և ինչ նշանակություն ձեռք բերեց այս իրադարձությունը տարածաշրջանի և արտաքին աշխարհի համար (պատմական իրադարձություն/գործընթաց 1.3)<br><br>
Կայուն պատկերացումները մշակելու համար անհրաժեշտ ռեսուրսներ.<br>
• Դասագիրք. պարագրաֆներ՝ 50, 51, 52<br>
• Արաբությունը և Արաբական խալիֆայությունը. Հեռուստադպրոց<br>
• https://youtu.be/LEGLmYSrDfU<br><br>
1. Ի՞նչ մարտահրավերների բախվեցին արաբները Մուհամմեդի մահից հետո. որո՞նք էին դա հարուցող պատճառները:<br>
2. Ինչպե՞ս էր արտացոլվում աշխարհագրական միջավայրը արաբական քաղաքականության և տնտեսության վրա:<br>
3. Ի՞նչ պատմական իրադարձություններ և գործոններ են նպաստել Արաբական խալիֆայության ստեղծմանը և նրանց ագրեսիվ քաղաքականության ձևավորմանը:<br>
4. Ինչպե՞ս և ինչո՞ւ էր խալիֆայության քաղաքականությունը նպաստում իսլամի տարածմանը:<br>
5. Ո՞ր գործոններն են հեշտացրել արաբների կողմից Մերձավոր Արևելքի արագ նվաճումը:<br>
6. Ինչպե՞ս օգտվեցին արաբները Բյուզանդիայի և Իրանի միջև հակամարտությունից:<br>
7. Դատողությո՛ւն արա, թե որքան հնարավոր կլիներ համաշխարհային նվաճումներ վարելը՝ առանց քաղաքական բարենպաստ իրավիճակի:<br>
8. Ինչպե՞ս փոխվեց քաղաքական իրավիճակը արաբների և Սասանյանների միջև ընթացող պատերազմներից հետո:<br>
9. Վերհիշի՛ր նախորդ նյութը և դատողությո՛ւն արա, թե ինչ ռազմավարական և տնտեսական նշանակություն ունեին Եգիպտոսը և Արևելյան միջերկրածովյա տարածքը:<br>
10. Ինչպե՞ս փոխվեց իրավիճակը Արևելքում Յարմուքի ճակատամարտից հետո:<br>
11. Ո՞ր գործոններն են հեշտացրել արաբների կողմից Սիրիայի, Պաղեստինի և Եգիպտոսի զավթումը:<br>
12. Ի՞նչ գործոններ են նպաստել Արաբական խալիֆայության ներսում միասնական քաղաքական-մշակութային տարածքի ստեղծմանը:<br><br>
Քայլ 2. Ինչպես է արաբների հայտնվելուց հետո փոխվել նշված տարածքում ապրող ժողովուրդների վիճակը կրոնական և քաղաքական առումով: (Պատմական իրադարձություն/գործընթաց 4, հասարակություն 1) Ովքեր են արաբները, ինչն է նրանց միավորում և ինչպիսի վերաբերմունք ունեն նվաճված ժողովուրդների նկատմամբ: (Հասարակություն 1, 4)<br><br>
Կայուն պատկերացումները մշակելու համար անհրաժեշտ ռեսուրսներ.<br>
Դասագիրք. պարագրաֆներ՝ 50, 53<br>
• Արաբությունը և Արաբական խալիֆայությունը. Հեռուստադպրոց<br>
• https://youtu.be/LEGLmYSrDfU</td>
<td>խորհուրդ տաս, թե ինչ քաղաքականություն վարի արաբների հետ այն դեպքում, եթե նրանք հայտնվեն Քարթլիում:<br><br>
Հիմնավորի՛ր քո տարբերակը:<br><br>
• Որոնք էին արաբների կողմից Սիրիա-Պաղեստինի գրավման պատճառները, և ինչ նշանակություն ձեռք բերեց այս իրադարձությունը տարածաշրջանի և արտաքին աշխարհի համար: (Պատմական իրադարձություն/գործ ընթաց 1, 3)<br><br>
• Ինչպես է արաբների հայտնվելուց հետո փոխվել նշված տարածքում ապրող ժողովուրդների վիճակը կրոնական և քաղաքական առումով: (Պատմական իրադարձություն/ գործընթաց 4, հասարակություն 1)<br><br>
• Ովքեր են արաբները, ինչն է նրանց միավորում և ինչպիսի վերաբերմունք ունեն նվաճված ժողովուրդների նկատմամբ: (Հասարակություն 1, 4)</td>
</tr>
</table>

| | | |
|---|---|---|
| | 1. Դատողությո՛ւն արա, թե ինչու է ձևավորվել որպես մշակութային «այլ» հնագույն շրջանի քաղաքակրթությունը Բյուզանդիայի համար։<br>2. Ինչպե՞ս էր արտացոլվում աշխարհագրական միջավայրը արաբների ապրելակերպի և հասարակության վրա։<br>3. Ի՞նչ սոցիալական և տնտեսական գործոններ են ազդել Մուհամմեդի վրա։<br>4. Դատողությո՛ւն արա իսլամի հիմնական սկզբունքների մասին. ի՞նչ արժեքների վրա էր հիմնված մուսուլմանական հասարակությունը։<br>5. Դատողությո՛ւն արա արաբական հասարակության մասին իսլամ ընդունելուց հետո, որոնք էին նրանց ընդհանուր նշանները։ Ի՞նչ հիմնական խմբերի էին բաժանվում, և ըստ ինչ չափանիշի կարելի է նրանց բաժանել ավելի փոքր հասարակական խմբերի։<br>6. Համեմատի՛ր արաբական հասարակությունը իսլամի ընդունումից առաջ և այն ընդունելուց հետո. ինչպե՞ս է այն փոխվել, ինչ տարբեր խմբեր առաջացան արաբական հասարակության մեջ։<br>7. Դատողությո՛ւն արա, թե ինչու էին արաբները ցանկանում իրենց հասարակության մեջ զարգացնել գիտությունները։<br>8. Համեմատի՛ր Բյուզանդիայի և արաբների վերաբերմունքը այլ հասարակությունների և մշակույթի նկատմամբ։<br>9. Ի՞նչ գործոններ են նպաստել, որ Արաբական խալիֆայությունը դառնար գիտության, կրթության ու մշակույթի կենտրոն։<br>10. Վերհիշի՛ր նախորդ պարագրաֆներում ձեռք բերված գիտելիքները և դատողությո՛ւն արա, թե ինչպես է գիտության և տեխնոլոգիաների զարգացումը նպաստել հասարակության և տնտեսության առաջընթացին։<br>11. Ի՞նչ վերաբերմունք ունեին արաբները մշակութային «այլ»-ի նկատմամբ։<br>12. Որքանո՞վ է զարգացած հասարակության ստեղծումը նպաստում քաղաքացիական կյանքի առաջընթացին։ Ինչո՞ւ։<br>13. Ինչպե՞ս կարողացան արաբները աշխարհագրական և մշակութային գիտելիքների յուրացմամբ զարգացնել իրենց հասարակությունը։<br>14. Արաբական խալիֆայության մասշտաբից ելնելով՝ որքանո՞վ էր անհրաժեշտ միաժամանակ մի քանի կենտրոնների առկայությունը, և ի՞նչ ռազմավարական, քաղաքական ու մշակութային նշանակություն ունեն դրանք։<br>15. Ո՞ր մշակույթների ու ժողովուրդների ժառանգությունն էր այն տարածություններում, որոնք հայտնվել էին Արաբական խալիֆայության տարածքում, և դա ինչպե՞ս արտացոլվեց արաբական մշակույթի վրա։<br><br>**Աշակերտների կողմից համալիր առաջադրանք ներկայացնելու գործընթացում ուսուցչի կողմից տրված հարցերը.**<br>• Նկարագրի՛ր, թե ինչպես է ընթացել առաջադրանքի վրա աշխատելու գործընթացը։<br>• Նկարագրի՛ր, թե ինչ արդյունք ես ստացել։<br>• Ո՞ր հարցին կանդրադառնա քո կողմից պատրաստված առաջադրանքը։<br>• Բացատրի՛ր, թե ինչու ես ստեղծել գրավոր նախագիծ։ Ի՞նչ էիր ուզում ասել դրանով։<br>• Ինչո՞ւ ես կարծում, որ քո ստացած արդյունքը իսկապես գրավոր նախագիծ է։<br>• Ըստ քեզ՝ ո՞ւմ պետք է հետաքրքրի քո կողմից ստեղծված համալիր առաջադրանքը և ինչո՞ւ։<br>• Ի՞նչ խոչընդոտների հանդիպեցիր առաջադրանքի վրա աշխատելիս։<br>• Ի՞նչ կանեիր այլ կերպ, եթե հիմա սկսեիր աշխատել առաջադրանքի վրա։<br>• Մեկ այլ ժամանակ կատարե՞լ ես նման ձևի կամ բովանդակության առաջադրանք։<br>• Քո կարծիքով, ինչո՞վ է նման քո առաջադրանքը քո դասընկերների աշխատանքներին և ինչո՞վ է տարբերվում նրանցից։ | |

<table>
<tr>
<td>Երկարաժամկետ նպատակ<br><br>Նպատակային հասկացություն և դրա հետ կապված կայուն պատկերացումներ</td>
<td>Հարց/հարցեր.<br>Բյուզանդիան IX դարում<br><br>Ենթահասկացություններ.<br>Պատմողական աղբյուրներ</td>
<td>Հանգուցային հարց/հարցեր<br>Ինչպես ներկայացնեմ համառոտ տարեգրությունների միջոցով բյուզանդացի հեղինակների կողմից ստեղծված գրավոր աղբյուրների քննադատությունը IX դարում Բյուզանդիայում ընթացող իրադարձությունների մասին:</td>
<td>Միջանկյալ ուսումնական նպատակ<br><br>Համալիր առաջադրանքի պայմանը</td>
</tr>
<tr>
<td>Աղբյուր<br><br>1.Անցյալի մասին տեղեկություններ պատմաբանները ստանում են աղբյուրներից:<br>2.Անցյալն ուսումնասիրելիս պատմաբանները հիմնվում են տարբեր տեսակի աղբյուրների (նյութական, ազգագրական, գրավոր, լեզվաբանական, կինո-ֆոտո-ֆոնո փաստաթղթեր) վրա:<br>3.Ոչ բոլոր աղբյուրներն են հավասարապես վստահելի:<br>4.Աղբյուրներից ստացված տեղեկությունները միանշանակ չեն, ուստի դրանց մեկնաբանությունը պատմաբանների միջև քննարկման առարկա է:</td>
<td colspan="2">Համալիր առաջադրանքի մշակման փուլերը (ռեսուրսներ, ակտիվություններ).<br><br>I փուլ. Համալիր առաջադրանքի ձևը<br><br>Ինչպե՞ս պետք է ցուցաբերեմ իմ գիտելիքը՝ կապված ուսումնասիրվելիք հարցի հետ:<br><br>Ծանոթացնել քննարկվելիք հարցը և համալիր առաջադրանքի պայմանը<br><br>I փուլում բոլոր աշակերտները պետք է ստանան առաջադրանքը և պայմանավորվեն, թե ինչ ձևով են ներկայացնելու այն: Հնարավոր է համալիր առաջադրանքի պայմանը հարմարեցնել՝ ըստ աշակերտի կարիքների:<br><br>Նույն փուլում պետք է քննարկվի ստեղծագործական առաջադրանքի արդյունքը<br><br>Ռեսուրս/ակտիվություն.<br>Պայմանը և առաջադրանքի արդյունքը ծանոթացնելուց հետո ուսուցիչը կկիրառի խթանման փուլը մինի ձևաչափով՝ հարցերով.<br><br>1. Ի՞նչ եք իմացել համառոտ տարեգրությունների մասին: Երբևէ գրե՞լ ես արդյոք տարեգրություն:<br>2. Ինչպե՞ս պետք է գրվի տարեգրությունների ընդդիմադիր տեքստը:<br>3. Ի՞նչ պետք է նկատի ունենանք կարճ տարեգրություններ ստեղծելիս:<br>4. Որո՞նք են տարեգրության հիմնական առանձնահատկությունները:<br>5. Որքա՞ն օգտակար կարող են լինել պատմաբանի համար տարեգրությունների ընդդիմադիր տեքստերը որպես աղբյուր օգտագործելը:<br><br>Դրանից հետո ուսուցիչը դասարանում աշակերտներին բացատրում է տարեգրությունների հատկանիշները, իսկ ըմբռնելու համար առաջարկում է ռեսուրսներ.<br>1. – Ինչպե՞ս են պատմաբաններն ուսումնասիրում պատմությունը<br>https://files.fm/f/4as8bxnad<br>2. – Ի՞նչ ենք անում պատմական աղբյուրները մշակելիս<br>https://files.fm/f/2e95nmkt9<br>Տվյալ ռեսուրսը մշակելուց հետո քննարկե՛ք և քննարկման արդյունքները մուտքագրե՛ք վերլուծության աղյուսակի մեջ.<br><br><table><tr><td>Պատմական աղբյուրներ</td><td>Հատկանիշներ</td></tr><tr><td></td><td></td></tr></table><br>Տրված ռեսուրսն ըմբռնե՛ք ստորև տրված ճանաչողական սխեմայի օգտագործմամբ.<br><br><table><tr><td>Հանձնարարականներ գրավոր աղբյուրների վրա աշխատելու համար</td><td></td></tr><tr><td></td><td></td></tr><tr><td></td><td></td></tr></table></td>
<td>Պատկերացրո՛ւ, որ IX դարի բյուզանդական քաղաքական գործիչ ես: Կայսր Միքայել III-ի մերձավորներից ես և Վասիլ I-ի կողմից կազմակերպված դավադրությունից ու կայսրին սպանելուց հետո դու ստիպված էիր փախչել: Ապաստան ես գտել ֆրանկների մոտ: Պետք է ստեղծես համառոտ տարեգրություն, որտեղ կներկայացնես Թեոփանես Խոստովանողի և Հովհաննես Սկիլիցեսի (էջ 208) կողմից ստեղծված գրավոր աղբյուրների ընդդիմադիր տեքստ: Քննադատի՛ր Թեոփանեսի պատմությունը Վասիլի ծագման մասին և հիմնավորի՛ր քո կարծիքը, թե ինչու է նա ստում: Հակադրվի՛ր նրանց և ներկայացրո՛ւ Հովհաննես Սկիլիցեսի կողմից նկարագրված դավադրության նախապայմանների և Վասիլի բարեփոխումների մասին գոյություն ունեցած տեղեկությունների հակառակ մեկնաբանությունները:<br><br>Տարեգրության ընդդիմադիր տեքստում հստակ ցո՛ւյց տուր.<br><br>• Ինչ տիպի աղբյուրի է պատկանում քո տարեգրությունը, և որն է քո մոտիվացիան այն ստեղծելիս: (Կ.պ. Աղբյուր 1, 2)</td>
</tr>
</table>

| | | |
|---|---|---|
| | **II փուլ՝ Համալիր առաջադրանքի բովանդակությունը**<br><br>**Քայլ 1**. Ի՞նչ տիպի աղբյուրի է պատկանում քո տարեգրությունը, և ո՞րն է քո մոտիվացիան այն ստեղծելիս: (Կ.պ. Աղբյուր 1, 2)<br><br>**Կայուն պատկերացումները մշակելու համար անհրաժեշտ ռեսուրսներ.**<br>• Դասագիրք. պարագրաֆներ՝ 62-63, 64-65<br>• Միջին դարերի եվրոպական պատմագրություն<br>• https://youtu.be/30tqfgJuGls<br><br>1. Ինչպիսի՞ աղբյուրներ են օգտագործում պատմաբանները՝ պատմական իրադարձություններն ուսումնասիրելիս:<br>2. Ինչպե՞ս են պատմաբաններին օգնում ընդդիմադիր տարեգրությունները<br>պատմական իրադարձության ուսումնասիրման գործընթացում:<br>3. Ի՞նչ առանձնահատկություններ ունեն այն աղբյուրները, որոնք արտացոլում են IX դարի բյուզանդական իրականությունը, քաղաքական և կրոնական գործընթացները:<br>4. Որքանո՞վ հավաստի եք համարում տեղեկությունը Թեոփանեսի «Թագավորների կյանքից» Վասիլի ծագման մասին, և ի՞նչ նպատակի կարող է ծառայել Արշակունիների տոհմի հետ նրան կապելը: Ամրապնդե՛ք ձեր դիրքորոշումը փաստարկներով:<br>5. Որքանո՞վ  վստահելի եք համարում Հովհաննես Սկիլիցեսի կողմից ստեղծված գրավոր աղբյուրը: Ամրապնդե՛ք ձեր դիրքորոշումը փաստարկներով:<br>6. Ներկայացրե՛ք հակառակ մեկնաբանություններ Հովհաննես Սկիլիցեսի կողմից բերված դավադրության նախադրյալների և Վասիլի բարեփոխումների մասին:<br>7. Ո՞ր քաղաքական, տնտեսական ու մշակութային իրադարձությունների պատճառով են պատմաբանները Մակեդոնյան դինաստիայի ժամանակաշրջանը համարում Բյուզանդական կայսրության ամենափայլուն դարաշրջան:<br>8. Դատողությո՛ւն արա, թե ինչ տեսակի աղբյուրներ ունենք Բյուզանդիայի արտաքին քաղաքականության մասին, և որքանով համոզիչ են նրանք:<br>9. Ի՞նչ տիպի աղբյուր է Կոստանդին VII Ծիրանածինի աշխատությունը, և<br> ի՞նչ առումով է այն հետաքրքիր հետազոտողների համար:<br>10. Ինչպե՞ս եք օգտագործելու ձեր ուսումնասիրած աղբյուրները ընդդիմադիր տարագրություններ ստեղծելու համար:<br><br>**Քայլ 2**. Ինչն է որոշում քո կողմից ստեղծված աղբյուրի արժանահավատությունը, ինչու պետք է հավատան քեզ, այլ ոչ թե՝ այլ աղբյուրների: (Կ.պ. Աղբյուր 3)<br><br>Դասագիրք. պարագրաֆ՝ 31-32<br>• Միջին դարերի եվրոպական պատմագրություն<br>• https://youtu.be/30tqfgJuGls<br><br>1. Ովքե՞ր են ներկայացված աղբյուրների հեղինակները:<br>2. Ինչպե՞ս և ի՞նչ հանգամանքներում էին գրվում և ստեղծվում այդ աղբյուրները:<br>3. Ձեր ստեղծած ընդդիմադիր տարեգրությունները համեմատե՛ք բյուզանդացի հեղինակների աշխատությունների հետ և դատողությո՛ւն արեք տարբերությունների մասին:<br>4. Ի՞նչ փաստարկներով կամրապնդեք ձեր կողմից ստեղծված տարեգրության բովանդակության արժանահավատությունը:<br>5. Ինչու՞ պետք է հաջորդ սերունդը հավատա ձեր կողմից ստեղծված ընդդիմադիր տարեգրությանը, այլ ոչ՝ բյուզանդացի հեղինակներին: | • Ինչն է որոշում քո կողմից ստեղծված աղբյուրի արժանահավատությունը, ինչու պետք է հավատան քեզ և ոչ թե այլ աղբյուրների: (Կ.պ. Աղբյուր 3)<br><br>• Հետագա մեկնաբանության ժամանակ ինչ գործոնների պետք է ուշադրություն դարձնեն քո աղբյուրի և Վասիլի կողմնակիցների աղբյուրների միջև ծագած քննարկման մեջ: (Կ.պ. Աղբյուր 4) |

| | | |
|---|---|---|
| | **Քայլ 3**. Հետագա մեկնաբանության ժամանակ ինչ գործոնների պետք է ուշադրություն դարձնեն քո աղբյուրի և Վասիլի կողմնակիցների աղբյուրների միջև ծագած քննարկման մեջ: (Կ.պ. Աղբյուր 4)<br>• Դասագիրք՝ պարագրաֆ՝ 31-32<br>• Միջնադարյան եվրոպական պատմագրություն<br>• https://youtu.be/30tqfgJuGls<br><br>1. Ի՞նչ գործոնների վրա պետք է ուշադրություն դարձնի տարեգրությունների հեղինակը ընդդիմադիր աշխատության վրա աշխատելու գործընթացում:<br>2. Ի՞նչ գործոններ են պայմանավորել քո կողմից քննարկված բյուզանդացի հեղինակների աշխատությունների միտումնավորությունը: Քո կարծիքը ամրապնդի՛ր փաստարկներով:<br>3. Համեմատի՛ր քո կողմից ստեղծված ընդդիմադիր տարեգրությունները Վասիլի կողմնակիցների գրած աղբյուրների հետ և դատողությո՛ւն արա նրանց միջև եղած տարբերությունների մասին: Քո կարծիքներն ամրապնդի՛ր փաստարկներով:<br>4. Ո՞րն էր քո նպատակը, երբ ստեղծում էիր ընդդիմադիր տարեգրություններ:<br>5. Ո՞րն է հեղինակի պատասխանատվությունը, երբ նա ստեղծում է ընդդիմադիր տարեգրություններ: Զուգահեռնե՛ր անցկացրու՝ հիմնվելով ուսումնասիրված աղբյուրների վրա:<br><br>**Աշակերտների կողմից համալիր առաջադրանք ներկայացնելու գործընթացում ուսուցչի կողմից տրված հարցերը.**<br>• Նկարագրի՛ր, թե ինչպես է ընթացել առաջադրանքի վրա աշխատելու գործընթացը:<br>• Նկարագրի՛ր, թե ինչ արդյունք ես ստացել:<br>• Ո՞ր հարցին կանդրադառնա քո կողմից պատրաստված առաջադրանքը:<br>• Բացատրի՛ր, թե ինչու ես ստեղծել ընդդիմադիր տարեգրություն: Ի՞նչ էիր ուզում ասել դրանով:<br>• Ինչո՞ւ ես կարծում, որ քո ստացած արդյունքը իսկապես ընդդիմադիր տարեգրություն է:<br>• Ըստ քեզ՝ ո՞ւմ պետք է հետաքրքրի քո կողմից ստեղծված համալիր առաջադրանքը և ինչո՞ւ:<br>• Ի՞նչ խոչընդոտների հանդիպեցիր առաջադրանքի վրա աշխատելիս:<br>• Ի՞նչ կանեիր այլ կերպ, եթե հիմա սկսեիր աշխատել առաջադրանքի վրա:<br>• Մեկ այլ ժամանակ կատարե՞լ ես նման ձևի կամ բովանդակության առաջադրանք:<br>• Քո կարծիքով, ինչո՞վ է նման քո առաջադրանքը քո դասընկերների աշխատանքներին և ինչո՞վ է տարբերվում նրանցից: | |

| **Երկարաժամկետ նպատակ**<br><br>**Նպատակային հասկացություն և դրա հետ կապված կայուն պատկերացումներ** | **Հարց/հարցեր**.<br>Ֆրանկական կայսրությունը<br><br>**Ենթահասկացություններ.**<br>կառավարման ձևերը, ամենօրյա կյանքն ու կենցաղը | **Հանգուցային հարց/հարցեր**<br>Ինչպե՞ս ներկայացնեմ տարեգրությունների միջոցով միջնադարին բնորոշ կառավարման ձևերը և հասարակությունը: | Միջանկյալ ուսումնական նպատակ<br><br>**Համալիր առաջադրանքի պայմանը** |
|---|---|---|---|
| **Իշխանություն**<br>1. Իշխանության համար պայքարը պատմության անբաժանելի մասն է:<br>2. Իշխանության համար պայքար տեղի է ունենում ինչպես անհատների, | **Համալիր առաջադրանքի մշակման փուլերը (ռեսուրսներ, ակտիվություններ**).<br><br>**I փուլ. Համալիր առաջադրանքի ձևը**<br><br>**Ինչպե՞ս պետք է ցուցաբերեմ իմ գիտելիքը՝ կապված ուսումնասիրվելիք հարցի հետ**: | | Պատկերացրո՛ւ, որ դու IX դարում Տուրում ծառայող հոգևորական ես: Քո աչքի առջև ընթանում է մի գործընթաց, որտեղ ակնհայտ է, որ Կառլոս Մեծի կողմից ստեղծված պետության |

<table>
<tr>
<td>այնպես էլ հասարակական խմբերի միջև: Պայքարելիս նրանք օգտագործում են երկրում առկա հասարակական-քաղաքական կառույցները:<br>3.Իշխանություն ձեռք բերելու և պահպանելու համար անհրաժեշտ միջոցներ են ռեսուրսների (ֆինանսներ, մարդկային ռեսուրսներ) տիրապետումը, խորհրդանիշները, գաղափարախոսությունը:<br>4. Որոշ հասարակություններում իշխանությանը տիրապետում էին միանձնյա, իսկ որոշ տեղերում այն բաշխված էր մարդկանց/հասարակական խմբերի միջև:<br>5. Ժողովրդավարական պետության իշխանության աղբյուրը ժողովուրդն է:<br><br><br><br><br><br><br>Հասարակություն<br><br>1.Պատմականորեն շատ հասարակություններ են գոյություն ունեցել, սակայն նրանցից յուրաքանչյուրին բնորոշ էին ընդհանուր հատկանիշներ. նրանց անդամներն ունեին ընդհանուր ինքնություն, շահեր, մտահոգություններ և համաձայնում էին վարքագծի կանոնների և արժեքների շուրջ:<br>2. Հասարակությունը բաժանված է ավելի փոքր հասարակական խմբերի:<br>3. Փոքր հասարակությունները սովորաբար ավելի մեծ հասարակության մաս են կազմում:<br>4. Հասարակության անդամները տարբեր վերաբերմունք ունեն բազմազանության նկատմամբ:</td>
<td>Ծանոթացնել քննարկվելիք հարցը և համալիր առաջադրանքի պայմանը<br><br>I փուլում բոլոր աշակերտները պետք է ստանան առաջադրանքը և պայմանավորվեն, թե ինչ ձևով են ներկայացնելու այն: Հնարավոր է համալիր առաջադրանքի պայմանը հարմարեցնել՝ ըստ աշակերտի կարիքների:<br><br>Նույն փուլում պետք է քննարկվի ստեղծագործական առաջադրանքի արդյունքը<br><br>Ռեսուրս/ակտիվություն.<br>Առաջադրանքի պայմանը և ստեղծագործական արդյունքը ծանոթացնելուց հետո ուսուցիչը կկիրառի խթանման փուլը մինի ձևաչափով՝ հարցերով.<br>1. Ի՞նչ եք լսել տարեգրությունների մասին: Ունե՞ք արդյոք համապատասխան փորձ:<br>2. Ի՞նչ հարցեր պետք է նկատի ունենանք տարեգրություն ստեղծելիս:<br>3. Ինչպե՞ս պետք է ստեղծենք տարեգրություն:<br>4. Ինչի՞ վրա պետք է կենտրոնացնենք ուշադրությունը նման արդյունք ստանալու համար:<br>5. Ինչպե՞ս պետք է նրանում ներկայացված լինեն այն գործոնները, որոնց վրա կհիմնվի իշխանությունը, սոցիալական շերտերը, ռազմական և տնտեսական համակարգը:<br><br>Դրանից հետո ուսուցիչը հենց դասարանում աշակերտներին բացատրում է տարեգրությունների էությունը (Ռեսուրս 1), և հասկանալու համար առաջարկում է տարեգրության նմուշ (Ռեսուրս 2, 3), հենց դասարանում նա կկարդա հատվածներ ռեսուրսից, որի արդյունքում աշակերտները կուրվագծեն տարեգրության բնութագրերը:<br><br>1. Ի՞նչ է տարեգրությունը<br>http://www.nplg.gov.ge/saskolo/index.php?a=term&d=46&t=4410<br><br><br>2. Մեսխական «Դավիթնիի»՝ օրհներգերի գրքի տարեգրություն<br>https://bit.ly/3fuvgaQ<br><br>Տրված ռեսուրսները մշակելուց հետո որոշե՛ք տարեգրության բնութագրերը և նրա ստեղծման համար անհրաժեշտ քայլերը: Մշակված տեղեկությունները ներկայացրե՛ք ստորև տրված աղյուսակի տեսքով:<br><br>
<table>
<tr><th>Տարեգրության բնութագրերը</th><th>Քայլեր</th></tr>
<tr><td></td><td></td></tr>
</table>
<br>II փուլ՝ Համալիր առաջադրանքի բովանդակությունը<br>Քայլ 1. Կառավարման որ տեսակն է բնորոշ նշված դարաշրջանին, և ինչի հետ պետք է կապի կայսրն այն իշխանությունը, որպեսզի հպատակներին անվերապահ հավատարմության մեջ պահի: (Իշխանություն 3, 4, 2)<br><br>Կայուն պատկերացումները մշակելու համար անհրաժեշտ ռեսուրսներ.<br>• Դասագիրք. պարագրաֆներ՝ 53, 55, 56<br>• Մերովինգների և Կարոլինգների Ֆրանկական թագավորությունը<br>https://youtu.be/OHivjjXIHV8<br><br>1. Ինչպե՞ս և ինչո՞ւ փոխվեց Եվրոպան Հռոմի անկումից հետո:</td>
<td>կառավարման համակարգը խափանվել է:<br>Պետության վրա հարձակվում են նորմանները, և անհրաժեշտ է պետության ռազմական և քաղաքական կառույցները բարեփոխել:<br>Ստեղծի՛ր տարեգրություն, որում կնկարագրես, թե ինչպիսին էր ֆեոդալական համակարգը Կառլոս Մեծի օրոք, թե ինչպես է աշխարհը փոխվել նորմանների հայտնվելուց հետո, ինչպես պետք է վերափոխվի ֆեոդալական համակարգը, որպեսզի Ֆրանկական պետությունը կարողանա դիմակայել նորմաններին:<br>Տարեգրության մեջ պետք է նկարագրվի, թե ինչ գործոնների վրա պետք է հիմնվի կայսերական իշխանությունը, որ հասարակական խմբերի վրա պետք է արվեն շեշտադրումները և ինչպես պետք է վերափոխվի ռազմական և տնտեսական համակարգը:<br><br><br>Տարեգրության մեջ հստակ ցո՛ւյց տուր<br><br><br>• Կառավարման որ տեսակն է բնորոշ նշված դարաշրջանին, և ինչի հետ պետք է կապի կայսրն այն իշխանությունը, որպեսզի հպատակներին անվերապահ հավատարմության մեջ պահի: (Իշխանություն 3, 4, 2)<br><br>• Քանի շերտերի է բաժանված հասարակությունը, և որ շերտն ինչ պետք է անի նրա համար, որպեսզի նորմաններին հնարավոր լինի արդյունավետորեն դիմակայել:<br>(Հասարակություն 2, 3)<br><br>• Ինչ կառույցներ անհրաժեշտ կլինեն նրա համար, որ քո թագավորությունը քաղաքական և տնտեսական առաջընթաց ունենա (ֆինանսական և ռազմական</td>
</tr>
</table>

| | | |
|---|---|---|
| | 2. Դատողությու՛ն արա իշխանության կառուցվածքի մասին Ֆրանկական թագավորությունում: Ո՞ւմ ձեռքում էր իշխանությունը, և ի՞նչն էր հանդիսանում իշխանության աղբյուրը:<br>3. Ինչո՞ւ էր Հռոմի պապը հանդիսանում իշխանության և թագավորական լեգիտիմության աղբյուր:<br>4. Ի՞նչ գործոններ են նպաստել Կարոլինգյան դինաստիայի ստեղծմանը:<br>5. Ինչո՞ւ է Կառլոսը պատերազմներ վարելիս ընդգծել քրիստոնեական շարժառիթները, և ինչո՞ւ էր կարևոր ավարներին ու սաքսոններին քրիստոնեացնելը:<br>6. Ի՞նչ գաղափարական և հասարակական-քաղաքական կառույցների վրա էր հիմնվում Կառլոս Մեծի պայքարը կայսեր տիտղոսի համար և ի՞նչ խորհրդանիշներ էին տարբերում նրան թագավորի տիտղոսից:<br>7. Ի՞նչ հանգամանքներում է Կառլոս Մեծը ստացել կայսրի տիտղոսը և ի՞նչ փոխվեց իշխանության լեգիտիմության առումով:<br>8. Ինչո՞ւ էր կրոնը հանդիսանում իշխանության աղբյուր, և ի՞նչ նշանակություն ուներ կրոնական լեգիտիմացումը այս դարաշրջանի տիրակալների համար:<br>9. Վերհիշի՛ր անցած նյութը և դատողությու՛ն արա, թե ինչ տեսակի իշխանության մոդել գոյություն ուներ Ֆրանկական թագավորությունում: Համեմատի՛ր այս մոդելը քեզ արդեն ծանոթ հնագույն աշխարհի կառավարման ձևերի հետ:<br>10. Ի՞նչ նպատակի էր ծառայում Կառլոսի ակտիվ միջամտությունը կրոնական հարցերին:<br>11. Համեմատի՛ր, թե ինչպես է սահմանազատում ժամանակակից Արևմտյան աշխարհին իրարից կրոնը և քաղաքական իշխանությունը: Դատողությու՛ն արա դրա առաջացման պատճառների մասին:<br>12. Ինչո՞ւ կարող էին ցանկանալ Հռոմի պապը և Կառլոս Մեծը վերականգնել Հռոմեական կայսրությունը:<br>13. Ինչո՞ւ էր անհնարին վերակառուցել Հռոմեական կայսրությունը:<br>14. Ի՞նչ նպատակով է Կառլոսը օգտագործում կրոնական գործոնը հասարակական և պետական բարեփոխումների ժամանակ:<br>15. Ինչպե՞ս վերաբաշխեց Կառլոսն իշխանությունը վարչական բարեփոխումների միջոցով:<br>16. Իշխանության ո՞ր տեսակն էր տիրապետում ֆեոդալական դարաշրջանում՝ միանձնյա՞, թե՞ տարանջատած:<br>17. Ընտրի՛ր կառավարման այն տեսակը, որը կհամապատասխանի վերը նշված դարաշրջանին և կկապես քո իշխանության հետ:<br><br>**Քայլ 2.** Քանի շերտերի է բաժանված հասարակությունը, և որ շերտն ինչ պետք է անի նրա համար, որպեսզի նորմաններին հնարավոր լինի արդյունավետորեն դիմակայել: (Հասարակություն 2, 3) Ինչ կառույցների անհրաժեշտ կլինեն նրա համար, որ քո թագավորությունը քաղաքական և տնտեսական առաջընթաց ունենա (ֆինանսական և ռազմական ոլորտում): (Պատմական իրազ. 2, 4)<br><br>**Կայուն պատկերացումները մշակելու համար անհրաժեշտ ռեսուրսներ.**<br>• Դասագիրք. պարագրաֆներ՝ 57, 58, 58<br>• Միջնադարյան ֆեոդալական հասարակություն. Հեռուստադպրոց<br>• https://files.fm/f/pk3rxnsdb<br><br>1. Որո՞նք են միջնադարյան Եվրոպայի հիմնական հասարակական շերտերը. ի՞նչն էր նրանց միավորողը, նրանց գործունեությունը, շահերը և արժեքները:<br>2. Ինչպե՞ս էր իշխանությունը բաշխված միջնադարյան Եվրոպայում: Ինչպիսի՞ իշխանություն ուներ եկեղեցին | ոլորտում): (Պատմական իրազ. 2, 4) |

| | | |
|---|---|---|
| | միջնադարյան հասարակության մեջ: Ինչո՞ւ էր եկեղեցին իշխանության աղբյուրներից մեկը:<br>3. Ի՞նչ նշանակություն ուներ հողի տիրապետումը միջնադարյան հասարակության մեջ: Ինչպե՞ս էր հողի սեփականությունը կապված իշխանության հետ:<br>4. Ինչի՞ վրա էր հիմնված ֆեոդալական համակարգը, և ինչպե՞ս էր այն գործում:<br>5. Ի՞նչն էր սահմանում անհատների և հասարակական խմբերի իշխանությունը, և ինչպե՞ս էին պայքարում այն ձեռք բերելու համար:<br>6. Ի՞նչն էր ֆեոդալական դարաշրջանում իշխանության ձեռքբերման և պահպանման կարևորագույն ռեսուրսը:<br>7. Սոցիալական ի՞նչ փոքր խմբերի էր բաժանվում ֆեոդալական հասարակությունը, և ի՞նչ ընդհանուր հատկանիշներ, մտահոգություններ, վարքագծի կանոններ, հետաքրքրություններ ունեին ֆեոդալական հասարակության մեջ մտնող տարբեր սոցիալական շերտեր:<br>8. Ինչպիսի՞ վերաբերմունք կարող էին ունենալ հասարակության անդամներն այլ սոցիալական խավերի նկատմամբ:<br>9. Ի՞նչն է սահմանում տղամարդկանց և կանանց անհավասար հասարակական գործառույթը միջնադարում: Դա արհեստականորե՞ն ստեղծված համակարգ էր, թե՞ բնական վիճակ:<br>10. Որքանո՞վ տարբեր էր ազնվական ու հասարակ ծագում ունեցող կանանց կյանքը միջնադարյան հասարակության մեջ:<br>11. Ինչո՞ւ էին ֆեոդալների համար ասպետները ստեղծում իշխանության աղբյուր: Ինչպե՞ս էին նրանք կախված ֆեոդալներից:<br>12. Համեմատի՛ր, թե ինչպես է սահմանազատում ժամանակակից Արևմտյան աշխարհին իրարից կրոնը և քաղաքական իշխանությունը: Դատողությո՛ւն արա դրա հիմքում ընկած պատճառների մասին:<br>13. Ի՞նչ գործոններ էին սահմանում ֆեոդալական դարաշրջանի հասարակության մտածողությունն ու ապրելակերպը:<br><br>**Աշակերտների կողմից համալիր առաջադրանք ներկայացնելու գործընթացում ուսուցչի կողմից տրված հարցերը.**<br>• Նկարագրի՛ր, թե ինչպես է ընթացել առաջադրանքի վրա աշխատելու գործընթացը:<br>• Նկարագրի՛ր, թե ինչ արդյունք ես ստացել:<br>• Ո՞ր հարցին կանդրադառնա քո կողմից պատրաստված առաջադրանքը:<br>• Բացատրի՛ր, թե ինչու ես ստեղծել գրավոր նախագիծ: Ի՞նչ էիր ուզում ասել դրանով:<br>• Ինչո՞ւ ես կարծում, որ քո ստացած արդյունքը իսկապես գրավոր նախագիծ է:<br>• Ըստ քեզ՝ ո՞ւմ պետք է հետաքրքրի քո կողմից ստեղծված համալիր առաջադրանքը և ինչո՞ւ:<br>• Ի՞նչ խոչընդոտների հանդիպեցիր առաջադրանքի վրա աշխատելիս:<br>• Ի՞նչ կանեիր այլ կերպ, եթե հիմա սկսեիր աշխատել առաջադրանքի վրա:<br>•Մեկ այլ ժամանակ կատարե՞լ ես նման ձևի կամ բովանդակության առաջադրանք:<br>• Քո կարծիքով, ինչո՞վ է նման քո առաջադրանքը քո դասընկերների աշխատանքներին և ինչո՞վ է տարբերվում նրանցից: | |

## ՀԵՂԻՆԱԿԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### ՀԵՂԻՆԱԿԻ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐՆ ՈՒՍՈՒՑՉԻՆ

**§ 33-34-35. Ինչո՞ւ հայտնվեց Հռոմեական կայսրությունը ճգնաժամի մեջ:**

Պարագրաֆի ուսումնասիրության ընթացքում կարևոր է ակտիվացնել նախապես ունեցած գիտելիքները: Հիշեցնենք աշակերտներին, թե ինչպիսին էր իրավիճակը Հռոմեական կայսրությունում I-II դարերում և հետո անցնենք III դարում տեղի ունեցած փոփոխություններին: Ընդգծվի Կոմմոդոսի բարեփոխումների կարևորությունը Սենատի իրավունքների թուլացման առումով:
Կարևոր է ուրվագծել Հռոմեական կայսրության առջև ծառացած խնդիրները և կայսրերի կողմից իրականացված բարեփոխումները: Ուրվագծվի, թե որ բարեփոխումն է հաջողվել և ինչն է հանգեցրել այս հաջողությանը, որ բարեփոխմանը չի հաջողվել լուծել խնդիրը և ինչու: Արտաքին քաղաքական մասում կարևոր է կենտրոնանալ երկու աշխարհագրական հատվածների՝ Դանուբի տարածաշրջանի և Սիրիայի վրա:
Առաջարկեք քննարկել, թե ինչ աշխարհագրական տարածություն էին ընդգրկում վիճելի տարածքները Հռոմի և Սասանյան Պարսկաստանի միջև, և ինչպես է ծավալվել դիմակայությունը: Հռոմեական կայսրությունում կայսեր իշխանության թուլացումը և բանակի դերը կայսրեր թագադրելու, գահընկեց անելու գործընթացում: Ուշադրությունը կենտրոնացրեք նրա վրա, թե ինչ ազդեցություն են գործել այդ դարաշրջանի աշխարհի վրա կլիմայական փոփոխությունները, և ինչպես են դրանք արտացոլվել Հռոմեական կայսրության վրա:

Առաջարկում ենք արդյունքները: Ինչ գիտելիքներ պետք է մնան աշակերտին **կայուն պատկերացումների ձևով**՝ նշված պարագրաֆն ուսումնասիրելուց հետո՝ արդյունքները ձեռք բերված համարելու համար:

- II դարը Հռոմի պատմության մեջ կայուն ու երջանիկ դարաշրջան էր, III դարում իրավիճակը փոխվեց, և այն քաղաքական և տնտեսական խնդիրներով լի դարաշրջան էր: *(Ժամանակ)*
- Կոմմոդոս կայսեր կառավարումն ու կամայական բարեփոխումները հանգեցրին հռոմեական հաստատությունների խաթարման և քաղաքական անկայունության: *(Իշխանություն)*
- III դարի սկզբին թուլացավ Սենատի քաղաքական իշխանությունը, և բանակն այն իր ձեռքն առավ, ապստամբությունները կայսրերի դեմ և նրանց սպանությունները դարձան համակարգված: *(Ժամանակ, իշխանություն)*
- III դարում Հռոմեական կայսրությունում իշխանությունը ավանդական հռոմեական արիստոկրատիայից անցել է գավառներից ժամանած պաշտոնյաների ձեռքը: *(Իշխանություն)*
- Արտաքին քաղաքականության առումով ամենաակտիվ աշխարհագրական տարածքներն էին Դանուբի տարածաշրջանը և Սիրիան: Դանուբի տարածաշրջանը ենթարկվեց գերմանական ցեղերի հարձակման, իսկ արևելքում ակտիվացավ Սասանյան Իրանը: *(Պատմական իրադարձություն, տարածություն)*

## §36. Ինչպե՞ս Դիոկղետիանոսը կանգնեցրեց հռոմեական ճգնաժամը:

Նշված պարագրաֆն ուսումնասիրելիս կարևոր է ակտիվացնել նախնական գիտելիքներն ու նախորդ պարագրաֆներում սովորած նյութը: Պետք է ընդգծել ընդհանուր պատկերը Հռոմեական կայսրությունում Դիոկղետիանոսի իշխանության գալուց առաջ: Դասարանական քննարկումներում պետք է ներկայացնել Դիոկղետիանոսի իշխանության ընդհանուր խճանկարային պատկերը, ինչպիսի մարտահրավերների էր բախվել Հռոմեական կայսրությունը ներքաղաքական առումով, և որ աշխարհագրական տարածքն էր ամենաակտիվը արտաքին քաղաքականություն վարելիս: Սույն պարագրաֆում ևս կարևոր է որոշել Հռոմեական կայսրության արևելյան քաղաքականությունը և Սասանյան Իրանի հետ հակամարտության պատճառները, աշխարհագրական տարածքը և ընդհանուր միտումը:
Այստեղ կարելի է բերել նաև վրացական աշխարհի համատեքստը: Կարևոր է ընդգծել Դիոկղետիանոսի կողմից Օգոստոսի ժամանակաշրջանից սկսած պրինցիպատը դոմինատով փոխելը և նաև քառապետության ձևավորումը: Սահմանվեն այս բարեփոխումների պատճառները և նրանց բնույթը:
Պետք է ուշադրություն դարձնել նաև քրիստոնյաների գործոնին: Ինչու էին քրիստոնյաները սպառնալիք ներկայացնում Հռոմեական կայսրության համար: Կարևոր է նաև ցույց տալ, թե որքան կարևոր է կենտրոնական իշխանության հզորացումը՝ պետության առջև ծառացած մարտահրավերներն ու խնդիրները լուծելու համար: Վերջում խնդրում ենք աշակերտներին գնահատել Դիոկղետիանոսին, որպես բարեփոխիչ կայսրի:

Առաջարկում ենք արդյունքները: Ինչ գիտելիքներ պետք է մնան աշակերտին **կայուն պատկերացումների ձևով՝** նշված պարագրաֆն ուսումնասիրելուց հետո՝ արդյունքները ձեռք բերված համարելու համար:

- III դարում Հռոմեական կայսրության առջև ծառացած բազմաբնույթ խնդիրները Դիոկղետիանոս կայսրը փորձեց լուծել բարեփոխումների միջոցով: *(Ժամանակ)*
- 293 թվականին Դիոկղետիանոս կայսրը Հռոմեական կայսրությունը բաժանեց 4 վարչական մասերի, որպեսզի հնարավոր լիներ այն ավելի արդյունավետ կառավարել: Այս իրադարձությունը կոչվեց քառապետություն: *(Պատմական իրադարձություն)*
- Եթե նախորդ կայսրերի գլխավոր ու ոչ կայուն հենակետը բանակն էր, Դիոկղետիանոսը կայսերական իշխանության հենասյան վերածեց բյուրոկրատական և վարչական ապարատը: *(Իշխանություն)*
- Սասանյան Իրանի դեմ Դիոկղետիանոսի հաջող ռազմական արշավներից հետո Քարթլին և Հայաստանը անցան հռոմեական ազդեցության տակ, ինչը նպաստեց նշված տարածքում քրիստոնեության տարածմանը: *(Տարածություն, պատմական իրադարձություն)*
- Դիոկղետիանոսի դարաշրջանը բնութագրվում է քրիստոնյաների նկատմամբ դաժան հալածանքներով և ճնշումներով, սակայն դա չխանգարեց քրիստոնեական կրոնի տարածմանը հռոմեական հասարակության մեջ: *(Ժամանակ, հասարակություն)*

**§37. Ինչո՞ւ Կոստանդիանոս կայսրը փոխեց իր քաղաքականությունը քրիստոնյաների նկատմամբ Հռոմեական կայսրությունում**

Նշված պարագրաֆի վրա աշխատելիս՝ ցանկալի է կենտրոնանալ հիմնականում քրիստոնեության, որպես նոր կրոնի տարբերվող բնույթի վրա: Ընդգծվի քրիստոնեության, ինչպես կրոնական, այնպես էլ քաղաքական, սոցիալական և տնտեսական բնույթը: Ինչ էր քարոզում այն և ինչով էր տարբերվում ավանդական հռոմեական կրոնից: Ցանկալի է կազմակերպել քննարկում, թե ինչ խնդիրներ էին ստեղծում քրիստոնյաները Հռոմեական կայսրության իշխող շրջանակների համար, և ինչով կարող էր հարուցված լինել նրանց դեմ խիստ քաղաքականության վարումն ու հետապնդումը: Քննարկեք այն գործոնները, որոնք հռոմեական հասարակության համար քրիստոնեությունը գրավիչ կդարձնեին: Որ սոցիալական շերտի շահերն էր արտահայտում այն: Ուշադրությունը կենտրոնացրեք նրա վրա, թե ինչ էր քարոզում քրիստոնեությունը, և ինչու այն ընդունելի կլիներ հասարակության ստորին շերտերի համար: Հստակ ուրվագծեք այն գործոնը, որ պատմական մեծ իրադարձությունը պայմանավորված է բազմաթիվ պատճառների ամբողջությամբ, և քրիստոնեական հավատքի նկատմամբ Կոստանդիանոս Մեծի որոշումը նույնպես պայմանավորում էին բազմաթիվ պատճառներ:

Մենք մեծ ուշադրություն պետք է դարձնենք Միլանի հրովարտակին և խնդրենք աշակերտներին քննարկել, թե ինչ իմաստ էր կրում այս փաստաթուղթը: Պետք է ուրվագծվի դրա ընդունման մի քանի պատճառ և հարց տանք, թե ինչպես է այս փաստաթուղթը փոխել համաշխարհային պատմության ապագա զարգացումը: Ցանկալի է ընդգծել հռոմեական աշխարհի կենտրոնը արևելք տեղափոխելու և Կոստանդնուպոլսի հիմնադրման քաղաքական, տնտեսական և գաղափարական նշանակությունը: Ինչով էր պայմանավորված այս որոշումը, և ինչ արդյունք բերեց ի վերջո:

Առաջարկում ենք արդյունքները: Ինչ գիտելիքներ պետք է մնան աշակերտին **կայուն պատկերացումների ձևով**՝ նշված պարագրաֆն ուսումնասիրելուց հետո՝ արդյունքները ձեռք բերված համարելու համար:

- Հիսուս Քրիստոսի գործունեությունը և նոր կրոնի՝ քրիստոնեության ծնունդը կապված է Հռոմի արևելյան նահանգի՝ Հրեաստանի հետ, ինչը փոխեց Հռոմեական կայսրության և աշխարհի ապագան: *(Պատմական իրադարձություն, տարածություն)*
- Քրիստոնեությունը հռոմեական հասարակությանը մղում էր մտածելակերպի և ապրելակերպի փոփոխությունների, ինչին հռոմեական կայսերական իշխանությունները հակադրվեցին դաժան մեթոդներով: *(Հասարակություն, պատմական իրադարձություն)*
- Քրիստոնեությունը քարոզում էր մարդու հավասարություն ի ծնե և բարեգործություն, ինչով շատ արագ նվաճեց կայսրության ցածր սոցիալական շերտերի սրտերը: *(Հասարակություն)*
- 313 թվականի Միլանի հրովարտակով քրիստոնյաները Հռոմեական կայսրությունում ստացան դավանանքի իրավունք, այս իրադարձությունը պայմանավորեցին բազմաթիվ գործոններ, մի կողմից՝ Կոնստանդիանոսի քաղաքական նախաձեռնությունը, մյուս կողմից՝ քրիստոնյաների առանց այն էլ ամրապնդված դիրքերը: *(Պատմական իրադարձություն)*
- 325 թվականին Նիկիայի եկեղեցական ժողովի գումարումը ծառայում էր քրիստոնյաների միջև աստվածաբանական վեճի լուծմանը, որովհետև քրիստոնյաների միջև դիմակայությունը Հռոմեական կայսրությունում մեծ սոցիալական և քաղաքական խնդիրներ կստեղծեր: *(Պատմական իրադարձություն)*
- Արևելյան գավառներում քրիստոնյաների դիրքերն ավելի ամուր էին, ինչպես նաև ավելի կայունություն էր նրանց բնորոշ տնտեսապես և քաղաքականապես, այդ իսկ պատճառով Կոնստանդիանոսը քաղաքական կենտրոնը տեղափոխեց արևելք և հիմնեց Կոստանդնուպոլիսը: *(Տարածություն, հասարակություն, պատմական իրադարձություն)*

## §38-39. Ինչո՞ւ անկում ապրեց Արևմտյան Հռոմեական կայսրությունը:

Նշված պարագրաֆի վրա աշխատելիս պետք է շեշտը դրվի IV դարի վերջին Հռոմեական կայսրության երկու մասի բաժանման պատճառների և յուրաքանչյուր կայսրության աշխարհագրական ու քաղաքական բնութագրերի վրա: Աշակերտներին բացատրենք, թե ինչպիսի խնդիրների են բախվել երկու կայսրություններն էլ: Պետք է մանրամասն բացատրել, թե ինչ իրադարձություն և գործընթաց է արտահայտում «Ժողովուրդների մեծ գաղթը»: Որոնք են քոչվոր հասարակության բնութագրերը: Աշակերտների հետ միասին քննարկեք Ժողովուրդների մեծ գաղթի պատճառները և դատողություն արեք դրա հետևանքների մասին: Դասի հիմնական նպատակը պետք է լինի այն պատճառների ու հետևանքների հստակ ներկայացումը և վերլուծումը, որոնք հանգեցրել են Արևմտյան Հռոմեական կայսրության անկման: Ցույց տանք գերմանական ցեղերի մոտիվացիան, երբ նրանք հատում էին Հռոմեական կայսրության սահմանները և հռոմեացիների վերաբերմունքը նրանց նկատմամբ, հատկապես Աղբյուր N 10-ում ներկայացված նյութի քննարկմանը: Կարևոր է հստակ և պարզ ընդգծել հռոմեական աշխարհի կարծրատիպային վերաբերմունքը մնացած հասարակությունների նկատմամբ և այն, որ այս կարծրատիպերը հաճախ չէին համապատասխանում պատմական իրականությանը, կենտրոնանալ նրա վրա, թե ինչու է դա խնդրահարույց: Աշակերտներին առաջարկեք համեմատել, թե ինչու է անկում ապրել Արևմտյան Հռոմեական կայսրությունը, և ինչու է պահպանել իր դիրքերը Արևելյան Հռոմը:
Անչափ կարևոր է ցույց տալ, թե ինչ հետևանքներ բերեց Հռոմի կայսեր  գահընկեց անելը և Հռոմեական կայսրության քաղաքական վախճանը: Սակայն աշակերտներին պետք է բացատրել, որ քաղաքական ավարտը չէր նշանակում հռոմեական աշխարհի իսպառ անհետացում, և այն ստեղծում էր Եվրոպայի կրոնական և մշակութային կարգը:

Առաջարկում ենք արդյունքները: Ինչ գիտելիքներ պետք է մնան աշակերտին **կայուն պատկերացումների ձևով**՝ նշված պարագրաֆն ուսումնասիրելուց հետո՝ արդյունքները ձեռք բերված համարելու համար:

- 4-րդ դարի վերջին Թեոդոսիոս կայսրը Հռոմեական կայսրությունը բաժանեց երկու մասի, որից հետո Արևմտյան և Արևելյան Հռոմեական կայսրությունները ձևավորվեցին որպես տարբեր աշխարհներ և զարգացան տարբեր ճանապարհներով *(Պատմական իրադարձություն, տարածություն)*
- Ք.ա. II – մ.թ IV դարերը հայտնի են որպես Ժողովուրդների մեծ գաղթի դարաշրջան: Այս ժամանակաշրջանում կլիմայական փոփոխությունների և քոչվոր ցեղերի տեղաշարժի պատճառով ժողովրդի մեծ զանգված էր տեղաշարժվում արևելքից Արևմտյան Եվրոպայի ուղղությամբ և մոտենում էր Հռոմեական կայսրության սահմաններին: *(Պատմական իրադարձություն, ժամանակ)*
- Գերմանախոս ցեղերի դեպի արևմուտք գաղթին և Հռոմեական կայսրության տարածքներ ներխուժմանը հետևեց Արևմտյան Հռոմեական կայսրության թուլացում և վերջնական անկում: *(Պատմական իրադարձություն)*
- V դարում Հռոմ քաղաքը երեք անգամ գրավել են գերմանական ցեղերը, իսկ վերջապես նրա քաղաքական գոյությունը 476 թվականին ավարտել է օստգոթերի առաջնորդ Օդոակրը: *(Ժամանակ, պատմական իրադարձություն)*
- Չնայած Հռոմեական կայսրության քաղաքական ավարտին՝ Հռոմը մնաց արևմտյան աշխարհի մշակութային, կրոնական և տնտեսական կենտրոն և արևմտյան տարածքի ապագան պայմանավորեց հենց հռոմեական ժառանգությունը: *(Տարածություն)*
- Ժամանակակից եվրոպական աշխարհի հիմքը դրվել է հենց այս դարաշրջանում, այն ձևավորվել է հռոմեական ժառանգության գերմանական տարրի և քրիստոնեության միաձուլման արդյունքում: *(Տարածություն, պատմական իրադարձություն)*

**§40-41. Ինչպե՞ս ձևավորվեցին «բարբարոսական» թագավորությունները, և ինչպե՞ս առաջացավ Ֆրանկական ֆեոդալական միապետությունը:**

Նշված պարագրաֆը մշակելիս ցանկալի է, որ խթանվի քննարկում հարցի շուրջ, թե ինչպիսի քաոս կարող է առաջացնել կենտրոնական իշխանության խափանումը: Հետևաբար՝ Հռոմեական կայսրության անկումից հետո ինչ կարգ է խափանվել Եվրոպայում, և ինչ ճանապարհով էր հնարավոր կայունացնել այս գործընթացը: Կարևոր դետալ է, որ աշակերտներին լավ բացատրվի հասարակության ցեղային փուլի և պետական փուլի տարբերությունը: Ի՞նչ ուղի անցան գերմանական ցեղերը, երբ գերմանական թագավորություններ էին ստեղծում հռոմեական մշակույթի հետ մերձենալուց հետո:
Հիմնական շեշտը կարելի է դնել նրա վրա, թե ինչ ժառանգություն է թողել հռոմեական աշխարհը եվրոպական հասարակություններին, ինչպես նաև, Արևելյան Հռոմեական կայսրության քաղաքական նշանակությունը ցույց տալ գերմանական միապետներին: Որո՞նք էին լեգիտիմացման միջոցները և որտեղի՞ց էին ստանում դրանք:
Պարագրաֆի հիմնական գաղափարն է ուրվագծել այն առանձնահատուկ բնութագրերը, որոնց միջոցով ֆրանկները կարողացան գերազանցել գերմանական մնացած թագավորություններին: Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել Խլոդվիգի կողմից քրիստոնեության ընդունմանն ու կաթոլիկ դավանանքի ընդունման գաղափարական և քաղաքական-գործնական նշանակությանը: Ինչպես է նպաստել Ֆրանկների թագավորության տնտեսության զարգացմանը աշխարհագրական գործոնը, և ինչպես է հիմք դրվել ֆեոդալիզմի համակարգին:

Առաջարկում ենք արդյունքները: Ինչ գիտելիքներ պետք է մնան աշակերտին **կայուն պատկերացումների ձևով`** նշված պարագրաֆն ուսումնասիրելուց հետո՝ արդյունքները ձեռք բերված համարելու համար:

- Արևմտյան Հռոմեական կայսրության անկումից հետո նշված աշխարհագրական տարածքում հռոմեական ժառանգության ազդեցությամբ գերմանական թագավորություններ ձևավորվեցին: *(Տարածություն, պատմական իրադարձություն)*
- Հռոմի անկումից հետո այն կորցրեց քաղաքական կենտրոնի գործառույթը, թեև պահպանեց քրիստոնեական աշխարհի կրոնական կենտրոնի իր դերը: *(Պատմական իրադարձություն)*
- Գերմանական թագավորություններից ամենահաջողակները ֆրանկներն էին, ինչը, առավելապես նրանց թագավոր Խլոդվիգի քաղաքական հաշվարկների արդյունքն էր: *(Պատմական իրադարձություն)*
- Խլոդվիգը որպես իր թագավորության հիմք ընտրեց քրիստոնեական հավատքը և, ի տարբերություն մյուս գերմանական ցեղերի, նա մկրտվեց որպես կաթոլիկ, ինչով ձեռք բերեց Հռոմի պապի և բյուզանդական կայսեր աջակցությունը: *(Պատմական իրադարձություն, իշխանություն)*
- Կաթոլիկական դավանանքն ընդունելուց հետո ֆրանկները հեշտությամբ գրավեցին Հռոմեական կայսրության տարածքները, որտեղ ապրում էին կաթոլիկական դավանանքի Հռոմի քաղաքացիներ: *(Հասարակություն, տարածություն)*

## §42. Ինչպե՞ս շարունակվեց Հռոմեական կայսրության շարունակական ավանդույթը Արևելքում:

Այս պարագրաֆի նպատակն է քննարկել և ուսումնասիրել Բյուզանդական կայսրության կառավարման տեսակը՝ կայսեր կառավարման յուրահատուկ մոդելը և դրա բնութագրերը:
Ամենակարևորը մինչ այդ սովորած նյութն ակտիվացնելն է, այն է՝ հիշեցնել հնագույն դարաշրջանի Հռոմի կայսեր կառավարման օրինականացման միջոցներն ու այլ բնութագրեր, և դրա ֆոնի վրա ցույց տալ, թե ինչպես է այն փոխակերպվել միջնադարում:
Պետք է առանձնացնել երեք կարևորագույն մանրամասներ: Կայսերական իշխանության լեգիտիմացման միջոցների փոխակերպումը քրիստոնեություն ընդունելուց հետո: Նաև երեք հասարակական խմբերի՝ Սենատի, բանակի և ժողովրդի դերը նոր կայսրի ընտրության հարցում և նաև կայսեր իշխանության փոխանցման հաստատված կարգը: Կարևոր է քննարկել հարցը, թե ինչպես է Բյուզանդական կայսրության քաղաքական կյանքի վրա ազդել այն հանգամանքը, որ կայսեր պաշտոնը չի փոխանցվել տոհմական ժառանգության տեսքով: Պարագրաֆում հիմնական ուշադրությունը պետք է կենտրոնացվի երկու ասպեկտների վրա. բյուզանդական կառավարման համակարգի փոփոխության վրա VII դարից հետո: Կարևոր է ընդգծել նաև այն մանրամասնը, որ Բյուզանդական կայսրությունում հոգևոր իշխանությունը գտնվում էր աշխարհիկ իշխանության ազդեցության ներքո: Կայսրն իր մեջ էր միավորել բարձրագույն հոգևոր և աշխարհիկ իշխանությունները: Պետք է ընդգծվի տարբերությունը Բյուզանդիայում և Արևմուտքում հաստատված կառավարման ոճերի միջև:

Առաջարկում ենք արդյունքները: Ինչ գիտելիքներ պետք է մնան աշակերտին **կայուն պատկերացումների ձևով՝** նշված պարագրաֆն ուսումնասիրելուց հետո՝ արդյունքները ձեռք բերված համարելու համար:

- Բյուզանդական կայսրությանը բնորոշ էր կառավարման յուրահատուկ ձև, տնտեսական և քաղաքական համակարգեր: *(Իշխանություն, հասարակություն)*
- Բյուզանդիան առաջին փուլում անձեռնմխելի է թողել հնագույն դարաշրջանի կառավարման համակարգերը, VI դարում Հուստինիանոս կայսրը հռոմեական իրավունքը համապատասխանեցրեց քրիստոնեական հասարակության կյանքի ոճին *(Ժամանակ, պատմական իրադարձություն, իշխանություն)*
- Բյուզանդական կայսեր ընտրությունը երեք հասարակական խմբերի՝ Սենատի, բանակի և Կոստանդնուպոլսի բնակչության արտոնությունն էր: *(Հասարակություն, իշխանություն)*
- Բյուզանդական կայսրությունում քաղաքական իրավունքների համար իրար հակադրվեցին երկու հասարակական խմբեր՝ նվենեցները (կապույտները) և «պրասիանները» (կանաչներ): Կապույտները հիմնականում խոշոր հողագործներ էին, իսկ կանաչները՝ հարուստ վաճառականներ: *(Հասարակություն)*
- Բյուզանդիայի կայսրը իր իշխանության ներքո միավորում էր ինչպես աշխարհիկ, այնպես էլ հոգևոր իշխանությունը: *(Իշխանություն)*

## §43-44. Ինչպե՞ս փորձեց Հուստինիանոսը վերականգնել Հնագույն Հռոմի գաղափարը:

Նշված պարագրաֆի ուսումնասիրության և մշակման գործընթացում կարևոր է կենտրոնանալ մի քանի հիմնական ասպեկտների վրա: Մասնավորապես՝ Հուստինիանոսի բարեփոխումների, պատերազմների և նրա մասին գոյություն ունեցած աղբյուրների տարբեր մեկնաբանությունների վրա: Ցանկալի է աշակերտների ուշադրությունը կենտրոնացնել Քաղկեդոնի ժողովի, երկբնակների և միաբնակների միջև եղած տարբերությունների և տարբեր կրոնական խմբերի նկատմամբ կայսրության տիրակալների քաղաքականության վրա: Ցանկալի է դատողություն անել, թե ինչ տիպի խնդիրներ էր ստեղծում Բյուզանդիայում կրոնական անհանդուրժողականությունը:

Կարևորագույն և ուշագրավ մաս են Հուստինիանոսի իրավական բարեփոխումները և օրենքների ժողովածուի խմբագրումը: Այս դեպքում նույնպես ցանկալի է քննարկել, թե ինչ նշանակություն ունի պետության և հասարակության համար պատշաճ իրավական համակարգը: Պետք է ուշադրությունը կենտրոնացնել Հուստինիանոսի արտաքին քաղաքականության երեք հիմնական ուղղությունների և արտաքին քաղաքական նպատակի վրա՝ վերականգնել Հռոմեական կայսրությունը հնագույն դարաշրջանի աշխարհագրական սահմաններում, պատերազմի ընթացքի վրա՝ արևմուտքում գոթերի և վանդալների, իսկ արևելքում՝ պարսիկների հետ:
Չենք կարող շրջանցել այն եզակի դեպքը, որ ստանում ենք Պրոկոպիոս Կեսարացու աղբյուրներից: Ընդդիմադիր բնույթի և բովանդակության հատվածներն այն աղբյուրներից, որ ներկայացված է Աշակերտի գրքում: Կարևոր է, այս հատվածների վրա հիմնվելով կազմակերպել տարբեր տեսակի ինտերակտիվ գործունեություններ:

Առաջարկում ենք արդյունքները: Ինչ գիտելիքներ պետք է մնան աշակերտին **կայուն պատկերացումների ձևով՝** նշված պարագրաֆն ուսումնասիրելուց հետո՝ արդյունքները ձեռք բերված համարելու համար:

- Հուստինիանոս կայսեր կառավարման դարաշրջանը՝ 527-565 թթ., անվանում են Բյուզանդական կայսրության ոսկեդար բազմաթիվ հանգամանքների պատճառներով: *(Ժամանակ)*
- Հուստինիանոս կայսեր նախաձեռնությամբ ստեղծվել է քաղաքացիական օրենքների ժողովածու, որը պարունակում էր մոտ 5 հազար հռոմեական օրենքներ, որոնք միաձուլվում էին քրիստոնեական աշխարհայացքի հետ: *(Պատմական իրադարձություն, հասարակություն)*
- Հուստինիանոսի ժամանակաշրջանում կայսրությունը պատերազմում էր վանդալների հետ Աֆրիկայում, օստոգոթների հետ՝ Իտալիայում, իսկ արևելքում իրանցիների դեմ, վերջնական արդյունքում՝ հաջողությամբ: *(Տարածություն, պատմական իրադարձություն)*
- Հուստինիանոսի կառավարումը բնութագրվում է վիթխարի շինարարություններով, դրանցից ամենակարևորը Սուրբ Սոֆիայի (Այա Սոֆիա) տաճարի կառուցումն էր: *(Ժամանակ, պատմական իրադարձություն)*
- Հուստինիանոսի դարաշրջանի ու կառավարման մասին տեղեկությունները հիմնականում մեզ տրամադրում է Պրոկոպիոս Կեսարացին, որի գրառումները պարունակում են հակասական բովանդակություն և տալիս տարբեր մեկնաբանություններ անելու հնարավորություն: *(Աղբյուր)*

### § 45. Ինչպե՞ս ստեղծվեց Սասանյան Իրանը: Ի՞նչ դեր էր կատարում այն տարածաշրջանի առևտրային հարաբերություններում:

Տվյալ պարագրաֆի հատուկ ուշադրությամբ ուսումնասիրումը կարևոր է մի քանի մանրամասների պատճառով: Նախ՝ ընդհանրապես իրանական տարածության և աշխարհի մեծագույն մշակութային և քաղաքական դերի ներկայացումը III-VII դարերի աշխարհում: Երկրորդ՝ այն հանգամանքը, որ Սասանյան Իրանն այն պետությունն էր, որը շատ սերտ հարաբերություն և ազդեցություն ուներ քարթվելական տարածության վրա:
Ցանկալի է պարագրաֆն ուսումնասիրելիս ուշադրությունը կենտրոնացվի Սասանյան Իրանի կրոնի և նրա յուրահատուկ բնույթի ու առանձնահատկությունների վրա: Ցանկալի է խոսել ընդհանրապես զրադաշտականության հակասության մասին քրիստոնեության հետ և նրա ազդեցության մասին Իրանի հասարակության և քաղաքական կյանքի վրա: Կարևոր է կենտրոնանալ այն աշխարհագրական տարածության և նրա առանձնահատկությունների վրա, որի նկատմամբ վերահսկողություն հաստատելու

համար դարեր շարունակ միմյանց հետ պայքարել են Բյուզանդիան և Սասանյանները:
Կարևոր է որոշել աշխարհագրական տարածքը և դրա աշխարհառազմավարական կարևորությունը: Ինչով էր պայմանավորված Իրանի մշակութային և տնտեսական զարգացումը, և ինչպիսի դերակատարություն ուներ դրանում աշխարհագրական դիրքի գործոնը: Ինչ առանձնահատուկ հատկանիշներ ուներ Սասանյան պետությունը և նրա հասարակությունը, ցանկալի է քննարկել նաև Սասանյանների Իրանի կրոնական քաղաքականությունը և վրացական աշխարհի վրա դրա արտացոլումը:

Առաջարկում ենք արդյունքները: Ինչ գիտելիքներ պետք է մնան աշակերտին **կայուն պատկերացումների ձևով**՝ նշված պարագրաֆն ուսումնասիրելուց հետո՝ արդյունքները ձեռք բերված համարելու համար:

- Մ.թ. III-VII դարերում Արևելյան աշխարհի գլխավոր քաղաքական և մշակութային ուժը հանդիսանում էր Սասանյան Իրանը: *(Ժամանակ)*
- Աշխարհագրական դիրքը, այն գործոնները, որ նրա տարածքում նախորդ դարաշրջաններում բազմաթիվ քաղաքակիրթ պետություններ և հասարակություններ գոյություն ունեին, ինչպես նաև Արևելքի և Արևմուտքի միջև առևտրային ուղիներն այդտեղով էին անցնում, նրան վերածել են տնտեսապես և մշակութային առումով հզոր պետության: *(Տարածություն)*
- Սասանյան Իրանի կրոնը, միաստվածային հավատքը զրադաշտականությունն էր, որի երկրպագության առարկան արևն ու կրակն էին: *(Հասարակություն)*
- Սասանյան Իրանի հասարակությունը բաժանված էր 4 հիմնական շերտերի, որոնց սոցիալական տարբերակումը պայմանավորված էր նրանց գործունեության բաշխմամբ: *(Հասարակություն)*
- Սասանյանների Իրանը դարեր շարունակ դիմակայում էր դեռ Հռոմեական կայսրությանը, հետո Բյուզանդիային՝ Սիրիայի ու Միջագետքի, ինչպես նաև Կովկասյան տարածաշրջանում տիրապետման համար: *(Տարածություն, պատմական իրադարձություն)*

**§46. Ինչո՞ւ էին միմյանց հակադրվում Սասանյան Իրանը և Բյուզանդական կայսրությունը:**
Նշված պարագրաֆը մշակելիս շատ կարևոր է վերհիշել նախորդ պարագրաֆներում անցած նյութը և ակտիվացնել նախապես ունեցած գիտելիքները: Պետք է ընդգծել Բյուզանդական կայսրության և Սասանյան Իրանի բնութագրերը, ցանկալի է դա անել երկու սյունականոց ձևաչափով, որպես համեմատություն. պետական կառավարման ոճի, հասարակություն շերտերի, կրոնի և գաղափարախոսության և ամենակարևորը ընդհանուր հետաքրքրության ոլորտի: Համեմատելուց հետո պետք է ուրվագծվի այն հայեցակետը, որը պայմանավորում էր դարավոր, գրեթե պարբերական բնույթի դիմակայությունն այս երկու ուժերի միջև:
Ցանկալի է հատուկ ուշադրություն կենտրոնացնել այն աշխարհագրական տարածության առանձնահատկությունների վրա, որը հանդիսանում էր Բյուզանդական կայսրության և Սասանյան Իրանի միջև ընթացող պատերազմների էպիկենտրոն և վիճելի տարածք՝ Սիրիա, Միջագետք և Կովկաս: Աշակերտներին առաջարկենք քննարկում թեմայի մասին, թե ինչու էր այս աշխարհագրական տարածքը կարևոր այս երկու քաղաքական գերիշխող պետությունների համար:
Կարևոր է ընդգծել այն մանրամասները, թե ինչպես էր արտացոլվում այս հակամարտությունը բյուզանդական և իրանական հասարակության ու քաղաքական կյանքի վրա և ինչ ազդեցություն ուներ այն հակամարտության էպիկենտրոնում ապրող հասարակությունների վրա: Հատկապես կարևոր է շեշտել այն մանրամասները, որ նրանց հակամարտության ակտիվ էպիկենտրոններից մեկը վրացական տարածությունն էր, և առճակատման հետևանքը մեծ ազդեցություն էր գործում Իբերիայի և Էգրիսիի հասարակության զարգացման վրա:

Առաջարկում ենք արդյունքները: Ինչ գիտելիքներ պետք է մնան աշակերտին **կայուն պատկերացումների ձևով**՝ նշված պարագրաֆն ուսումնասիրելուց հետո՝ արդյունքները ձեռք բերված համարելու համար:

- III-VII դարերում գրեթե շարունակաբար միմյանց դեմ պայքարում էին Բյուզանդական կայսրությունն ու Սասանյան Իրանը՝ Սիրիա-Միջագետքի և Կովկասյան տարածաշրջանի նկատմամբ քաղաքական ազդեցություն ձեռք բերելու համար: *(Ժամանակ, տարածություն)*
- Հատկապես ակտիվ ռազմական հակամարտությունները VI դարում առնչվում են Հուստինիանոսի և Խոսրով I Անուշիրվանի կառավարման շրջանին: *(Ժամանակ, պատմական իրադարձություն)*
- Բյուզանդիայի և Սասանյանների միջև վեճի ոլորտը մշակութային և տնտեսապես հարուստ Սիրիայի ու Պաղեստինի տարածաշրջանն էին, ինչպես նաև Կովկասը, քանի որ Արևելքում գերիշխող բոլոր պետությունների համար կարևոր էր Կովկասյան լեռների անցումների նկատմամբ վերահսկողության սահմանումը և այդ կերպ առևտրային ուղիների և տարածքների անվտանգության ապահովումը: *(Տարածություն, պատմական իրադարձություն)*

**§47-48. Ինչպիսի՞ն էր քաղաքական իրավիճակը Հուստինիանոս I Մեծի գահակալությունից հետո:**
Նշված պարագրաֆը հասկանալու և մշակելու գործընթացում կարևոր է նախապես ունեցած գիտելիքներն ակտիվացնել: Հուստինիանոսի ժամանակաշրջանը և ընդհանրապես դարաշրջանի առանձնահատկությունները վերլուծելուց հետո պետք է ընդգծվեն ընդհանուր ուրվագծերը այն մարտահրավերների, որոնց առջև հայտնվել է Բյուզանդական կայսրությունը: Նշված պարագրաֆում կարևոր է ուշադրություն կենտրոնացնել 2 հիմնական ասպեկտների վրա: Դրանցից առաջինը կայսրության առջև ծառացած արտաքին քաղաքական խնդիրներն են, ակտիվ աշխարհագրական տարածքները և սրության աստիճանը: Ինչպես նաև կայսրության փոխակերպումը Մավրիկիոս կայսեր դարաշրջանում: Ցանկալի է ընդգծել, թե ինչպիսի քաղաքական վտանգների է բախվել Բյուզանդական կայսրությունը Հուստինիանոսի իշխանությունից հետո, և որքան արմատապես է փոխվել կայսրության արտաքին և ներքին քաղաքական իրավիճակը: Ինչի հետևանքով է տնտեսապես թուլացել կայսրությունը, և բալկանյան տարածքում կայսրության գավառների մշտական ասպատակությունները ավարների և սլավոնների կողմից: Ցանկալի է քննարկում ծավալել այն հիմնական հարցի շուրջ, թե ինչու կայսրությունն այսքան արագ թուլացավ: Բալկանյան տարածությունից հետո կարևոր է քննարկել, թե ինչպես է ընթացել Սասանյանների հետ դիմակայությունը Հուստինիանոսից հետո:
Պարագրաֆն ուսումնասիրելու ընթացքում հիմնական շեշտադրումը պետք է արվի այն փոփոխությունների վրա կայսերական առումով, ինչն իրականացվել է Մավրիկիոս կայսեր դարաշրջանում: Ինչպես է փոխվել կայսերական գաղափարը և մոտեցումը, թե ինչպես փոխակերպվեց Բյուզանդական կայսրությունը: Կարևոր է օգտագործել նաև համեմատական վերլուծություն՝ Մավրիկիոսի և Հուստինիանոսի միջև: Ցանկալի կլինի ժամանակ տրամադրել այն մանրամասներին, թե ինչպես է հաջողվել Մավրիկիոսին իրանցիների ու ավարների դեմ հաջող քաղաքականություն վարել:

Առաջարկում ենք արդյունքները: Ինչ գիտելիքներ պետք է մնան աշակերտին **կայուն պատկերացումների ձևով**՝ նշված պարագրաֆն ուսումնասիրելուց հետո՝ արդյունքները ձեռք բերված համարելու համար:

- Հուստինիանոսի կառավարումից հետո Բյուզանդական կայսրությունը բախվեց տնտեսական և քաղաքական խնդիրների: *(Ժամանակ)*
- Հուստինիանոսի իրավահաջորդների ժամանակաշրջանում գլխավոր արտաքին քաղաքական ուղղությունը հանդիսանում էր բալկանյան տարածությունը, որտեղ կայսրության գավառների վրա

գրոհում էին ավարներն ու սլավոնները և նաև արևելքում՝ Սիրիան և Միջագետքը, որտեղ ավանդաբար ակտիվացան Սասանյանները: *(Տարածություն, պատմական իրադարձություն)*

- Մորիկ (նաև՝ Մավրիկիոս) կայսեր ժամանակաշրջանը բնութագրվում է ավարների և Սասանյանների կողմից ստեղծված խնդիրներ լուծելով և կայսրությունը փոխակերպելով: *(Ժամանակ)*
- VI-VII դարերի սահմանագծին Բյուզանդական կայսրությունը լեզվական և մշակութային առումով ավելի շուտ հունական էր, քան հռոմեա-լատինական, դա վերաբերում էր հասարակության բոլոր շերտերին: *(Պատմական իրադարձություն, հասարակություն)*
- Մորիկը օգնություն է խնդրել Սասանյան Խոսրով իշխանից՝ Իրանի գահը զբաղեցնելու համար, հետևաբար Իրանի հետ խնդիրները ժամանակավորապես լուծվեցին՝ Մորիկի սպանությունից հետո Իրանի շահը հայտարարեց, որ ցանկանում է գահի բարձրացնել Մորիկի որդուն՝ Թեոդոսիոսին, և այդ պատճառով պատերազմ սկսեց Բյուզանդական կայսրության հետ: *(Պատմական իրադարձություն, իշխանություն)*
- Մորիկի դարաշրջանում ավարտվեց Հռոմեական կայսրության հնագույն ձևը և ծնվեց միջնադարյան Հունական կայսրությունը: *(Ժամանակ, պատմական իրադարձություն)*

**§49. Ինչո՞ւ էր Հերակլիոս կայսրը պայքարում Սասանյան Իրանի դեմ:**

Տվյալ պարագրաֆը հանդիսանում է նախորդ պարագրաֆների տեսական և ժամանակագրական շարունակությունը, ուստի կարևոր է ակտիվացնել նախապես ունեցած գիտելիքները և վերհիշել այն հանգամանքները, թե ինչ իրավիճակում է զբաղեցնում կայսերական գահը Հերակլիոս կայսրը: Կարևոր է մի քանի ասպեկտներ ուրվագծել, հիմնականում Սասանյան Իրանի կողմից արևելյան գավառների ռազմական միջոցներով գրավումը և Երուսաղեմի գրավման կարևորությունը բյուզանդական հասարակության համար: Այդ դարաշրջանի հասարակության համոզմունքն ու աշխարհայացքը լավ ներկայացնելու համար կարևոր կլինի ուշադրությունը կենտրոնացնել Աշակերտի գրքում ներկայացված աղբյուրների հատվածների վրա, որոնք տեղեկություններ են տրամադրում, թե ինչ պատճառներով են բացատրում բյուզանդացիները ծագած քաղաքական ու տնտեսական խնդիրների նախադրյալները: Կարևոր մանրամասն է Կոստանդնուպոլսի պաշարումը Սասանյանների ու ավարների կողմից և դրա հաղթահարման միջոցներն ու նշանակությունը: Քննարկեք, թե որքան կարևոր էր այդ դարաշրջանում Հերակլիոսի կերպարը, և ինչպես նրան հաջողվեց շրջել իրավիճակը: Պետք է հատուկ ուշադրություն  կենտրոնացնել Հերակլիոսի արշավանքին Կովկաս և հարձակումը Թբիլիսիի վրա, ինչ նշանակություն ուներ Կովկասյան տարածաշրջանը Բյուզանդիայի համար, և ինչ դիրքորոշում ուներ վրաց աշխարհը:

Ցանկալի է լավ ուրվագծել  այն քաղաքական իրավիճակը, որ ստեղծվել էր Հերակլիոսի պատերազմի և հետհրադադարային Արևելքում, որովհետև կարևոր է ընդգծել այս մանրամասնը, թե ինչ իրավիճակում ի հայտ եկան արաբները Արևելքում:

Առաջարկում ենք արդյունքները: Ինչ գիտելիքներ պետք է մնան աշակերտին **կայուն պատկերացումների ձևով**՝ նշված պարագրաֆն ուսումնասիրելուց հետո՝ արդյունքները ձեռք բերված համարելու համար:

- VII դարի սկզբին կայսերական իշխանության բռնի ուժով իրականացված փոփոխությունները քաղաքական հուզումներ առաջացրին, դրան ավելացան Սասանյանների հարձակումները արևելքից, որից հետո կայսրությունը բախվեց աղետի, հենց այդ ժամանակ է գահի բարձրացել կայսր Հերակլիոսը: *(Ժամանակ, պատմական իրադարձություն)*
- VII դարի 20-ական թվականներին Կոստանդնուպոլիսը ենթարկվել է Սասանյանների և նրանց դաշնակից ավարների ու սլավոնների հարձակման, սակայն քաղաքը դիմադրել է, և կայսրությունն անցել է հակահարձակման: *(Պատմական իրադարձություն, ժամանակ)*

- Իրան-Բյուզանդիա հակամարտության ակտիվ փուլերից մեկը Կովկասում, մասնավորապես Քարթլիում է տեղի ունեցել, որտեղ Բյուզանդիայի կողմից պատերազմի մեջ ընդգրկվել է Խազարական պետությունը: *(Տարածություն, պատմական իրադարձություն)*
- VII դարի 30-ական թվականներին Մերձավոր Արևելքում հայտնվեց նոր հզոր ուժ՝ ի դեմս արաբների, Բյուզանդիան և Սասանյան Իրանը երկարատև պատերազմից թուլացած  հայտնվեցին նոր թշնամու դեմ: *(Ժամանակ, տարածություն, պատմական իրադարձություն)*

**§50. Ինչպե՞ս իսլամը փոխեց արաբական հասարակությունը:**
Նշված պարագրաֆը ցանկալի է վերլուծվի՝ ընդգծելով մի քանի ասպեկտներ: Նախ և առաջ նրանում լավ պետք է քննարկվեն միաստվածային կրոնի՝ իսլամի բնութագրերը: Ինչ է նա քարոզում, և ինչպես է իսլամը փոխել արաբ ժողովուրդների աշխարհայացքը և ապրելակերպը: Կարևոր է ուրվագծել արաբական հասարակության առանձնահատկությունները իսլամից առաջ, և ինչպես են դրանք փոխվել իսլամից հետո: Կարևոր է քննարկել Արաբական թերակղզու աշխարհագրական առանձնահատկությունները և ընդգծել  այն հարցը, թե ինչ ազդեցություն է ունեցել աշխարհագրական միջավայրը հասարակության զարգացման վրա: Անչափ կարևոր է նաև Մուհամմեդի կերպարի և իսլամի, որպես նոր կրոնի, առանձնահատկությունների մանրամասն քննարկումը: Իսլամի նմանությունը քրիստոնեությանը և տարբերությունը նրանից: Ի՞նչ արժեհամակարգի վրա էին հիմնված իսլամի կրոնի ծնունդը և արաբների զավթումները: Ինչպես էր բաժանվում արաբական հասարակությունը, և ինչ գործոնների վրա էր հիմնվում խավերի տարբերակումը:

Առաջարկում ենք արդյունքները: Ինչ գիտելիքներ պետք է մնան աշակերտին **կայուն պատկերացումների ձևով՝** նշված պարագրաֆն ուսումնասիրելուց հետո՝ արդյունքները ձեռք բերված համարելու համար:

- Մինչ իսլամի ծնունդը արաբները քոչվոր ցեղեր էին, որոնք վարում էին հավաքչական տնտեսություն և չունեին մշտական բնակելի տարածք: *(Ժամանակ, հասարակություն)*
- Աշխարհագրական դիրքի շնորհիվ Արաբական թերակղզով անցնում էին հարուստ  առևտրային ուղիներ, որոնք հանգեցրին տեղի ցեղերի ներգրավման առևտրային գործունեությանը  և հարևան ժողովուրդների հետ կապերի ավելացման: *(Տարածություն, հասարակություն)*
- Իսլամի հավատքի ձևավորումը և քարոզումը կապված է Մեքքա քաղաքում բնակվող վաճառական Մուհամմեդի անվան հետ: *(Պատմական իրադարձություն)*
- Ըստ Մուհամմեդի՝ աշխարհը ստեղծել է մեկ Աստված, որին երկրպագում են հրեաները և քրիստոնյաները, նրանք խեղաթյուրել են նրա հավատքը, ինքը քարոզում էր Աստծո խոսքը և նրա առաքյալն էր: *(Պատմական իրադարձություն)*
- Իսլամական հասարակության աշխարհայացքը որոշվել է իսլամական կրոնով և դրա աղբյուրը Ղուրան Սուրբ գիրքն է: *(Հասարակություն)*

**§51-52. Ինչո՞ւ արաբները սկսեցին նվաճողական պատերազմներ:**
Նշված պարագրաֆը մշակելիս շատ կարևոր է ակտիվացնել նախապես ունեցած գիտելիքները, որովհետև արաբական նվաճումները վերլուծելուց առաջ անհրաժեշտ է վերլուծել այն քաղաքական իրավիճակը և հավասարակշռությունը, որ ստեղծվել էր Սիրիա- Միջագետքի տարածաշրջանում արաբների հայտվելուց առաջ, և ինչպիսին էր իրավիճակը Բյուզանդիայում և Սասանյան Իրանում, որոնք հարվածն իրենց վրա ընդունեցին: Ցանկալի է նաև աշակերտներին հիշեցնել իսլամի առանձնահատկությունները, և ինչ ազդեցություն է ունեցել նոր կրոնը արաբական նվաճումների վրա:

Դասի ակտիվությունների մեջ հիմնական ուշադրությունը պետք է կենտրոնացվի արաբների նվաճումների պատճառների, ինչպես նաև նրանց հաջողությունը որոշող գործոնների վրա: Ցանկալի է ուշադրությունը կենտրոնացնել նրա վրա, թե ինչպես է իսլամը փոխել արաբական հասարակությունը, որոնք էին այդ նվաճումները սկսելու պատճառները: Կարևոր է կենտրոնանալ աշխարհագրության և կլիմայական գործոնների վրա, թե ինչու էր անհրաժեշտ միավորված արաբական ցեղերին նոր տարածքներ յուրացնել: Կարևոր է ցույց տալ իսլամի դերը արաբական նվաճումների մեջ: Ցանկալի է ուսումնական գործընթացում կազմակերպել գործունեություն, որի շրջանակներում կքննարկվեն և կթվարկվեն այն հիմնական ասպեկտները, որոնք հանգեցրել են արաբական նվաճումների հաջողության և իսլամի արագ տարածման: Պարզեք պատճառները, թե ինչու արաբները հեշտությամբ զավթեցին և պահպանեցին Բյուզանդիայի արևելյան գավառները (Սիրիա, Պաղեստին, Եգիպտոս), նաև՝ ինչու Սասանյան հզոր Իրանը չկարողացավ դիմակայել արաբների նվաճումներին: Կարևոր է հարց տալ՝ ինչպե՞ս փոխեցին արաբական նվաճումները աշխարհի հետագա զարգացումը:

Առաջարկում ենք արդյունքները: Ինչ գիտելիքներ պետք է մնան աշակերտին **կայուն պատկերացումների ձևով**՝ նշված պարագրաֆն ուսումնասիրելուց հետո՝ արդյունքները ձեռք բերված համարելու համար:

- Մուհամմեդի մահից հետո, «չորս խալիֆաների» ժամանակաշրջանում սկսվում են արաբների նվաճումները, որոնք ընդգրկեցին երեք մայրցամաքների՝ Ասիայի, Եվրոպայի և Աֆրիկայի տարածքները: *(Տարածություն, իրադարձություն)*
- Այն բանից հետո, երբ արաբները միավորվեցին իսլամի և խալիֆայի իշխանության շուրջ, անհրաժեշտ դարձավ նոր հողեր նվաճել, ինչը պայմանավորված էր մի կողմից՝ իսլամի տարածման գաղափարով, մյուս կողմից՝ տնտեսական կարիքներով: *(Պատմական իրադարձություն)*
- VII դարի 30-ական թվականներին արաբները ջախջախեցին Սասանյան Իրանը և գրավեցին Բյուզանդական կայսրության արևելյան գավառները, Եգիպտոսը, Սիրիան և Պաղեստինը: *(Տարածություն, ժամանակ)*
- Սկզբում արաբները համեմատաբար հանդուրժողական քաղաքականություն էին վարում նվաճված ժողովուրդների նկատմամբ, ինչը հանգեցրեց նրանց հաջողության: *(Հասարակություն)*
- Արաբական խալիֆայությունը սկզբում ղեկավարել են 4 ուղղահավատ խալիֆաներ, ապա իշխանությունը իրենց ձեռքն են առել Դամասկոսի Օմայյանների խալիֆաները, իսկ նրանց փոխարինել են Բաղդադի Աբբասյանների խալիֆաները: *(Իշխանություն, պատմական իրադարձություն)*

**§53. Ի՞նչ է իսլամական քաղաքակրթությունը:**

Այս պարագրաֆը նախորդ երկու պարագրաֆների թեմատիկ լրացումն է և նրանց շարունակությունը: Կախված հարցի կարևորությունից՝ ցանկալի է աշակերտների ուշադրությունը կենտրոնացնել մի քանի ասպեկտների վրա: Արաբական և ընդհանրապես իսլամական քաղաքակրթությունն այս լայն գունապատկերում մշակվելիք հարցն է: Առաջին հերթին պետք է կենտրոնանալ այն հանգամանքների վրա, թե ինչպիսին էր իսլամի, հետևաբար արաբական հասարակության վերաբերմունքը կրթության նկատմամբ և առանձնացնել գիտության այն ճյուղերը, որոնք հատկապես զարգացել են իսլամական աշխարհում: Ցանկալի է հատուկ շեշտադրել այն հանգամանքները, որոնք հանգեցրել են արաբական մշակույթի և իսլամական քաղաքակրթության զարգացման: Մի կողմից քննարկենք, թե ինչ ժառանգություն ստացան արաբները և յուրացրին նվաճված տարածքում ապրող Իրանի, Պաղեստինի, Եգիպտոսի և այլ հասարակություններից: Ինչպես նաև, ինչ նոր առանձնահատուկ հատկանիշներ ավելացրեց արաբական մշակույթը ստացած ժառանգությանը և ինչ առանձնահատկություններով է այն առանձնանում:

Աշակերտներին առաջարկենք քննարկում այն մասին, թե ինչ ժառանգություն է թողել հաջորդ հասարակություններին և ժամանակակից հասարակությանը արաբական աշխարհը:

Առաջարկում ենք արդյունքները: Ինչ գիտելիքներ պետք է մնան աշակերտին **կայուն պատկերացումների ձևով**՝ նշված պարագրաֆն ուսումնասիրելուց հետո՝ արդյունքները ձեռք բերված համարելու համար:

- Արաբական նվաճումներից հետո արաբերենը, իսլամական կրոնը և արաբական մշակույթի առանձնահատկությունները ամուր հաստատվեցին Հյուսիսային Աֆրիկայում, Մերձավոր Արևելքում և Իսպանիայում: Վերոհիշյալ գործոններն այս տարածքի նկատմամբ ազդեցությունը չեն կորցրել նույնիսկ միասնական խալիֆայության քաղաքական կոլապսից հետո: *(Հասարակություն, տարածություն)*
- Մուհամմեդի ուսմունքի համաձայն, մահմեդականի համար կարևորագույն պարտականություն է համարվում գիտելիքներ ստանալը, այս գործոնը նպաստեց արաբների կողմից տարբեր ժողովուրդների ձեռքբերումների ծանոթացմանը և յուրացմանը: *(Հասարակություն, պատմական իրադարձություն)*
- Արաբներն իրանական, հունական և լատինական մշակույթին ծանոթանալու արդյունքում ստեղծել են իրենց՝ իսլամին հարմարեցված մշակույթ և ստացած գիտելիքները հասցրել նոր բարձրության: *(Պատմական իրադարձություն)*
- Արաբական հասարակության մեջ հատկապես զարգացել են գիտության այնպիսի ճյուղեր, ինչպիսիք են բժշկությունը, աստղագիտությունը և մաթեմատիկան: *(Հասարակություն)*
- Արաբերենը, իսլամական կրոնը և արաբական մշակույթն այսօր էլ սահմանում են Մերձավոր Արևելքի և Հյուսիսային Աֆրիկայի, ինչպես նաև աշխարհում ապրող բազմաթիվ ժողովուրդների և երկրների քաղաքական ու կրոնական կյանքը: *(Ժամանակ, տարածություն)*
- Արաբական աշխարհի մշակութային և քաղաքական կենտրոններն էին քաղաքներ Մեքքան, Մեդինան, Դամասկոսը, Բաղդադը, Կահիրեն, Կորդոբան, ինչպես նաև՝ արաբական աշխարհում կարևոր տեղ էր զբաղեցնում   Թբիլիսին: *(Տարածություն)*

**§54-55 Ի՞նչ խնդիրներ ուներ Բյուզանդական կայսրությունը VIII-IX դարերում:**

Նշված պարագրաֆում ընդգծված պատմական հարցերը կարևոր են երկու հիմնական ուղղությամբ: Մի կողմից քաղաքական, մյուս կողմից՝  կրոնական գործընթացների նկարագրության և ըմբռնման առումով: Պարագրաֆում տրված են տեղեկություններ Բյուզանդական կայսրությունում ընթացող այն գործընթացների մասին, որոնք կապվում են Իսավրյան դինաստիայի դարաշրջանի հետ: Այս անգամ էլ ցանկալի ու կարևոր է ակտիվացնել աշակերտների նախապես ունեցած գիտելիքները և աշակերտներին հիշեցնել, թե ինչպես են փոխվում Բյուզանդական կայսրության սահմաններն ու քաղաքական դիրքերը VII դարի երկրորդ կեսին արաբական նվաճումների հետևանքով:

Կարևոր է սահմանել այն գործոնները, թե որ տարածքները կորցրեց Բյուզանդիան արաբների ի հայտ գալուց հետո և ինչ տնտեսական և կրոնական նշանակություն ունեին արևելյան գավառները կայսրության քաղաքական և կրոնական շրջանակների համար: Ցանկալի է սահմանել արտաքին քաղաքական խնդիրների մի քանի ուղղություններ:

Դասի ընթացքում ցանկալի է քննարկել արաբական արշավանքների նշանակությունը և այն հանգամանքները, թե ինչպես կարողացան Իսավրյան կայսրերը Կոստանդնուպոլիսը պաշտպանել արաբական սպառնալիքից: Նաև դատողություն արեք, թե ինչ նշանակություն ուներ Բյուզանդական կայսրության և ընդհանրապես քրիստոնեական աշխարհի համար այն փաստը, որ արաբները չկարողացան գրավել Կոստանդնուպոլիսը:

Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել պատկերամարտություն անունով հայտնի երևույթին: Սխեմայի տեսքով պետք է ներկայացնենք դասապրոցեսում այն տեսական և գործնական բնույթի պատճառները, որոնք հանգեցրին պատկերամարտության առաջացմանը: Ի՞նչ փաստարկներ ունեին կայսրերը, որոնք սկսեցին այս կրոնական բարեփոխումը, և ինչ շարժառիթներ էին երևում դրա հետևում: Կարևոր է քննարկել այն հարցը, թե ինչ բնույթի էր այս երևույթը, և այն սահմանափակվում էր արդյոք միայն կրոնական ոլորտով: Աշակերտներին առաջարկեք քննարկում հարցի մասին. Ի՞նչ քաղաքական օգուտներ կտային կայսերական իշխանությանը սրբապատկերների արգելքն ու վանական կյանքի վարկաբեկումը:

Առաջարկում ենք արդյունքները: Ինչ գիտելիքներ պետք է մնան աշակերտին **կայուն պատկերացումների ձևով**՝ նշված պարագրաֆն ուսումնասիրելուց հետո՝ արդյունքները ձեռք բերված համարելու համար:

- Իսավրյանների դինաստիայի ներկայացուցիչները կառավարում էին Բյուզանդիան VIII-IX դարերում, և այս դարաշրջանը բնութագրվում է քաղաքական և կրոնական մեծ իրադարձություններով: *(Ժամանակ, պատմական իրադարձություն)*
- Իսավրյան դինաստիայի հետ է կապվում արաբների դեմ հաջող պատերազմների վարումը և կրոնական բարեփոխումը, որը հայտնի է պատկերամարտություն անունով: *(Ժամանակ, պատմական իրադարձություն)*
- Իսավրյան կայսրերը սրբապատկերները հայտարարեցին ոչ քրիստոնեական, կռապաշտության մնացորդ ու հրամայեցին դրանք հեռացնել եկեղեցիներից, ինչը մեծ դժգոհություն առաջացրեց և՛ քրիստոնեական աշխարհում, և՛ հենց կայսրության ներսում: *(Պատմական իրադարձություն, հասարակություն)*
- Բացի կրոնականից, պատկերամարտությունն ուներ նաև քաղաքական և տնտեսական դրդապատճառներ: Եկեղեցու ունեցվածքն ու նվիրատվությունները կմտնեին պետական գանձարան, ինչպես նաև եկեղեցին տնտեսապես ավելի կթուլանար և ավելի մեծ կախվածություն կունենար կայսերական իշխանությունից: *(Հասարակություն, պատմական իրադարձություն)*
- Իսավրյանների քաղաքական գործունեությունը հաջող էր, նրանք չեզոքացրին արաբական սպառնալիքը, ինչպես նաև ամրապնդեցին իրենց դիրքերը Փոքր Ասիայում և Բալկաններում: Նրանց կրոնական քաղաքականությունը բյուզանդական հասարակությունը պառակտեց երկու մասի և հակադրեց արևմտյան քրիստոնեական աշխարհին: *(Ժամանակ, տարածություն, հասարակություն)*

**§ 56-57. Ինչո՞ւ է Մակեդոնյան դինաստիայի իշխանությունը համարվում Բյուզանդիայի վերելքի և հզորության դարաշրջան:**

Նշված պարագրաֆում տրված է բավականին ընդարձակ ժամանակագրական շրջանի պատմական իրադարձությունների նկարագրությունը և բնութագրումը: Մակեդոնյան դինաստիայի տիրապետության ժամանակաշրջանը կարևոր է մի քանի առումներով: Ցանկալի է առանձնահատուկ ուշադրություն դարձնել այն ասպեկտների վրա, թե ինչպես փոխվեցին կայսեր ընտրությունների և կայսերական իշխանության փոխանցման եղանակը Մակեդոնյանների ժամանակաշրջանում և նաև այն, թե ինչ բերեց քաղաքական ժառանգության դինաստիական կարգով փոխանցումը Բյուզանդական կայսրությունում:

Կարևոր է առաջ քաշել մի քանի ասպեկտներ, ցանկալի է դատողություն անել այն հարցի մասին, թե ինչը հանգեցրեց քաղաքական և տնտեսական կայունության հաստատմանը Մակեդոնյանների ժամանակաշրջանում, և ինչ նշանակություն ունեին Արաբական խալիֆայությունում առկա դիմակայությունը և արտաքին քաղաքական գործոնները: Կարևոր է Վասիլ Ա կայսեր կերպարի քննարկումը և գնահատումը, ինչպես նաև նրա քաղաքականության համեմատումը Հուստինիանոսի արտաքին և ներքին

քաղաքական կուրսի հետ:
Ցանկալի է առանձնահատուկ շեշտադրում արվի Վասիլ II-ի կառավարման և նրա արտաքին ու ներքին քաղաքական կուրսի, բուլղարական պետության հետ նրա առճակատման վրա: Կարևոր է քննարկել վրացական գործոնները: Մասնավորապես, Դավիթ III Տաոեցու դերը Վասիլի կայսր դառնալու և կայսերական իշխանության պահպանման գործում:
Բացի այդ, ցանկալի է ընդգծել այն աշխարհագրական տարածքը, որտեղ տեղի է ունեցել դիմակայությունը Բյուզանդական կայսրության և վրացական պետության միջև:

Առաջարկում ենք արդյունքները: Ինչ գիտելիքներ պետք է մնան աշակերտին **կայուն պատկերացումների ձևով**՝ նշված պարագրաֆն ուսումնասիրելուց հետո՝ արդյունքները ձեռք բերված համարելու համար:

- Մակեդոնյան դինաստիան կառավարել է Բյուզանդական կայսրությունը IX-XI դարերում, այս դարաշրջանն առանձնանում էր քաղաքական և տնտեսական կայունությամբ: *(Ժամանակ)*
- Մակեդոնյան դինաստիայի կայսրերը կայսեր գահը դարձրել են ժառանգական, իշխանությունը փոխանցվում էր հորից որդուն, ինչը քաղաքական իրավիճակը առավել կայուն դարձրեց, իսկ կայսեր իշխանություններն ավելի ամրապնդվեց: *(Իշխանություն)*
- Մակեդոնյան դինաստիայի տիրապետության ժամանակ Բյուզանդական կայսրության նպատակը Հարավային Իտալիայում և Արևելյան միջերկրածովյա տարածքում կորցրած դիրքերի ռազմական ճանապարհով վերականգնումն էր: *(Տարածություն, պատմական իրադարձություն)*
- Դինաստիայի ներկայացուցիչ կայսր Կոստանդին VII Ծիրանածինը ստեղծել է «Կայսրության կառավարման մասին» աշխատությունը, որը բնութագրում է այն ժամանակվա աշխարհում ապրող ժողովուրդներին և նրանց պատմությունը, ինչպես նաև ներառում է խորհուրդներ ու հանձնարարականներ, թե ում հետ ինչպիսի քաղաքականություն պետք է վարի ապագա կայսրը: *(Աղբյուր)*
- Մակեդոնյան դինաստիայի ներկայացուցիչ Վասիլ II-ի կառավարման շրջանը բնութագրվում է բուլղարների և վրացիների դեմ պատերազմներով: *(Տարածություն, պատմական իրադարձություն)*

**§58-59-60 Ինչպե՞ս ստեղծեց Կառլոս Մեծը Ֆրանկական կայսրությունը:**
Այս պարագրաֆը ծավալուն է, և դրանում ներկայացված յուրաքանչյուր մանրամասն կարևոր է: Հետևաբար, ցանկալի է, որ ուսուցիչը դասի ընթացքում անուշադիր չթողնի ոչ մի ենթահարց, նաև ուշադիր պետք է քննարկվի յուրաքանչյուր աղբյուրի և ներդիրի մեջ տրված տեղեկություն: Առաջին փուլում պետք է ակտիվացվի նախապես ունեցած գիտելիքը, հիշելով, թե ինչ էր իրենից ներկայացնում Ֆրանկական թագավորությունը և ինչ միջոցներով նրան հաջողվեց դառնալ Արևմուտքի ամենահզոր պետությունը: Պետք է ուրվագծել ֆեոդալիզմի, որպես տնտեսական և քաղաքական համակարգի, ձևավորումը, անհրաժեշտ հանգամանքները և քննարկում կազմակերպել այն հարցի շուրջ, թե ինչու է ձևավորվել ֆեոդալիզմն առաջին անգամ Ֆրանկական թագավորությունում, որ գործոններն են նպաստել այս գործընթացին: Հաջորդ կարևորագույն հարցը, որի վրա ցանկալի է կենտրոնանալ, դա Կառլոս Մարտելի և Պիպին Կարճահասակի դարաշրջանում տեղի ունեցած կարևոր գործընթացների քննարկումն է: Օրինակ՝ ինչպիսի՞ խնդիրներ ուներ Ֆրանկական միապետությունը կենտրոնացման առումով, և ինչպես Կառլոս Մարտելին հաջողվեց լուծել այն: Նաև՝ 732 թվականի Պուատիեի ճակատամարտի և արաբների պարտության նշանակությունը Ֆրանկական թագավորության և ընդհանրապես քրիստոնեական աշխարհի համար: Պիպինի մասում կարևոր է քննարկել նրա և Հռոմի պապի հարաբերությունները և մոտիվացիաները: Կարևոր է շեշտը դնել

այն հարցի վրա, թե ինչու անհրաժեշտ դարձավ Պիպինին Հռոմի պապի աջակցությունը՝ իշխանությունը պաշտոնականացնելու հարցում, ինչն առանց այն էլ իր ձեռքում էր: Կառլոս Մեծին ուսումնասիրելիս կարևոր է յուրաքանչյուր մանրամասն, հատկապես պետք է կենտրոնանալ երեք հիմնական ուղղությունների՝ արտաքին քաղաքականության և նրա պատերազմների ուղղությունների ու բնույթի սահմանման և քննարկման վրա: Նրա մշակութային և կրթական քաղաքականության և, վերջապես, ամենակարևորը նրա կայսր օծման և այս ակտի քաղաքական և գաղափարական նշանակության ու հետևանքների վրա: Ցանկալի է քննարկում անցկացնել այն հարցի շուրջ, թե ինչ դեր ուներ Կառլոս Մեծը և Ֆրանկական կայսրությունը Եվրոպայի ապագա զարգացման ճանապարհին, և որ պետություններն են առաջացել Միասնական Ֆրանկական կայսրության ընդերքից:

Առաջարկում ենք արդյունքները: Ինչ գիտելիքներ պետք է մնան աշակերտին **կայուն պատկերացումների ձևով՝** նշված պարագրաֆն ուսումնասիրելուց հետո՝ արդյունքները ձեռք բերված համարելու համար:

- Հռոմի անկումից հետո Եվրոպայում ստեղծված կարգը խաթարվեց, ինչին հաջորդեց քաղաքական և տնտեսական, ինչպես նաև մշակութային հետադիմություն: Ֆրանկները նոր կարգ ձևավորեցին Կարոլինգյան դարաշրջանում: *(Ժամանակ, պատմական իրադարձություն, տարածություն)*
- V-IX դարերի ընթացքում Եվրոպա մայրցամաքում, քաղաքական և մշակութային առաջադեմ պետությունը Ֆրանկական թագավորությունը/կայսրությունն էր հանդիսանում: *(Ժամանակ, տարածություն)*
- Ֆրանկական թագավորությունում ձևավորվեց և զարգացավ եվրոպական աշխարհին բնորոշ քաղաքական, տնտեսական ձևը՝ ֆեոդալիզմը (ավատատիրությունը): *(Հասարակություն, պատմական իրադարձություն)*
- VIII դարում Ֆրանկական թագավորության իշխանության գլուխ էին կանգնած ազդեցիկ պալատականները՝ մայորդոմները, իսկ թագավորի իշխանությունը թուլացել էր: Մայորդոմներից առանձնանում է Կառլոս Մարտելին, որի հետ կապված էր ֆեոդալական բարեփոխման և բենեֆիցիումի ներմուծումը, ծանրազեն, զրահապատ բանակի ստեղծումը և արաբներին պարտության մատնելը: *(Ժամանակ, պատմական իրադարձություն)*
- 750 թվականին մայորդոմ Պիպին Կարճահասակը Հռոմի պապից համաձայնություն և լեգիտիմացում ստացավ, որից հետո իրեն հռչակեց թագավոր՝ այդպիսով դնելով Կարոլինգյան դինաստիայի հիմքերը: *(Ժամանակ, պատմական իրադարձություն)*
- Ֆրանկական կայսրության քաղաքական և մշակութային զարգացման գագաթնակետը կապված է Կառլոս Մեծի կառավարման դարաշրջանի հետ՝ 768-814 թթ. *(Ժամանակ)*
- Կառլոս Մեծի դարաշրջանում ֆրանկները նվաճողական պատերազմներ էին վարում ավարների, սաքսոնների, լանգոբարդների և իսպանացի արաբների դեմ: Այս պատերազմները հիմնականում կրոնական դրդապատճառներ ունեին: *(Տարածություն, պատմական իրադարձություն)*
- 800 թվականի դեկտեմբերի 25-ին Հռոմում Կառլոս Մեծը Հռոմի պապի կողմից թագադրվեց կայսր: Ստանալով այս տիտղոսը՝ Կառլոս Մեծն իրեն հռչակեց քրիստոնեական աշխարհում գերագույն քաղաքական տիրակալ, որին հաջորդեց մեծ բողոք բյուզանդական կայսրերի կողմից: *(Իշխանություն, պատմական իրադարձություն)*
- 843 թվականին Վերդենի պայմանագրի արդյունքում Ֆրանկական կայսրությունը Կառլոսի ժառանգների միջև բաժանվեց երեք մասի, և այդպիսով ձևավորվեցին երեք եվրոպական պետությունները՝ Ֆրանսիան, Գերմանիան, Իտալիան: *(Պատմական իրադարձություն, տարածություն)*

**§61-62-63 Ինչպիսի՞ն էր միջնադարյան հասարակությունը:**

Տվյալ պարագրաֆում ներկայացված յուրաքանչյուր հարցի ըմբռնումն ու վերլուծությունը չափազանց կարևոր է: Այս անգամ էլ մեծ նշանակություն կունենա նախապես ունեցած գիտելիքների ակտիվացումը և այնուհետև դրա վրա նոր նյութի կառուցումը: Ցանկալի է աշակերտներին հիշեցնել, թե ինչ հատկանիշներով էին բնութագրվում հասարակությունները Հռոմեական կայսրության վերջին դարերում, և ինչպիսի փոխակերպման է ենթարկվել հասարակությունը Հռոմի անկումից հետո:

Միջնադարի եվրոպական հասարակության հատկանիշները հասկանալու համար կարևոր է սահմանել ֆեոդալական կառուցվածքի հատկանիշները, քանի որ ֆեոդալական համակարգն իր մեջ ներառում էր միջնադարյան հասարակության բոլոր ոլորտները: Կարևոր է որոշել, թե ինչ անհրաժեշտություն կար ֆեոդալական կառույց ձևավորելու համար: Ցանկալի է սխեմաների տեսքով որոշել, թե հասարակության կյանքի որ ոլորտներն էր միավորում ֆեոդալիզմը: Ինչ դեր ուներ նա ռազմական, վարչական և կրոնական համակարգերի առումով, պետք է մատնանշել նաև, թե տնտեսության որ ձևի վրա էին հիմնված ֆեոդալական հարաբերություններն ու կառուցվածքը:

Ցանկալի է սահմանել այն գործառույթները, որ ուներ յուրաքանչյուր սոցիալական խավ ֆեոդալական կառուցվածքում, և ինչպես էին բաշխված գործունեության ճյուղերը, ինչպես նաև՝ ինչն էր սահմանում յուրաքանչյուր շերտի տնտեսական և քաղաքական արտոնությունը: Կարևոր է ուրվագծել քաղաքական առաջնորդի հասարակական գործառույթը, լեգիտիմության միջոցները, ինչպես նաև, հասարակության առանձին խմբերի գործունեությունը և նրանց առօրյայի նկարագրությունը:

Առաջարկում ենք արդյունքները: Ինչ գիտելիքներ պետք է մնան աշակերտին **կայուն պատկերացումների ձևով**՝ նշված պարագրաֆն ուսումնասիրելուց հետո՝ արդյունքները ձեռք բերված համարելու համար:

- Հռոմեական կայսրության անկումից հետո եվրոպական աշխարհում խափանվեց կենտրոնական իշխանությունը և տնտեսական ու քաղաքական-վարչական համակարգը: Նոր համակարգը, որը կբավարարեր թագավորությունների տնտեսական, ռազմական և քաղաքական կարիքները, հայտնի է ֆեոդալիզմ անվանումով: *(Ժամանակ, պատմական իրադարձություն)*
- Ֆեոդալիզմը հողատիրության վրա հիմնված համակարգ էր, հողերը զինվորական անձանց էին փոխանցվում և հիմնվում էր ագրարային, արտադրողական տնտեսության և հարկային համակարգի վրա: *(Հասարակություն, պատմական իրադարձություն)*
- Ֆեոդալական կառուցվածքը հիմնված էր երդման և պայմանական կախվածության վրա, իսկ այս երդմանը լեգիտիմացնում էր շնորհում եկեղեցին: *(Իշխանություն)*
- Ֆեոդալական հասարակությունը բաժանված էր շերտերի, իսկ շերտերի բաժանումը տեղի էր ունենում ըստ նրանց հասարակական գործունեության՝ ով է ղեկավարում, ով է աղոթում, ով է կռվում և ով է աշխատում: *(Հասարակություն)*
- Ֆեոդալական հարաբերությունները կառուցվել են տարբեր խավերի փոխադարձ կարիքի սկզբունքով, գյուղացիներն աշխատում էին ֆեոդալների համար, ֆեոդալները պաշտպանում ու հողեր էին տալիս նրանց: *(Հասարակություն)*
- Միջնադարյան հասարակության մտածողությունը, կյանքի ոճն ու կենսակերպը սահմանում էին կրոնական համոզմունքները: *(Հասարակություն)*
- Միջնադարում եվրոպական հասարակության կարևոր շերտը հանդիսանում էին ասպետները, նրանք այլ ապրելակերպ ու արժեհամակարգ ունեին: *(Հասարակություն)*

**§64-65: Ինչո՞ւ նորմանները սկսեցին նվաճողական պատերազմներ:**

Նշված պարագրաֆը կարևոր է բազմաթիվ տեսանկյուններից, առաջին հերթին աշակերտների կողմից հետաքրքրության առումով՝ ելնելով նրանից, որ նորմանների հետ առնչվող բազմաթիվ հարցեր հանրաճանաչ են աշակերտների շրջանում: Կարևոր է աշակերտների ուշադրությունը կենտրոնացնել մի քանի ասպեկտների վրա: Ցանկալի է ընդգծել երեք հիմնական ուղղություն՝ նորմանների հասարակության ձևավորումը և նրա վրա աշխարհագրական միջավայրի ու կլիմայական գործոնի ազդեցությունը, նորմանների հայտնվելը և եվրոպական թագավորությունների ներսում զինվորական ոլորտի հզորացումը, իսկ վերջում նորմանների քրիստոնեացումը և նորմանական քաղաքական միավորների ձևավորումը Եվրոպա մայրցամաքի տարբեր վայրերում:

Ցանկալի է դասապրոցեսում լավ ցուցաբերվի նշված պարագրաֆը, ժամանակ տրամադրվի Սկանդինավյան թերակղզու և նորմանների սկզբնական տարաբնակեցման տարածքի աշխարհագրական և կլիմայական բնութագրերի քննարկմանը: Ինչպես նաև, շեշտադրվի, թե ինչ դեր է կատարել աշխարհագրական միջավայրը նորմանական հասարակության զարգացման և նրանց գործունեության մեջ: Ցանկալի է քննարկել նորմանների կրոնի բնույթը և նրանց աշխարհայացքը: Գործունեության որ ոլորտներն էին բնորոշ նորմանների հասարակությանը, և ինչու սկսվեց նրանց միգրացիան Եվրոպայի շուրջ:

Կարևոր է սխեմատիկորեն ներկայացնել նորմանական նվաճումների հիմնական պատճառները, աշխարհագրական միջավայրի փոփոխման անհրաժեշտությունը, նրանց ապրելակերպն ու ծովագնացությանը լավ տիրապետումը: Նորմանների նվաճումների աշխարհագրական տարածքը քննարկել և ցույց տալ նրանց դերը Եվրոպայի հետագա զարգացման մեջ: Պետք է նկարագրվի և բնութագրվի գործընթացը, թե ինչպես է տեղի ունենում նորմանների քրիստոնեացումը և նրանց ինտեգրումը եվրոպական ֆեոդալական համակարգին:

Առաջարկում ենք արդյունքները: Ինչ գիտելիքներ պետք է մնան աշակերտին **կայուն պատկերացումների ձևով՝** նշված պարագրաֆն ուսումնասիրելուց հետո՝ արդյունքները ձեռք բերված համարելու համար:

- Նորմաններին անվանում են գերմանական ծագում ունեցող ժողովուրդներ, որոնց տարաբնակեցման տարածքը ներառում էր Սկանդինավյան և Յուտլանդիա թերակղզիները, նրանք չէին ենթարկվում հռոմեական քաղաքական և մշակութային ազդեցությունը և պահպանում էին ավանդական կրոնը: *(Տարածություն, հասարակություն)*
- Ցուրտ կլիման, լեռնային ու անտառապատ տարածքը չէին տալիս հողագործության զարգացման հնարավորություն: Նորմանների գործունեությունը հանդիսանում էին պատերազմը և հավաքչական տեսակի տնտեսության ճյուղերը: *(Հասարակություն, տարածություն)*
- Նորմանների շրջանում գոյություն չուներ ձևավորված միապետության տեսակ, նրանց հասարակությանը բնորոշ էր իշխանության տեսակ, որտեղ իշխանությունը մարտական առաջնորդների ձեռքում էր: *(Իշխանություն)*
- Նորմանների կրոնը պատկանում էր ավանդական գերմանական դիցարանին, տարածված էին բազմաստվածությունը և ռազմիկների պաշտամունքը: Պայքարն էր սահմանում նորմանների մտածողությունը և աշխարհայացքը: *(Հասարակություն)*
- Նորմանների արշավանքները ընդգրկում են VIII-XI դարերը և բաժանվում են երեք հիմնական փուլերի՝ առաջին փուլում նրանց արշավանքների նպատակը կողոպուտն էր, երկրորդ փուլում՝ տարբեր հողերի վրա հաստատվելը, իսկ վերջին փուլում ստեղծվեցին նորմանական պետություններ: *(Ժամանակ, պատմական իրադարձություն)*
- Նորմանների արշավանքները, բացի պատերազմներից, բնութագրվում են նաև

հայտնագործություններով. նրանց հետ է կապված Գրենլանդիայի, Իսլանդիայի և Ամերիկայի տարածքներում նոր գաղութների հիմնումը: *(Տարածություն, պատմական իրադարձություն)*

**§66. Ինչպե՞ս XI դարում քրիստոնեական աշխարհը բաժանվեց երկու մասի:**

Տվյալ պարագրաֆը կարևոր է շատ առումներով: Նրանում նկարագրված է Արևմտյան և Արևելյան քրիստոնեական աշխարհը երկու մասի բաժանվելու գործընթացը, դրա պատճառները և վերջնական պառակտման կոնկրետ դրդապատճառները: Նշված պարագրաֆն ուսումնասիրելիս կարևոր է այն ըմբռնել պատմական կտրվածքում և դասապրոցեսում չլինի կրոնական համակրանքների և զգացմունքների ցուցադրմամբ առաջացած անհարմարություն:

Աշակերտի գրքում ներկայացված նյութերը ներառում են բազմաթիվ համեմատության օրինակներ: Ընդգծվում են, թե ինչ տարբեր զարգացման ուղի են անցել եվրոպական և արևմտաեվրոպական քրիստոնեությունը: Ինչ քաղաքական, լեզվական, մշակութային գործընթացներ են ազդել այս երկու աշխարհների զարգացման վրա: Կարևոր է առանձնացնել այն ասպեկտը, թե ինչ քաղաքական գործընթացներ հանգեցրին արևմտյան և բյուզանդական աշխարհի անտագոնիստական վերաբերմունքի աճին: Հատկապես պետք է ընդգծել Կառլոս Մեծի կայսր օծումից հետո արձագանքը և Փոտ պատրիարքի գործողությունների ազդեցությունը եկեղեցական տարածքի միասնության վրա:

Պետք է ընդգծվի ավանդական հակադրությունը հունական և լատինական աշխարհների միջև: Ինչպես նաև բյուզանդական աշխարհի էթնոկենտրոն վերաբերմունքը այլ ժողովուրդների նկատմամբ և դրա բացասական ազդեցությունը քրիստոնեական տարածության միասնության վրա: Ցանկալի է հատուկ ուշադրություն կենտրոնացնել բաժանման քաղաքական և մարդկային գործոնների վրա: Դասի գործընթացը կբազմազանացնի սխեմատիկ ակտիվությունը, որում արտացոլված կլինեն նմանություններն ու տարբերությունները հռոմեական և հունական քրիստոնեության միջև:

- Դիմակայությունը Հռոմի և Կոստանդնուպոլսի միջև կրոնական հարցերի շուրջ նկատվում էր դեռևս IV դարում, որից հետո այս հակամարտությունը ժամանակի ընթացքում խորանում էր: *(Ժամանակ, պատմական իրադարձություն)*
- Արևմտյան քրիստոնեական աշխարհը կրոնական առումով միավորված էր, և այն առաջնորդում էր Հռոմի պապը, իսկ արևելյան քրիստոնեական տարածքը բաղկացած էր մի քանի կենտրոններից: *(Տարածություն)*
- Քրիստոնեական աշխարհի բարձրագույն կրոնական տիրակալ էր Հռոմի պապը, իսկ աշխարհիկ տիրակալ էր համարվում Հռոմի/Բյուզանդիայի կայսրը, հակասությունները խորացրին Հռոմի պապի կողմից Կառլոս Մեծին կայսր օծելը, ինչպես նաև Բյուզանդիայի կայսրերի կողմից Կոստանդնուպոլսի պատրիարքին որպես Տիեզերական պատրիարք հիշատակումը: *(Տարածություն, իշխանություն)*
- Պառակտման պատճառները, բացի կրոնականից, քաղաքական, լեզվական, մշակութային և մարդկային գործոններն էին: *(Պատմական իրադարձություն)*
- 1054 թվականի Մեծ սխիզմը (պառակտումը) դարերի ընթացքում զարգացած ու խորացած գործընթացի տրամաբանական ավարտն էր: *(Պատմական իրադարձություն, ժամանակ)*